

ԱՐՏԱԿ ՄՈՎԱԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԼՐԻՍՏՈՍԻՅ ԱՌԱՋ

ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

(ԸՍՏ ԳՐԱՎՈՐ ԱՆՊՅՈՒՐՆԵՐԻ)



947.925

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՄՈՎԱԽԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ՔՐԻՄՏՈՍԻՅ ԱՌԱՋ
ԵՐՐՈՐԴ- ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ
(ԸՍՏ ԳՐԱԿՈՐ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ)

A II
90604



ՀՏԳ 941 (479.25)
ԳՄՊՆ 63.3 (2Հ)
Մ 917

**Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գիտական խաղերգի սրահում**

**Գիրքը հրատարակությանն օժանդակելու համար հեղինակը շնորհակալության է
հայտնում իր ամենիկարևակ րաքիկամենեցին, մասնագիտուհու,
«Մվիտար» հասարակական-ճշակարային կազմակերպության՝
ի դեմ Արթուր Արմինի,**

**և
Հարություն Աղասարգյանին:**

ՄՈՒՄԻՍՅԱՆ Ա. Ե.

**Մ 917 «Հայաստանը Բրիտանիայ անաչ կրթարդ կազարանակում (ըստ
գրակոր աղբյուրների)» - Եր., Սրևանի համալարամի հրատ.,
2005, 176 էջ:**

Մնագրքայանը Հայաստանի Ջու. կրթարդ կազարանակի պատնարան տնրդ-
րական փրակունցնում փար է, սր կատարնում է թայատակու ըստ գրակոր աղբյուրն-
րի: Նեկարարանն են խնդրին փրարնրդ սկրնարդարնրդ, ճշրարան է Ջու. կրթարդ
կազարանակի Հայաստանի աղբյուրաղրական գրակնրդ, աղբյուրնում է դարաղրանը
թարթանակն պատնարանը, աղնում են հասարակրան-թարթանակն, տնտանակն,
ճշակարային-թարթանրրական կրակնակննրի ընարաղրնր:

Մրրում, որակու հակնում, ըրդան են Հայաստանի Ջու. կրթարդ կազարանակի
պատնարանը լրատարանը թայատան ընաղրնր, որնը մնաղրան մասնատային անկան է
մերկարդրան հայերն թարթանուրրանը:

Միաստանը կրթարդ է օգտանար փնը կաղրակննրին, աղնրականնրին և հայ-
ղրատարանը և Հին Արևելի պատնարանը հասարքրնր ընրիղրակնրին:

*Գրքի կազմին՝ զիցարանակում Լուկի աղրան կատրական գարաղրանի Մի-
րաղնարնր:*

0503070913

Մ----- 2005թ.

704 (02) 2005

ԳՄՊՆ 63.3 (2Հ)

ISBN 5-8084-0643-9

© ՄՈՒՄԻՍՅԱՆ Ա. Ե., 2005 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայերի ոչ տեղաբնիկության մասին XIX դարի երկրորդ կեսին տեղեփված ու տարածում գտած տեսությունը, հիմնովին սխալ լինելուց բացի, հայագիտությանը հասցրեց մի շարք վնասներ: Հայաստանի և հայերի հետ կապված Բ.ա. III-II հազարամյակների բազմաթիվ կարևոր տեղեկություններ արհեստականորեն օտարվեցին մեր պատմությունից, ներկայացվեցին սխալ մեկնաբանություններով:

Դժբախտաբար, այդ տեսակետի քննադատությունից (որը սկսվեց 1970-1980-ական թթ.) հետո ևս շատ քան չփոխվեց: 1987 թվականին, երբ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում առաջին անգամ զեկուցում ներկայացրեցինք Արատտա երկրի տեղորոշման մասին, ներկաներից մեկը (որը հիմա պատասխանատու պաշտոն է զբաղեցնում և առիթը բաց չի բողոքում ազգասիրական պաթոսով ելույթներ ունենալու) մեզ մեղադրեց... «արմենոֆիլության» («սոսյալիզմի») մեջ: Ընդ որում, դա միայն ժամանակի ոգով արված մի հայտարարություն չէր. կարծրացած մտայնություններն այսօր էլ մեծ համատրյանք են ձգտում պաշտպանվել ...

Ուսումնասիրելով Հնագույն Հայաստանի պատմության ու մշակույթի տարբեր հարցերը և հրատարակելով դրանց մասին առանձին աշխատանքներ, միշտ էլ նպատակ ենք ունեցել հասնելու խնդիրների լուծման ամբողջական մի պատկերի, որում արտացոլված լինեն ժամանակի գիտության նվաճումները: Մակայն երբևէ չենք շտապել՝ «տմբը սարքելու փոխարեն այլը չփչացնելու» մտահոգությամբ:

2004 թվականին ՀՀ կառավարության մեկնեանությամբ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտը սկսեց աշխատանքները Հայոց պատմության

նոր քառահատորյակ կազմելու ուղղությամբ, որում ներգրավվեցին Հայաստանի բոլոր գիտա-կրթական հիմնարկների աշխատակիցները: Մեզ առաջարկվեց գրել «Հայաստանը Ք.ա. III հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)» բաժինը, որը սիրով հանձն առանք: Աշխատանքի հենց սկզբում, երբ կազմեցինք սկզբնաղբյուր-արձանագրությունների ցանկը, մեզ համար էլ անսպասելի, պարզվեց, որ դրանք թիվն անցնում է հարյուրից, այն դեպքում, երբ հայագիտության մեջ շրջանառվածների թիվը չի անցնում մեկ տասնյակից...

Ակադեմիական քառահատորյակի բաժինը գրվեց և ունեցավ մի քանի անգամ ավելի մեծ ծավալ, քան մախատեսված էր: Ուստի որոշեցինք սեղմ տարբերակով ներկայացնել նյութը քառահատորյակի խմբագրակազմին, իսկ աշխատանքն ամբողջությամբ ընթերցողին ներկայացնել առանձին գրքով, որպես հավելված կցելով դարաշրջանի պատմությունը լուսարանող քառասուն սկզբնաղբյուրներ, որոնց մեծագույն մասը հայերեն ներկայացվում է առաջին անգամ:

Այսպես ստեղծվեց այս գիրքը, որը փորձ է (ըստ գրավոր աղբյուրների) Հայաստանի պատմության հազարամյա մի դարաշրջանի պատկերի ամբողջական վերականգնման, ինչը պետք է համապատասխանի այսօրվա գիտության ձեռքբերումների մակարդակին: Հասկանալիորեն, այն չի հավակնում անթերիության, և մենք սիրով կընդունենք գրքում արժարժված հարցերի վերաբերյալ դիտողությունները և քննարկումների առաջարկները:

Գլուխ Ա.

ՍԿՋԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայաստանի հնագույն պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրներ են հայտնաբերվել ինչպես բուն լեռնաշխարհի տարածքում, այնպես էլ հին Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր գիր ունեցած երկրներում, ինչը խոսում է հնագույն ժամանակներում մեր երկրի՝ տարածաշրջանում ունեցած կարևոր դերակատարման մասին:

Հայկական լեռնաշխարհի Զ.ա. III հազարամյակի պատմության սկզբնաղբյուրները կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբի.

1. արձանագրություններ՝ գրված դեպքերի կատարման ժամանակաշրջանում,
2. հնագույն բնագրերի պատճեններ,
3. նախորդ դարաշրջանների բնագրերի հիմամբ ստեղծված պատմական երկեր,
4. պատմա-գեղարվեստական (հատկապես միպական) բնույթի ստեղծագործությունները, որոնք գրի են առնվել պատմվող իրադարձություններից դարեր հետո, այդուհանդերձ կարևոր պատմական սկզբնաղբյուրներ են,
5. զուտ դիցաբանական երկեր,
6. տնտեսական նշանակության բնագրեր,
7. աշխարհագրական, վարչական և այլ բնույթի բնագրեր:

ա) Միջագետքյան սկզբնաղբյուրներ: Հայաստանի պատմության մասին ամենաինքնուրույն տեղեկությունները հաղորդում են Միջագետքի հարավաբնակ շտամբները, որոնց բողոքած սեպագիր արձանագրությունները վերաբերում են Զ.ա. III հազարամյակի սկզբից մինչև II հազարամյակի սկիզբ

ընկած ժամանակահատվածի պատմական իրադարձություններին: Ժամանակագրական հերթականությանը միջագետքյան սկզբնաղբյուրների հաջորդ խումբը արադական բնագրերն են, որոնք Հայկական լեռնաշխարհի մասին տեղեկություններ են հաղորդում սկսած Ք.ա. XXIV դարից: Ընդ որում, Ք.ա. III հազարամյակի և II-ի սկզբի մի շարք բնագրեր գուցահեռաբար գրված են և՛ շումերերեն, և՛ արադերեն:

Ք.ա. III հազարամյակի վերջին դարերում Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների վերաբերյալ առանձին տեղեկություններ են պահպանել հյուսիսային Միջագետքից գտնված խոտիերեն արձամագրությունները, որոնք հիմնականում կրոնական և վարչական բնույթի են¹:

Առաջին և երկրորդ խմբերի բնագրերը ներկայացված են Ք.ա. XXV-XXIV դդ. շումերական արքաների, արադական և կուտիական տիրակալների, Միջագետքի կուտիական կառավարիչ Գուդեայի, Ուրուկի արքա Ուրուխեզայի, Ուրի III հարստության արքաների ու նրանց ծնված արձամագրություններով և դրանց՝ հետագա (հատկապես հինբարեխոյան) դարաշրջաններում կատարված պատճեններով²:

Երրորդ խմբի սկզբնաղբյուրներից հատկապես կարևոր է «Շումերական արքայացանկը», որը կազմվել է Ուրի III հարստության օրոք (Ք.ա. 2112-2004/3 թթ.), ընդգրկում է շումերական գահակալների անունները, գահակալման ժամկետները, նշանավոր գործերն ու այլ տեղեկություններ: Հետագայում նախնական բնագիրը լրացվել ու շարունակվել է մեզ է հասել մի քանի խմբագրումներով³: Նույն խմբին են

¹ Дьяконов, 1967, էջ 443-445; Diakonoff, 1971, էջ 110; Wilhelm, 1982, էջ 15-16; Wilhelm, 1998, էջ 119-121; Ivanov, 2002, էջ 92 (և երկված գրականությունը):

² Այս արձամագրությունների Հայաստանին վերաբերող հաղորդումները՝ գրականության հղումներով, տե՛ս սույն գրքի Գ գլխում:

³ RISA, էջ 340-355; Kramer, 1963, էջ 328-331; ANET, էջ 265-266 և այլն: Արքայացանկի հանգամանալի ուսումնասիրությունը կատարել է Թ. Զակրոսենը (SKL): Մինչ այժմ հայասնի տարբերակներից կազմված

պատկանում ուշ շրջանում կազմված ժամանակագրությունները և գուշակությունների քննազերիը¹:

Պատմա-գեղարվեստական բնույթի ստեղծագործությունների մեջ առանձնակի ուշադրության են արժանի շումերական դյուցազնավեպը, «Պատերազմի արքան»² և «Աբադի նգովումը» վիպապոեմ³, «Ուրի անկման ողբը»⁴, «Շումերի և Ուրի անկման ողբը»⁵:

Հայաստանի պատմությանը վերաբերող միջազնային սկզբնաղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում շումերական դյուցազնավեպը, որի վիպերգերից հինգը տեղեկություններ են պարունակում Արատտա երկրի և շումեր-արատտական հարաբերությունների մասին: Դրանց քննազերիը գտնվել են շումերների պաշտամունքային կենտրոն Նիպպուրում (այնտեղ պաշտվում էր շումերների աստվածահայր Էնլիլը):

Դյուցազնավեպի առաջին պատուը «Էնմերբարը և Արատտայի տիրակալը» («Էնմերբարը և Արատտայի գերագույն բուրնը») վիպերգն է՝ քաղկացած 637 տողից⁶: Երկրոր-

համանավասր քննազերի տե՛ս ETCSL, 2.1.1 (աղբյուրների և գրականության մանրամասն հրատմանով): Հայերեն թարգմ.՝ Հավելված, N 1:

¹ King, 1907, II, էջ 3-14, 36-38, 43-45; Дьяконов, 1959, էջ 211-215; ANET, էջ 266-267 և այլն: Դրանցից մեկի Ջ.ա. III հազարամյակին վերաբերող հատվածի հայերեն թարգմանությունը (գիտական գրականության մեջ հայտնի «Սարգոնյան ժամանակագրություն» կամ «Ժամանակագրություն "K"» անվամբ) տե՛ս Հավելված, N 8:

² Weidner, 1922, էջ 62-71 (Պայերեն թարգմ.՝ Հավելված, N 7):

³ ANET, էջ 646-651; Attinger, 1984, էջ 99-121; ETCSL, 2.1.5:

⁴ ANET, էջ 455-463; էջ ETCSL, 2.2.2:

⁵ ANET, էջ 611-619; էջ ETCSL, 2.2.3:

⁶ Այն շուրջ 20 լիով ու բեկորներով պահպանված սալիկներից վերականգնել և վերծանել է Ս. Ն. Քրամերը (Kramer, 1952, էջ 1-55): Վիպերգի ուսումնասիրությանը զբաղվել են բազմաթիվ շումերագետներ, որոնց ուսումնասիրություններն ի մի բերելով D. S. Կանեսան (Kanessa, 1964, N 4, էջ 191-220) և Ս. Բոհենց (Cohen, 1973, էջ 112-143) հրատարակել են լրացված քննազերիը: Դյուցազնավեպի ինչպիսիս այս, այնպես էլ մյուս վիպերգերը կարելի է գտնել համազանցում (փնտրմանում) տեղակայված «Շումերական գրականության էլեկտրոնային կորպուսում» (ընդա-

որ «Էնմերբարը և Էնսուխքեշդաննան» (սկզբնապես հայտնի էր «Էնմերբարը և Էնսուքուշսիրաննան» վերնագրով) վիպերգն է¹:

«Լուգայրանդան և Խոռոմ լեռը» կամ «Լուգայրանդան լեռների խավարում» վիպերգը մեզ է հասել առանց վերջին հաստի և կազմում է 500 տողից սակելի: Վիպերգի ուսումնասիրությանը գրադվել են Ս. Ն. Քրամերը, Մ. Լամբերը, Ջ. Վիլքեն և ուրիշներ: «Լուգայրանդան և Էնմերբարը» կամ «Լուգայրանդան» վիպերգի բնագիրը հրատարակել է Ջ. Վիլքեն, որի կարծիքով այս վիպերգը մախորդի հեա կարող է կազմել միասնական կոմպոզիցիա՝ քաղկացած շուրջ 900 տողից²:

Հինգերորդը՝ «Գիլգամեշը և անմահության երկիրը»³ պատումն է, որ Գիլգամեշին ձոնված վիպերգից միակն է, որում հիշատակվում է Արատուա երկիրը⁴:

նում)», որում բնագրերի տատաղաբժումներից և ազատ բարգմանություններից բացի զետեղված են համապատասխան գրականության ցանկեր (ETCSL, 1.8.2.3):

¹ Բովանդակության շարադրանքը որոշ բնագրային մեջբերումներով նախ կատարել է Ս. Ն. Քրամերը (Kramer, 1956, էջ 232-234), սույն բնագիրն ամբողջությամբ հրատարակել է Ա. Բերլինը (Berlin, 1979): «Շումերական գրականության էլեկտրոնային կորպուսում (դիվանում)» այն տեղակայված է «Էնմերբարը և Էն-սուխքի-անան» վերնագրով (ETCSL, 1.8.2.4):

² Լուգայրանդային նվիրված երկու բնագրերը տե՛ս Kramer, 1956, էջ 235-238; Wilcke, 1969; ETCSL, 1.8.2.1 և 1.8.2.2 (և նույնիսկ աղբյուրները):

³ Վիպերգը մասնագիտական գրականության մեջ հայտնի է մաս «Գիլգամեշը և Անմահության երկիրը», «Գիլգամեշը դիպի անմահի թող...», «Գիլգամեշն ու Խոմպախան» անվանումներով: Նկատի ունենալով, որ բնագիրը ներկայացնում է անմահության որոնումներում Գիլգամեշի ճանապարհորդությունը դիպի Անմահության երկիր, մենք նախընտրում ենք «Գիլգամեշը և Անմահության երկիրը» վերնագիրը:

⁴ Վիպերգի առաջին մասն, ըստ 14 առիվների, վերականգնել ու վերծանել է Ս. Ն. Քրամերը (Kramer, 1947, էջ 3-46): Այնուհետև նորապյտ հատվածների ու հրատարակված բնագրի ուսումնասիրությանը գրադվել են շումերագետներ Ջ. վան Դեյքը, Ա. Ֆայրենշթայնը, Լ. Մարտուշը և ուրիշներ, որոնց հետազոտություններն ի մի բերելով՝ Վ. Կ. Ալթա-

Իբրև սկզբնաղբյուր կարևոր է նաև արադական (բաքե-
լոմյան) «Գիլգամեշ» դյուցազնավեպը, որի համար զադա-
վարասյուժետային հիմք են հանդիսացել Գիլգամեշի մասին
շումերական վիպերգերը (հատկապես «Գիլգամեշը և Աննա-
հուրյան երկիրը» վիպերգը): Արադական դյուցազնավեպը
մեզ է հասել մի քանի տարբերակով, որոնցից ամենամտղ-
ջականը Նիմվիխենն է: Դյուցազնավեպը երկու անգամ քարզ-
մանվել է հայերեն¹:

Դիցարանական տարրերով ստեղծագործությունները
կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ երկեր, որոնցում
հերոսները քացառապես աստվածներ են, և քնազեր, որոն-
ցում աստվածներն ու մարդիկ հանդես են գալիս համատեղ:
Երե երկրորդ խմբում կարելի է միավորել վերոնշյալ քնազեր-
րի զգալի մասը, ապա զուտ դիցարանական քնույրի երկերը,
որոնցում որևէ կերպ հիշատակվում է Հայկական լեռ-
նաշխարհը, մեծ թիվ չեն կազմում: Դրանք են շումերական
«Էնկի և Նինմախ»², «Էնկի և Նինխուրասագ»³ «Էնկի և Նին-
մախ»⁴, «Նինուրթա աստու սխրանքներն ու գործերը»⁵ և «Ի-
նաննան ու Էրիխը»⁶ և արադա-բաքելոմյան «Աարախա-
սիս»⁷, «Էնունա էլիշ...» («Երբ վերևում...»)՝ վիպասերը:

մասնան հրատարակել է Պալեոգի համետուվար քնազերը, որը կազ-
մում է 233 տող (ՄԻՄԵ, էջ 130-135): «Շումերական գրականության Լ-
վելոդանային կորպուսում (դիվանում)» այն տեղակայված է 2 տար-
բերակով («Գիլգամեշն ու Խուվավան» վերնագրով, ETCSL, 1.8.1.5 և
1.8.1.5.1): Հայերեն քարզմանությունը տե՛ս Հավիլված, N 2:

¹ Գիլգամեշ, 1963 (Նշան Մարտիրոսյանի քարզմանությամբ); ՀԱՊ, էջ
101-169 (Էդ. Մարդյանի քարզմանությամբ):

² ETCSL, 1.1.2 (և հղված աղբյուրները):

³ ANET, էջ 37-41; ETCSL, 1.1.1 (և հղված աղբյուրները): Ընդմիջարկու-
յան ուսումնասիրությունը տե՛ս Կոստրոմ, 1976, էջ 5-36:

⁴ ETCSL, 1.1.2 (և հղված աղբյուրները):

⁵ van Dijk, 1983; Kramer, 1961, էջ 79-82; Կրաքեր, 1963, էջ 206-208;
ETCSL, 1.6.2:

⁶ Kramer, 1961, էջ 82-83; ETCSL, 1.3.2 (և հղված աղբյուրները):

⁷ ANET, էջ 104-106, 512-514; MM, էջ 1-38; ROTCC, էջ 51-75:

Դրանցում պահպանված տեղեկությունները բազմաթիվ գու-
գահեռներ ունեն հինատաջավորասիական այլ բնագրերում,
հատկապես, Աստվածաշնչի Ծննդոց գրքում, Ուզարիքից
հայտնաբերված բնագրերում², Բաբելոնի գերագույն աստ-
ված Բեյլի տաճարի քրոնակետ Բերոտոսի «Բաբելոնիկա»
եռահատոր աշխատությունից մեզ հասած հատվածներում³ և
այլուր:

Կարևոր նշանակություն ունեն մի շարք տնտեսական
բնույթի վավերագրեր, որոնք վերաբերում են Միջագետքում
բնակություն հաստատած հայաստանցիներին, կուտիական
արքաներին տրվող հարկերին, հայաստանյան մետաղագոր-
ծությանը, առևտրականներին և այլն⁴:

Միջագետքյան սկզբնաղբյուրների շարքում ունենք շատ
ուշագրավ երկու աշխարհագրական բնագրեր, որոնք պա-
րունակում են Ջ.ա. III հազ. մասին տեղեկություններ, սա-
կայն մեզ են հասել Ջ.ա. II-I հազարամյակների գրառումնե-
րով և կրում են նաև այդ ժամանակաշրջանների իրականու-
թյան կնիքը: Դրանցից առաջինն «Աշխարհի բարելոնյան
քարտեզն» է, որում Հայաստանը նշված է «Ուրարտո» («Ու-
րաշտու») անունով, ինչը տեղի է ունեցել Ջ.ա. I հազ. առաջին
կեսին⁵: Երկրորդը Սարգոն Աքադացու տերության աշխար-
հագրությանը վերաբերող նոր ասորական բնագիրն է, որում
արտահայտություն են գտել նաև Ջ.ա. II հազարամյակի իրո-
դությունները⁶:

¹ ANET, էջ 60-72; MM, էջ 228-277; JOTCC, էջ 32-51: Պոսմն անվանա-
կոչված է՝ քսո առաջին քտերի:

² Lipinski, 1971, էջ 41-57; նմու. Մովսիսյան, 2004, էջ 13-14, 21:

³ Schnabel, 1923, էջ 250-275:

⁴ Միջագետքյան տնտեսական բնույթի վավերագրերի Հայաստանի վե-
րաբերող հաղորդումները՝ համապատասխան գրականության հղում-
ներով, տե՛ս սույն գրքի Դ-գլխում:

⁵ Horowitz, 1988, էջ 148-165, լրսանկարները՝ աղ. X: Հայերեն բարգմա-
նությունը տե՛ս Հավելված, N 10:

⁶ Բնագիրը՝ հանգամանաթի վերլուծությանը՝ տե՛ս Albright, 1925, էջ 193-
245; առավել ճշգրտված՝ Weidner, 1952-1953, էջ 1-24: Հայագալսուր-

Վարչական նշանակություն ունեցող գրակիր առարկաներ են արձանագրված կնիքները, որոնց հայտնաբերումը լրացնում է այլ սկզբնաղբյուրներից մեր իմացությունը: Օրինակ, Թեյ Բրաք հնավայրից հայտնաբերվել են Նարամ-Սուենի անունը կրող արձանագրությանը յոթ կնիքներ¹, որոնք փաստում են այդ հնավայրի և շրջակա տարածքի նվաճման մասին նույն արքայի մեկ այլ արձանագրության հավաստիությունը²:

բ) Արևելամիջերկրածովյան սկզբնաղբյուրներ: Հայկական լեռնաշխարհին վերաբերող այս աղբյուրախմբի հնագույն բնագրերը գտնվել են Էրլայից (Ք.ա. XXVI-XXIII դարեր, Հալեպից շուրջ 55 կմ հարավ, դեպի արևմուտք), որի պեղումների արդյունքում իտալական արշավախումբը հայտնաբերեց շուրջ 17 հազար բնագիր: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում տնտեսական բնույթի բնագրերը³: Էրլայից գտնվել են մաս և Հայկական լեռնաշխարհին վերաբերող այլ բնագրեր⁴:

յամն այն հայտնի է դարձել Ն. Ալոնցի միջոցով, որն օգտագործել է դեռևս չիրատարակված բնագրի տեղեկություններից է. Ֆորերի մի հոդվածից: Վերջինս, ելնելով այն հանգամանքից, որ բնագրում հիշատակվում են Ք.ա. II հազարամյակում հայտնի դարձած մի քանի երկրանուններ, եզրակացրել է, որ բնագիրը վերաբերում է ոչ թե Սարգոն Ա-բաղաջու, այլ Սարգոն Աշուրաջու (Ք.ա. XIX դ.) տերությանը (Ալոնց, 1972, էջ 25-26): Այդ կարծիքը տարածում է գտել հայագիտության մեջ: Մակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բնագիրն իրոք վերաբերում է Սարգոն Աբաղաջու տերությանը և այն լրացվել է Ք.ա. II հազարամյակում: Հայերեն թարգմանությունը տես՝ Հավելված, N 9:

¹ Hirsch, 1963, էջ 19; RIM-SGP, էջ 125-126:

² UET, I, էջ 74-76; Hirsch, 1961, էջ 20-21, 73-77; ANET, էջ 268; IRSA, էջ 107-108; Foster, 1982, էջ 27-36; RIM-SGP, էջ 132-135; Մատթեոսյան, 1994, էջ 255-256 և այլն:

³ Էրլայի պեղումների և բնագրերի մասին լույս է տեսել մեծածավալ գրականություն (տես՝ օրինակ, Matthiae, 1977; Matthiae, 1980; Pettinato, 1979; Pettinato, 1981; LE; BE; DE և այլն): Pettinato, 1979, էջ 273-ում եղվող բնագրերը:

⁴ Օրինակ, Աբաուտա երկրի ու Գիլգամեշի մասին պատմող երկու պատմավիպական բնագրերը (տես՝ Pettinato, 1979, էջ 198, NN 2093 և 2094):



«Հանրապետության
Լճերի և
Կամուրջների
Վերականգնման
Գործընկերություն»

գ) Փոքրասիական սկզբնաղբյուրներ: Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ փոքրասիական քննադրելից հատուկ ուշադրության են արժանի Ք.ա. II հազարամյակում գրի առնված «Քուրայի արքայի լեզենդը»¹ և «Նարամ-Մուսենն ու իր բշնամինները»² խեբեբեն քննադրելը, որոնք պատմում են Ք.ա. III հազարամյակի պատմական դեպքերի մասին:

դ) Իրանական սկզբնաղբյուրներ: Իրանի տարածքից հայտնաբերված և Հայկական լեռնաշխարհին վերաբերող վաղագույն գրավոր աղբյուրները թվագրվում են Ք.ա. XXIII-XXII դարերով և վերաբերում են Արաղի և Կուտիական դինաստիաների իշխանության ժամանակահատվածին: Դրանք ընդամենը երեքն են՝ Էլամի արքա Կուտիկ-Ինշուշինակի (Պուզուր-Ինշուշինակի) դեպի հյուսիս կատարած արշավանքի մասին քննադրելը, որում հիշատակվում է Կուտու (կուտիական) երկիրը³, Լուլտրումի արքա Աննուբանիի հաղթանակը Բաբիլ լեռան վրա⁴, և Նարամ-Մուսենի արձանագրություններից մեկը, որ ժամանակին՝ որպես ռազմավար՝ Էլամի արքա Շուտրուկ-Նախունանն տարել է Մուզա, որի պեղումներից հայտնաբերել է Ժ. դը Մորգանը⁵:

ե) Հայաստանյան սկզբնաղբյուրներ: Հայաստանից այսօր հայտնի հնագույն արձանագրություններից կատարված են տեղական պատկերագրերով և դրանց հիմքի վրա ստեղծված Գժային գրով, որը թվագրվում է Ք.ա. III հազարամյակից մինչև I հազարամյակի սկիզբն ընկած ժամանակահատվածով⁶: Գժրախոտարար, դրանք առայժմ վերծանված չեն, ուստի չեն կարող ծարայել իբրև սկզբնաղբյուր:

¹ Gurney, 1955, էջ 93-113: Մի հատվածի հայերեն թարգմանությունը տես Հավելված, N 12:

² Forer, 1926, էջ 2, N 3; Hrozy, 1929, էջ 65-73:

³ RISA, էջ 158-159 (տե՛ս Հավելված, N 29):

⁴ SAKI, էջ 172-173; RISA, էջ 150-151; IRSA, էջ 168: Հայերեն թարգմանությունը տես Հավելված, N 13:

⁵ SAKI, էջ 166-167; RISA, էջ 142-143; RIM-SGP, էջ 143-144:

⁶ Մովսիսյան, 2003 (b), էջ 23-46:

Հայաստանի հնագույն պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրներից մեկը նշել ու մնում է հայոց ավանդական պատմագրությունը, որում բացառիկ տեղ է գրավում պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»¹: Նրանից հետո հայոց հնագույն պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են հաղորդում միջնադարի այլ հայ մատենագիրներ, որոնք XVIII դարում ի մի են բերվել Միրայել Չամչյանցի «Հայոց պատմություն» կորոլային ուսումնասիրության առաջին հատորում²: Հայոց ավանդական պատմագրության տվյալները XIX դարավերջից սկսած համադրվում են նոր հայտնաբերված ու վերծանված հնագույն արձանագրությունների հետ՝ օրրատօրն վեր հանելով հնագույն պատմության մոտացված նոր դրվագներ:

Նշված սկզբնաղբյուրներից բացի Հայաստանի Ք.ա. III հազարամյակի պատմության լուսաբանմանն օգնում են հետազա դարաշրջանների մի շարք արձանագրություններ, որոնք կհիշատակվեն յուրաքանչյուրն իր տեղում:

* * *

Բավական բարդ և խճողված է մեզ հետաքրքրող իրադարձությունների ժամանակագրության խնդիրը: Մասնագիտական գրականության մեջ այսօր կիրառվում են ժամանակագրական մի քանի համակարգեր, որոնք իրարից տարբերվում են նրբնման հարյուրամյակներով³:

Արևմտյան գիտնականների շրջանում առավել ընդունված է Միջագետքի Ք.ա. III հազ. ժամանակագրության Ջ. Ա. Բրինքմանի⁴, իսկ խորհրդային (և հետխորհրդային)

¹ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, 1913 (1991):

² Չամչյանց, 1785 (1985):

³ Հին Արևելքի ժամանակագրության խնդիրների մասին հանգամանորեն տես Յուրգեն Բրինքման, 1976, էջ 10-23, 75-86; ՄԱԵ, էջ 162-167:

⁴ Brinkman, 1964, էջ 335-347:

արևելագիտության մեջ Վ. Ա. Յակոբսոնի¹ կազմած ժամանակագրական աղյուսակները, որոնք ունեն տարիների տարբերություն: Աբադի բազավորության հիմնադիր Սաբգոնն, օրինակ, իշխել է՝ ըստ Բրինքմանի՝ Ք.ա. 2334-2279 թթ., ըստ Վ. Ա. Յակոբսոնի՝ 2316-2261 թթ., Նարամ-Մուսնն իշխել է Ք.ա. 2254-2218 թթ.՝ ըստ Ջ. Ա. Բրինքմանի, Ք.ա. 2236-2200թթ.՝ ըստ Վ. Ա. Յակոբսոնի, Ուրի III հարստությունն իշխել է՝ ըստ Ջ. Ա. Բրինքմանի Ք.ա. 2112-2004 թթ., ըստ Վ. Ա. Յակոբսոնի՝ Ք.ա. 2112(?) - 2003 թվերին: Գրքում զուգահեռաբար կիդվեն երկու համակարգերը:

Շումերական դյուցազնավեպի մեզ հասած բնագրերը թվագրվում են Ք.ա. XX-XVIII դարերով: Սակայն դրանց բնագրագիտական և պատմա-քննական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վիպերգերում ներկայացվող իրադարձությունները տեղի են ունեցել վաղ դինաստիական ժամանակաշրջանի առաջին փուլերում՝ Ք.ա. XXVIII-XXVII դարերում: Դյուցազնավեպի գլխավոր հերոսներ էնմերբարը, Լուգալբանդան և Գիլգամեշը, ըստ «Շումերական արքայացանկի», համապատասխանաբար, Ուրուկի (Շումերի գլխավոր քաղաքներից, Աստվածաշնչում՝ Արեք) առաջին հարցստության երկրորդ, երրորդ և հինգերորդ արքաներն են:

Կուտիական աշխարհակալության և առանձին տիրակալների գահակալման տևողության հարցերին կանդրահատմանը սույն գրքի երրորդ գլխի համապատասխան բաժնում: Համապատասխան բաժիններում կներկայացվեն նաև Հայկական լեռնաշխարհի հետ առնչված արքաների գահաժամկեաները, իսկ «Շումերական արքայացանկի» ամբողջական հայերեն քարզմանությունը՝ Հավելվածում:

¹ Որպես հավելված՝ զետեղված է Бикерман, 1976, էջ 179-185; ИДВ, էջ 486-490:

² Մանրամասն վերլուծությունը տես Кассан, 1964, N 3, էջ 245-247; հմտ. Մովսիսյան, 1992, էջ 6-9:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Հայկական լեռնաշխարհի Զ.ա. III հազարամյակի այսօր վերականգնվող պատմությանն անցնելուց առաջ կարևոր ենք համարում տեղագրական մի քանի խնդիրների ճշգրտումը: Մի շարք երկրամունների տեղորոշման շուրջ մասնագիտական գրականության մեջ հայտնվել են տարբեր կարծիքներ, ուստի մախ պարզենք Հայկական լեռնաշխարհում վկայված գլխավոր երկրամունների տեղագրությունը: Զ.ա. III հազարամյակի իրադարձությունների կապակցությամբ շումերական, էրայական, արադական, մակ քարելոմյան, խերական, ասուրական աղբյուրներում վկայվում են Արատտա, Ս/Շուրուր (Ս/Շուրարտու), Հայա, Արմի/ե, Արման(ի/ում), Կ/Գուտի(ում) երկրամունները, որոնց տեղորոշումը մախ կդարձնենք հատուկ քննության առարկա: Մյուս տեղանուններին (դրանց տեղագրության ճշգրտումներով) կանդրադառնանք քաղաքական պատմության շարադրամբում:

1. ԱՐԱՍՏԱ ԵՐԿՐԻ ՏԵՂՈՐՈՇՈՒՄԸ

Արատտայից Շումեր գնում էին գետով: Արատտա երկրի տեղադրության հարցում կարևոր ծառայություն է մատուցում «Էնմեբքարը և Էնսուխքեշդաննան» վիպերգը, որի համաձայն՝ քարծր լեռնային Արատտա երկրից Շումեր ուղևորական արշավանք է իրականացվել Եփրատ գետով: Ճանապարհի կեսին հիշատակվում է Եփրատի ափին գտնվող Էրեշ քաղաքը, որը Նիսարա դիցուհու պաշտամունքի կենտրոնն էր¹: Շումերից մինչև Հայկական լեռնաշխարհի հարավը եզե-

¹ Berlin, 1979, էջ 48-51, 54-55, 58-59; ETCSL, 1.8.2.4, սուղ 135-171, 224-225, 271-272 (և այնտեղ նվճած աղբյուրները): Վիպերգի վերնագրի

րող Հայկական Տավրոսի և Մասիուս/Մասիոն լեռները ձգվող տարածքը հարթավայրային է, հետևաբար, Արատտան պետք է գտնվեր Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում (կամ հարավ-արևմուտքում):

Արատտա-Շումեր ջրային ճանապարհի գոյության մասին է վկայում նաև «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» («Էնմերքարը և Արատտայի գերագույն քորմը») բնագրի սկզբնամասը, ըստ որի Ուրուկի տաճարները հնացել ու ճաքճքել էին, որովհետև աղատուացիները «... նավարկություն չեն կատարում, ... քարեր, բրոնզ, կապար, լազուրիտի կտորներ ... չեն բերում իրենց լեռներից» ...

Հայաստանից Եփրատով Միջագետք նավարկության մասին տեղեկություններ են պահպանվել անտիկ հեղինակների երկերում, որոնք ավելի արժանահավատ են դարձնում Հայկական լեռնաշխարհից գետով դեպի հարավ ապրանքներ փոխադրելու և ռազմական արշավանք կատարելու վիպերգերի տեղեկությունները:

«Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչը ինձ այս քաղաքից հետո բխում է ամենազարմանալին: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կյոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Աադրեստանից վերև, նրանք կտրում են ուտենիներ, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն իննգ հազար տաղանդ տարողություն»¹:

երկրորդ ամենամուռը հղված էրեք աղբյուրներում ունի տարբեր ընթերցումներ՝ Էնսուրուշգլաննա, Էնսուխեշգլաննա, Էն-տիլգիբ-անա:

¹ Kramer, 1952, էջ 6-7; Kauser, 1964, N 4, էջ 205; Cohen, 1973, էջ 112; ETCSL, 1.8.2.3, տող 16-20):

² Էրուդանա, 1986, էջ 79-80:



Handwritten notes in blue ink: 'A II' and '30604'.

Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է 26.2, իսկ բաբելոնյան տաղանդը՝ 40 կիլոգրամի, ստացվում է, որ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերն ունեցել են 131 (կամ 200) տոննա տարողություն: Եթե անգամ խիստ չափազանցված է այս թիվը, վկայությունն, այնուամենայնիվ, խոսում է հոգուտ Եփրատով Հայաստանից նավարկություն կատարելու փաստի:

Մեկ ուրիշ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Գիոդորոս Միլիկիացին. «Մեմփրամիսը (Շամիրամը) Հայկական լեռներից մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ քսան և հինգ. նա ջորիների և եզների բազմաթիվ լծերով (այդ քարը) իջեցրեց դեպի գետը և այնտեղից բարձեց լաստի վրա և դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելյի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում էին կորող, որը և համարում են, այսպես կոչված, յոթ հրաշալիքներից մեկը»¹:

Շամիրից Արատուս ճանապարհին հիշատակվում է *hur-ru-um-kur-ra*-ն: «Լուգայրանդան և Խուռում լեռը» կամ «Լուգայրանդան լեռների խափարում» վիպերգում Շամիրից Արատուս ճանապարհին հիշվում է մի վայր ևս՝ *hur-ru-um-kur-ra*, որը սկզբնապես վերծանվում էր որպես Խուռում (իմա՝ խուրիների) երկիր և տեղորոշվում Վանա լճից հարավ-արևելք²: Հետագայում Զ. Վիլքեն առաջարկեց այն բնթիքել որպես հասարակ անուն՝ «լեռան քարայր» իմաստով³: Առաջին մեկնաբանությունը հիմք ընդունելու դեպքում, շարունակելով Շամիր-Խուռում ճանապարհը, կրկին դուրս կգանք Հայկական լեռնաշխարհի, այս անգամ՝ Վանա լճի ավազան: Բայց քանի որ հնարավոր է *hur-ru-um-kur-ra*-ի այլ մեկնաբա-

¹ Գիոդորոս Միլիկիացի, 1985, էջ 27:

² Kramer, 1963, էջ 275՝ Hrouda, 1958, էջ 14՝ Kaufmann, 1965, էջ 71:

³ Wilcke, 1969, էջ 36-38:

նություն, այս փաստը չենք օգտագործի խնդրի լուծման նպատակով:

Չամուա (Չարու) երկիրը՝ Շումեր-Արատտա ճանապարհին: Լուգալբանդայի վիսպաշարում Շումերից Արատտա ճանապարհին հիշատակվում է Չամուա երկիրը¹, ինչը ենթադրում է Արատտայի՝ Շումեր-Չամուա գծի շարունակության վրա գտնված լինելը: Չամուա երկիրը գտնվել է Չագրոսի հյուսիսային շրջանում², Ուրմիո լճից հարավ: Այսինքն՝ Արատտան պետք է փնտրել Ուրմիո լճի ավազանի հյուսիսում և (կամ) հարակից շրջաններում (տե՛ս ներդիր-քարտեզ 2-ը):

Դեպի «անմահության երկիր» Արատտա: Միջագետքյան գրականության մեջ մեծ տեղ է գրավում անմահության գաղափարը և նրա փնտրտուքի սյուժեն: Այդ սյուժեն է բնկած «Գիլգամեշը և անմահության երկիրը» վիպերգի հիմքում, որն էլ իր հերթին դարձել է արադական «Գիլգամեշ» դյուցազնավեպի գաղափարասյուժեառային սկզբնաղբյուրը:

«Գիլգամեշը և անմահության երկիրը» բնագրի համաձայն՝ Գիլգամեշին «անմահության երկիր» հասնելու համար տրվում են «դեպի Արատտա ճանապարհից ցույց տվող» յոթ ուղեցույցներ³: Դրանից հետևում է, որ «անմահության երկիրը», հենց Արատտան է կամ «անմահության երկիր» և Արատտա գետն են նույն ճանապարհով: Իսկ եթե ավելացնենք նաև, որ «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» վիպերգում, չնայած Շումերի և Արատտայի բշնամական հարաբերություններին, Արատտային բազմիցս տրվում է «տարբ օրենքների երկիր» պատվանուն-մակդիրը⁴, կասկած չի մնա,

¹ Kramer, 1956, էջ 235-238; Wilcke, 1969; ETCSL, 1.8.2.2 (և այնտեղ նույնպես աղբյուրները):

² TY, էջ 78:

³ IIIAB, էջ 131; ETCSL, 1.8.1.5.1 (և այնտեղ նույնպես աղբյուրները):

⁴ Շումերերեն kur-me-sikil-ն արտահայտությունը բարգմանվել է տարբեր կերպ (տե՛ս օրինակ Kramer, 1952, էջ 21; Kanous, 1964, էջ 208, 210; Cohen, 1973, էջ 123; Berlin, 1979, էջ 57 և այլն): Քանի որ «մե» էին կոչվում աստվածային օրենքները, մենք նախընտրում ենք «աստվածային տարբ օրինաց երկիր» բարգմանությունը:

որ Արատտան նույն «անմահության երկիրն» է¹: «Գիլգամեշ» էպոսի խեթական տարբերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության դրոնման՝ Եփրատի հոսանքն ի վեր²: Իսկ էպոսի բաբելոնյան (արադական) տարբերակում «անմահության ծաղկին» հասնելու ճանապարհին Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռները³, որոնք վաղուց նույնացվել են Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիուս-Մասիոն լեռների հետ⁴: Այսինքն՝ Արատտան գտնվել է Եփրատի վերին հոսանքի շրջանում՝ Մասիուս/Մասիոն լեռներից հյուսիս:

Շումերական աղբյուրների Արատտան և Աստվածաշնչի Արարատը: Առաջին իսկ հայացքից գայթակղիչ է շումերական աղբյուրների Արատտա և Աստվածաշնչի Արարատ⁵ երկրանունների նմանությունը, մասնավորապես որ Արատտան շումերական աղբյուրներում հայտնի է «սուրբ օրինաց երկիր» պատվանուն-մակդիրով, ինչը համադրելի է աստվածաշնչյան պատկերացումների Արարատ-Հայաստանի կերպարին: Երկրանունների նմանությունը, ինչպես տեսանք տեղա-

¹ Հնժո. Մովսիսյան, 2004, էջ 44-49:

² MM, էջ 127, ծմբ. 32:

³ Գիլգամեշ, 1963, էջ 74; ANET, էջ 88-89; ПП/АВ, էջ 218-220; ՀԱՊ, էջ 163-165; MM, էջ 119:

⁴ Lehmann-Haupt, 1927, էջ 797-798; Ինգլիզիան, 1947, էջ 119-132; Lipinski, 1971, էջ 49-50:

⁵ «Արարատ» երկրանունն Աստվածաշունցն հիշատակվում է հինգ անգամ: Նախ այն հանդիս է գալիս Ծննդոց գրքում (8, 4) կապված համաշխարհային ջրհեղեղի պատմության հետ: Թագավորաց Դ (19, 37), Տոբիթի (1, 24) գրքերում և Եսայու մարգարեությունում (37, 38) Արարատ երկիրը հիշվում է որպես Ասորեստանի Սեմերեթիմ (Սիմախեթիթ) արքայի հայրասպան որդիների ապստամբության, իսկ Երեմիայի մարգարեությունում (51, 27) նշվում է ամիրսվ Բաբելոնի դեմ պատերազմի կոչվող թագավորությունների շարքում (Ք.ա. VI դարի վերջ): Աստվածաշնչի բարգձմանություններում ու վաղ շրջանի մեկնություններում այն հաճախ փոխարինվում է «Արմենիայով» և «Հայքով» (Ինգլիզիան, 1947, էջ 5-21), ուստի անկասկած է Արարատ - Հայաստան նույնությունը:

գրական քննությունից, պատահական չէ: Նշված փաստարկներից զատ կա անուշադրության մատնված չափազանց կարևոր մի տեղեկություն:

Որ միջազեղության և նրանից ծագող ավանդություններում Հայաստանն է հանդես գալիս որպես փրկիչ տարածք, ակնհայտ է ՅՆՈդոց գրքի՝ դեռևս 19-րդ դարում վերծանված ջրհեղեղի մասին քաբելոնյան բնագրի («Գիլգամեշ» էպոսի XI պնակիտ), Բերոսոսի, Ալեքսանդր Բազմավեպի, Աբյուդենոսի, Հիերոնիմոս Եգիպտացու, Մնասեստի, Նիկողայոս Դամասկոսցու, Հովսեպոս Փլավիոսի, Եվսեբիոս Կեսարացու և այլ աղբյուրների հաղորդումներից¹: Մեր դարասկզբին գտնվից մինչ օրս ջրհեղեղի մասին հայտնաբերված ամենավաղ՝ շումերական պատմությունը², որում վնասվելու պատճառով չկար տապանի հանգրվանի ամունը: Ջրհեղեղի մասին գրի առնված հնագույն բնագրի այդ բացը լրացնելու է գալիս «Էմմերքարը և Արատտայի տիրակալը» բնագրում Արատտայի ժողովրդին տրված այս բնութալուծը. «... *Նրանք, որ կանգնեցին ջրհեղեղի մեջ, այն ժամանակ, երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան*»³... Նշված հատվածը լրացնում է ջրհեղեղի շումերական պատմության մեզ չհասած մասը և ամբողջացնում Արատտա երկրի վերաբերյալ մեր պատկերացումը:

Այսպիսով, Արատտա երկրի տեղադրության հարցի քննությունը ցույց է տալիս, որ այդ երկրի կազմի մեջ են մտել առնվազն Եփրատի՝ Հայկական Տավրոսով անցման շրջանը, Վանա և Ուրմիո լճերի ավազանները: Փաստվում է նաև, որ շումերական աղբյուրներում հիշատակված Արատտան և Աստվածաշնչի Արարատը միևնույն երկրի՝ Հայաստանի հնագույն անվանումներն են շումերական և հին եբրայական աղբյուրներում: Աստվածաշնչի տեղեկությունները Հայաստ-

¹ Տե՛ս Մովսիսյան, 2004, էջ 5-6, 40-44:

² Kramer, 1983, էջ 115-121; ETCSL, 1.7.4 (ուղծած աղբյուրներով և գրականությամբ համեղերը):

³ Kramer, 1952, էջ 42-43; Kanana, 1964, N 4, էջ 218; Cohen, 1973, էջ 140; ETCSL, 1.8.2.3, սող 571-572:

տանի մասին բաժանվում են երկու խմբի՝ նախապատմական (դրախտ, ջրհեղեղ) և պատմական: Այս խմբերին միավորում են Արատտա-Արարատի մասին տեղեկությունները, որոնք կամրջում են Ք.ա. III հազարամյակի և Ք.ա. VII-VI դարերի պատմական իրադարձությունները:

Անմահության որոնումներում. Գիլգամեշ և Ալեքսանդր Մակեդոնացի: Հնագույն միջագետքյան ավանդության մեջ անմահություն որոնող գլխավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասքերը գրի են առնվել հին աշխարհի բազմաթիվ լեզուներով: Շումերական «Գիլգամեշն ու Անմահության երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր, որին հասնելու համար Ուրու (Արև) աստվածը նրան տալիս է «դեպի Արատտա ճանապարհը ցույց տվող» յոթ ուղեցույցներ¹: «Գիլգամեշ» էպոսի խերական տարբերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման՝ Եփրատի հոսանքն ի վեր²: Իսկ էպոսի բաբելոնյան տարբերակում Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռներն ու տասներկու ասպարեզ ձգվող թանձր խավարը, հասնում դրախտ հիլեցնող քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերը, հանդիպում ջրհեղեղից փրկված ու անմահություն ստացած հերոսին, նրա շնորհիվ ձեռք է բերում «անմահության ծաղիկը», որը վերադարձի ճանապարհին նրանից գողանում է օձը³: Ուշագրավ է, որ Աստվածաշնչում ևս մարդկությունը մահկանացու է դառնում օձի միջամտության հետևանքով:

Գիլգամեշի հետ կապված անմահության մասին պատկերացումները Առաջավոր Ասիայում պահպանվում են քավականին երկար. անմահության որոնման այուժնում Գիլգամեշին փոխարինում է Ալեքսանդր Մակեդոնացին: Անմահության հասնելու համար Ալեքսանդր Մեծն, ըստ հունական վե-

¹ ՈՒԼԸԲ, էջ 131; ETCSL, 1.8.1.5.1 (և այնտեղ նշված աղբյուրները):

² ՄՄ, էջ 127, ծմբ. 32:

³ Գիլգամեշ, 1963, էջ 104; ANET, էջ 88-89; ՈՒԼԸԲ, էջ 218-220; ՀԱՊ, էջ 163-165; ՄՄ, էջ 119:

պի (գրի առնված Ք.ա. 240 թ.), բռնում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»¹: Ես հասնում է հրաշք-երկիր, ապա անցնում մութ աշխարհով, հանդիպում օրինյալ մեկին և հասնում կենաց աղբյուրին: Իսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասիս լեռնաշղթան²: Փաստորեն, հին արևելյան և հելլենիստական փիլակամ ավանդություններում «դեպի Արատուա ճանապարհ»-ը փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհ»-ով, Մաշու լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը գնում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մութ աշխարհով կամ մահվան ջրերով, հանդիպում աստվածընտրյալ հերոսին և ստանում անմահություն: Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մակեդոնացին փիլակամ ավանդության մեջ բռնում է նրա ճանապարհը³, քանի որ հիմ առաջավորասիական հոգևոր ընկալումներում մեր երկրի հետ էին կապված դրախտային և անմահությանը վերաբեղող սրատկերացումները⁴:

Նախորդ տեսակետների մասին: Ինչպես տեսանք, Էմմերքարին, Լուգարանդային և Գիլգամեշին ծոնված քնա-

¹ Lipinski, 1971, էջ 46:

² Lehmann-Haupt, 1927, էջ 797-798; Lipinski, 1971, էջ 47; Tysæen, 1924, էջ 262-263; Ինգլիզյան, 1947, էջ 120:

³ Նշենք, որ հայկական ավանդազրույցներում պահպանվել են և՛ Մակեդոնացու Հայաստան զազու, և՛ «մութ աշխարհով» օլոյս աշխարհ» հասնելու, «անմահական ջրեր» ձեռք բերելու սյուժեները (Վանազանյան, 1969, էջ 279-282, 472):

⁴ Հունական աղբյուրներում հիշվող Այա երկիրը, որտեղ իշխում էր արևի որդին և պահվում Ոսկե Գեղմը, մեծ հավանականությամբ, նույնացվում է Հայաստան-Հայքի հետ (Տախուկյան, 1987, էջ 285; Պետրոսյան, 1997, էջ 86-89; Մարտիրոսյան, 1997, էջ 24): Այա կղզի Ոսկե Գեղմը կապվում է խեթական աղբյուրներից ծայտնի մշտադալար Էա ծառի հետ, որից կախված ոչխարի գեղմը խղճիդակնում էր յուր ջարձրքները (ՄԿՄ, էջ 61): Հայաստանի՝ իբրև անմահության երկրի մասին հին Առաջավոր Ասիայում պահպանված տեղեկությունների մասին ավելի ծանցանալորեն անդադարձել ենք Մովսիսյան, 2004, էջ 44-49-ում:

գրերի քննությունը քույլ է տալիս Արատտան տեղագրել Հայկական լեռնաշխարհում: Այժմ անդրադառնանք Արատտայի տեղագրությանը վերաբերող նախորդ ուսումնասիրություններին:

Արատտան նախկինում տեղագրվել է Եփրատի միջին հոսանքի շրջանում¹, Իրանի տարբեր շրջաններում², Աֆղանստանում³, Հնդկաստանում կամ Հնդկաստանի ճանապարհին⁴ և Հայկական լեռնաշխարհում⁵: Ավելորդ համարե-

¹ Ելնելով միջագետքյան քնագրերի հազորդումներից՝ դեռևս 1925 թ. Վ. Ֆ. Օլբրայթն Արատտան տեղադրում է Եփրատի հովտում, Շամերից հյուսիս (Albright, 1925, էջ 206-208): Դա լիովին հիմնախախտել է վիսյեդների հազորդումներին, որոնք հրատարակվեցին XX դարի երկրորդ կեսին, սակայն Վ. Ֆ. Օլբրայթը տեղորոշում է Արատտան Մարիի շրջանում, ինչը ինչպեսզ և Արատտայի լեռնային երկրի լինելու փաստին: Վերջինս հաշվի առնելով և Եփրատի հովտով հյուսիս քարծրանալով՝ կհանգեցնեք Արատտայի նայատտանյան տեղորոշմանը:

² Kramer, 1952, էջ 1 (Իրանի հարավում, ժամանակակից Լաքիստանի տարածքում); Kramer, 1963, էջ 42, 45, 275 (Կասախից ծովի և Ուրմիա լճի շրջանում); Maccos, 1964, էջ 233-235 (Կենտրոնական Իրանում); Gordon, 1967, էջ 72 (Նիլոս գետի վերին ավազանում); Majidzadeh, 1976, էջ 105-107, 111-113 (Ջեբուսի և Ֆարսի տարածքում); Hanston, 1979, էջ 331-336 (Շահր-ի Մոխրա հնավայրի շրջանը Սիստանում, Աֆղանստանի սանձանին մոտ) և այլն:

³ Շարատտ, 1984, էջ 88 և այլն: Նման տեղորոշումը պայմանավորված է Արատտայում լաջվարդի (լազուրիտի) հիշատակությամբ (Հին Արևելյի լաջվարդի ամենահայտնի համբերը գտնվել են Աֆղանստանի Քուդաշչանի լեռներում): Այն ընդգծված է նաև Hanston, 1979, էջ 334-336:

⁴ Πακσίου, 1959, էջ 165, մմթ. 45; Kausa, 1964, N 2, էջ 247-248: Նկատի ունենալով Փամբարի հնագույն անվան՝ «Արատտա» լինելը, առաջարկվել է շամեթական աղբյուրների Արատտան տեղայնացնել Փամբարի տարածքում (Maxambara, 1990, էջ 11, 248-254, Յ. Վ. Վասիլևիչի և Ս. Լ. Նեկլովաի առաջարկն ու ծանոթագրությունները, որոնցում հղվում է նաև Յ. Վ. Վասիլևիչի և Ն. Վ. Գուրովի այն ժամանակ տպագրության ընթացքում գտնվող «Հին հնդկական և շամեթական աղբյուրները Արատտայի մասին» աշխատանքը, որը մեզ մնացել է անձանք):

⁵ Առաջին անգամ Արատտան Հայաստանի տարածքում՝ Վանա լճից արևելք է տեղադրել Ս. Ն. Ջրամբը (Kramer, 1962, էջ 295), սակայն

լով բոլոր տեսակետների մեկ առ մեկ քննարկումը¹, ստորև կանդղագրված են այն չորս հիմնական կովաններին, որոնց հիմամբ կատարվել են այդ տեղադրումները:

մեկ տարի անց վերանայել է տեսակետը՝ տեղորոշելով Կասպից ծովի և Ուրմիտ լճի շրջանում (Kramer, 1963, էջ 42, 45, 275): Արատտանի Հայաստանի հետ կապելու ենթադրություն է արել Լ. Պետրոսյանը. «մշտանց հիմքի և, ինչպես, ոչ առանց վերապահումների, կարելի է ենթադրել նաև, որ Արատտա անվանված այդ լեռնային երկիրը (կամ քաղաք-պետությունը, Արատտա-Ուրարտու-Արարատ) գտնվել է հետագայում Հայկական ինտեռալպարի կոչված երկրում...» (Պետրոսյան, 1974, էջ 122-123): Մակայն նա այն չափազանց արժանապատվելով այդ հարցին: Այնուհետև վկայակոչելով Kramer, 1963-ում բերված փաստարկները՝ Մ. Գավորչյանը նախ ենթադրեց, որ «աննախնայական չէ, որ այս Արատտան գտնված լինի Ուրուստրի-Արարաղ լեռներում» (Գավորչյան, 1982, էջ 29, մմթ. 6), իսկ տարիներ անց, դարձյալ հղելով նույն աշխատությանը, Արատտան տեղորոշում է Հայաստանում, անգամ նույնացնում Մեծամորի հետ (քանի որ Մեծամորն այդ ժամանակաշրջանում ունեցել է աստղադիտարան, մուսալաճաչալուրյուն և հարուստ մշակույթ), իսկ «Արատտա» անունը մեկնում իբրև Արա ասածու կամ ար (հետագայում՝ հար>հայ) ժողովրդի երկիր (Kavoukjian, 1987, էջ 65-72; Գավորչյան, 1988, էջ 74-88): Արատտայի՝ Հայաստանում տեղորոշմանը հանգամանորեն անդրադարձել ենք մեր մի շարք աշխատանքներում (Մովսիսյան, 1990, էջ 69-74; Մովսիսյան, 1992, էջ 10-18; Մովսիսյան, 2004, էջ 57-67): Արատտայի նույնատանյան տեղորոշումը պաշտպանում են Վ. Մատթոսյանը (Մատթոսյան, 1995, էջ 284-303), Դ. Բռնից՝ շեշտադրելով շումերական Արատտայի և Աստվածաշնչի Արարաանի նույնակալությունը (Քոս, 2003, էջ 89-136, հեղինակը ծանոթ չլինելով վերոնշյալ աշխատանքներին՝ զարժանք է հայտնում, քի ինչպես իրենից առաջ չեն մկատել Արատտա-Արարատ նույնությունը, և որիչներ:

¹ Նշենք նաև, որ ինչպես չափ լիճերի հարցեր, Արատտայի տեղորոշման խնդիրը ևս չլիճից պատմության կելծարարների աչքից: Օրինակ, փորձ արվեց Արատտան տեղորոշելու Ուրմիտ լճից հարավ և հարավ-արևելք, բյուրջական լեզվանիքով մեկնելու երկրամասը (կապելով «այլքայ»՝ «լեռ» հասկացությանը) և դրա հիմամբ ենթադրելու բյուրջական տարրի գոյությունը նշված տարածքներում Ջ.ա. III հազարամյակում (Юсифов, 1987, էջ 21-23): Պանրոբրիտական միտումով այս կեղծիքը այսօր դարձել է արդրիչանական պաշտոնական քարոզչության քաղաքականա: Մեկ այլ կեղծիք՝ կատարված Արատտայի հետ, առ-

Առաջին փաստարկը «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» վիպերգում Շումերից Արատտա ուղևորվող դեսպանի պաշտամունքային ծեսում «Սուգայի և Անշան երկրի» հիշատակությունն է, որը ժամանակին մենք բացատրել ենք՝ կապված Ինաննա աստվածուհու պաշտամունքի հետ (ժամանակը որ նույն վիպերգում Ուրուկում գտնվող Ինաննա դիցուհու տաճարներից մեկը կոչվում է «Անշանի տուն»), մշեղով, որ վիպերգերի մեզ հասած բնագրերի գրի առնվելու ժամանակաշրջանում (Ք.ա. XX-XVIII դդ.) Շումերը գտնվել է էլամական արքաների տիրապետության տակ և էլամական Սուգային և Անշան երկրին «խոնարհվելը» կարող էր լինել այդ տիրապետության արևոսնայություն, ուստի չենք համարել կովան Արատտայի տեղդրոշման հարցում¹:

«Լուգալբանդան և Էնմերքարը» կամ «Լուգալբանդա» վիպերգում, սակայն, նշվում է, որ դեսպանն անցնում է «Անշանի սահմանից»², ինչից հետևում է, որ գոյություն է ունեցել ամբողջությամբ Զագրոսյան լեռներով ձգվող Շումերից Արատտա տանող մի ճանապարհ, որի վերջին հատվածը, հնարավոր է, անցած լինի Զամուա երկրով (տե՛ս վերը): Իսկ թե ինչո՞ւ է դեսպանը գնում լեռնային հեռավոր ճանապարհով, ոչ թե Միջագետքի հարթավայրով, պարզ է դառնում նույն վիպերգից. Մարտու³ երկրի սեմական ցեղերը հարձակվել էին Շումերի վրա⁴, ինչի հետևանքով փակվել էին Կենտ-

կա է պակտնաձև գրականության մեջ, ըստ որի, իբր Արատտան գոյություն է ունեցել Դամուբ և Դմեար գետերի միջև Ք.ա. VI հազարամյակից սկսած, որի հիմնադիրներն են եղել Փոքր Ասիայից այնտեղ գնացած քրճերը, իսկ ժառանգորդն է դարձել Ք.ա. III հազարամյակի «իյուսիս-միջագետքյան Արատտան» (Hasson, 1999. տե՛ս http://recult.by.ru/docs/shilov/shil_07.htm)...

¹ Մոզսիսյան, 1992, էջ 19-21; այս բացատրության հետ համաձայնում է Վ. Մատթեոսյանը (Մատթեոսյան, 1995, էջ 290-292):

² Wilcke, 1969, էջ 122-123; ETCSL, 1.8.2.2, տող 342-344:

³ Մարտուն կամ Ամուրցուն (բասուցի՝ «արևմուտք») Շումերից և Արալից արևմուտք ստորածվող շրջանն է:

⁴ Wilcke, 1969, էջ 118-119, 124-125, 205; ETCSL, 1.8.2.2, տող 304, 370:

րոնական Միջազգետքի ճանապարհները, և Լուգալբանդան ստիպված էր լեռնային հեռավոր ճանապարհով գնալ Արատուա՝ օգնության խնդրանքով՝ Թերևս, դա նույն ճանապարհն էր, որով Էլամի արքա Կուտիկ-Ինշուշինակը (Պուգուր-Ինշուշինակը) արշավելով՝ հասել է մինչև Կ/Գ-ուտիական երկիր (տե՛ս ստորև): Այսինքն՝ այս փաստարկը ոչ թե հակասում է Արատուայի՝ Հայաստանում տեղորոշելուն, այլ հաստատում է այն:

Երկրորդ փաստարկը լաջվարդ (լազուրիտ) քանկարժեքարի հիշատակումն է, որի հիման վրա Արատուան տեղադրվել է լաջվարդի հանքերով հարուստ կամ նրա տարածման ուղիներին մերձակա երկրամասերում: Արատուայի տեղորոշման հարցին մվիրված մեր մի աշխատանքում նշել ենք, որ «մետաղների և քանկարժեք քարերի պահանջը հպատակեցման պահանջ է. լաջվարդ է պահանջում և՛ շումերացի արքան Արատուայից, և՛ մի այլ տեղում, Արատուայի արքան՝ Շումերից: Հետևաբար, լաջվարդի հիշատակությունը ևս տեղորոշման առումով արժեք չի ներկայացնում... Մետաղների և քանկարժեք քարերի պահանջը կռված չէ մաս այն պատճառով, որ պահանջի մեջ կարող էին նշվել ոչ թե այն մետաղներն ու քանկարժեք քարերը, որոնցով հարուստ էր Արատուան Ջ.ա. XXVIII-XXVII դարերում, այլ վիպերգի գրի առնվելու ժամանակ Շումերում առավել հայտնիները»¹: Այնուհանդերձ պետք է նշել, որ լաջվարդի հիշատակությունը չի հակասում Արատուայի մեր տեղորոշմանը: Բերենք մի քանի փաստ:

«Պատերազմի արքան» վիպապոստն նշվում է, Սարգոն Ա-բաղացին հաղթելով Նուր-Գագանին՝ լաջվարդի հարկ է

¹ Ի դեպ, «Էլմներարն ու Արատուայի տիրակալը» քննարկում ևս կա նման ակնարկ, Արատուայի տիրակալն իր կատարյալին դիմելով՝ նշում է, որ Արատուայի ճանապարհներին քշնամի կրկններ են (Kramer, 1952, էջ 34-35; Kamson, 1964, N 4, էջ 216; Cohen, 1973, էջ 134; ETCSL, 1.8.2.3, սող 444-445):

² Մովսիսյան, 1990, էջ 71:

պարտադրում Փոքր Ասիայի Պուրուշասանդա քաղաքին¹: Ք.ա. 714 թվին Ասորեստանի արքա Սարգոն Բ-ն գրավեց ու քալանեց Մուծածիրի տաճարը, որտեղից ի թիվս քաղմաքանակ այլ քանկարծեք քարերի ու մետաղների, հափշտակեց մեծ քանակությամբ լաջվարդ²: Ասորեստանի լրտեսները, որ պարբերաբար տեղեկություններ էին հաղորդում Վանի քաղաքացիական մասին, զեկուցագրերից մեկում հաղորդում է այնտեղ գտնվող լաջվարդի հանքի մասին³: Ամտիկ, միջնադարի արաբական, հայկական և եվրոպական քաղմաքիվ աղբյուրներում (Մարկոս Պոլոնիոս, Պլինիոս Ավագ, Ալ-Բիրունի, Աբու-Մանսուր, Իբն-Սինա, Մսիխար Հերացի, Ամիրդովլաբ Ամասիացի և շատ ուրիշներ) լաջվարդը կոչվում է «հայկական քար», ընդ որում Հայաստանը լաջվարդ է արտահանել օտար երկրներ⁴: Հետևաբար, լաջվարդի հիշատակությունը ոչ միայն չի հակասում, այլ կարող է հաստատել Արատտայի՝ հայաստանյան տեղորոշումը:

Երբորդ փաստարկը՝ օգտագործված նախորդ ուսումնասիրություններում, Սարգոն Բ-ի Ք.ա. 714 թվի արշավանքի ընթացքում Արատտա անունով գետի հիշատակումն է: Գետը հիշվում է Ուրմիտ լճի ավազանում⁵: Գետի և երկրի անունների նույնությունը կարող է պատահական լինել. երկիրը հիշատակվում է Ք.ա. III հազարամյակում, իսկ գետը՝ Ք.ա. VIII դարում: Եթե այդ նույնությունը պատահական չէ, հնարավոր է, որ Ուրմիտ լճի ավազանը մտած լինի Արատտա երկրի տարածքի մեջ. հնագիտական նյութը Ք.ա. III հազարամյակի առաջին կեսում նույնական է ոչ միայն Հայկական Տավրոսի և

¹ Weidner, 1922, էջ 64-69:

² ARAB, II, N 172; АВИИУ, N 49 (6); ՀԺՊՔ, էջ 24-26:

³ АВИИУ, N 50 (41 e):

⁴ Դրանք ի մի են ընդգրկված Сефранос, 1987, էջ 6-13-ում: Ենթադրվել է, որ «հայկական» անվանումը ծայ առտորականների գործունեության արդյունք է (տե՛ս, օրինակ, Фаруков, 1954, էջ 240). ինչը խիստ անհավանական է, այնպես էլ լրտեսարարում «հայկական» պետք է համարվեին արևելքից ընդված քանկարծեք քարի զգալի մասը:

⁵ ARAB, II, N 144; АВИИУ, N 49 (6); ՀԺՊՔ, էջ 24-25:

Վանա լճի ավազանի, այն Ռւրմիո լճի ավազանի և ողջ Հայկական լեռնաշխարհի տարածքում¹: Իսկ եթե նույնութունը պատահական չէ, և Ռւրմիո լճի ավազանն էլ չի մտել Արատտայի սահմանների մեջ, ապա «Արատտա» անվան հայտնըվելն Ռւրմիո լճի ավազանում կարող է լինել Արատտայի տարածքից քնակչության մի մասի դեպի Ռւրմիո լճի ավազան արտագաղթելու հետևանք:

Եվ վերջին փաստարկը Հնդկաստանի Փանջաբ նահանգի հնագույն անվան՝ «Արատտա» լինելն է², ինչից ելնելով առաջարկվել է շումերական աղբյուրների Արատտան տեղայնացնել Փանջաբի տարածքում: Փանջաբի՝ «Արատտա» կոչվելու փաստը, կարծում ենք, արդյունքն է հնդեվրոպական նախահայրենիքից (Փոքր Ասիայի արևելք, Հայկական լեռնաշխարհի և Իրանի հյուսիս-արևմուտք) արիացիների՝ դեպի Հնդկաստան արտագաղթելու, երբ նորանվան տարածքը կոչվել է հին հայրենիքի անվամբ (այլ կերպ ասած՝ տեղի է ունեցել երկրանվան տեղաշարժ այն կրողների հետ): Ընդ որում, նույն երևույթով կարելի է բացատրել անտիկ աղբյուրներում «արատտի» կոչվող ժողովրդի հիշատակությունը³:

Այսպիսով, նախորդ ուսումնասիրություններում քերված հիմնական փաստարկներից որևէ մեկը ոչ միայն չի հակասում Արատտա երկրի հայաստանյան տեղորոշմանը, այլև ուղղակի կամ անուղղակի վկայում են հոգուտ դրա:

¹ Մասնագիտական գրականության մեջ հնագիտական այդ հզոր մշակույթը հարյուրի է «Հայկական լեռնաշխարհի վաղորոնգեղարքյան», «Կուր-արաքսյան», «Շենգավիթյան» անվանումներով:

² Փանջաբը «Արատտա» անվամբ հայտնի է, օրինակ, «Մանաբեսրաստա» եպոսի ուրբուրդ՝ «Կարմաշի գրքի» 30-րդ գլխում (Maxwell, 1990, էջ 109-114, 248-254), «Արիաշատրա կամ Քաղաքակառուցության գիտությունը» գրքում (Արշաուստրա սու Ռայառ ուսուսառ, 1959, էջ 141, 602, 619, 627-628):

³ Пескочарпан, 1940, էջ 277: Չի բացառվում, որ նույնպիսի ծագում ունենա նաև Հնդկաստանում հիշվող օրիշումների ցեղանունը (Արթուռ, 1940, 247-255):

2. ՍՈՒՔՈՒՐ-ՍՈՒՔԱՐՏՈՒ ԵՐԿՐԻ ՏԵՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՅԸ

Ք.ա. III հազարամյակում Սուրուր (Սուրիր, Սուրարի, Սուրարտու) երկրի վերաբերյալ տեղեկությունները բույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել այդ երկրի տեղորոշման մասին: Մասնավորապես,

ա) Ալյարի Լուգալանիմունդու արքայի (Ք.ա. XXIV դ.) արձանագրության մեջ արևելքից արևմուտք՝ շրջանաձև հերթականությամբ հիշատակվում են Էլամը, Մարխաշին, Գուտիումը, Սուրիրը, Մարտուն: Լագաշի էանատում արքայի արձանագրություններից երեքում հիշատակվում է Սուրուր երկիրը, որոնցից մեկում Էլամի և Ուրուայի, մյուս երկուսում՝ միայն Էլամի հետ¹:

բ) Նարամ-Սուեն (Ք.ա. XXIII դ.) արքայի՝ Սուրուր (Սուրարտու) երկրի դեմ ուղղված արշավանքի ընթացքում երկու գորքերի միջև ճակատամարտ է տեղի ունեցել Թալմուս բնակավայրի մոտ (Սուրուրի հարավային շրջանում կամ Սուրուրից հարավ), որը գտնվել է ներկայիս Ջերասիյահի մոտ, Խոշր գետի ափին, Մոսուլից 40 կմ հյուսիս²: Նույն արքայի մեկ այլ արձանագրություն Սուրարտուն և Վերին երկրները, որպես նվաճված և հարկատու, հիշատակում է դեպի Թալխադում կատարած արշավանքի ընթացքում³: Թալխադումը նույնացվում է Քանեշի բնագրերում հիշատակվող Թալխաթի⁴ հետ և տեղադրվում ներկայիս Թեկ Դյուլյուք հնավայրի տեղում՝ Այնթապից 11 կմ հյուսիս⁵:

գ) Նարամ-Սուենի մի շարք արձանագրություններ վկայում են Սուրարտուի հարավային Ագուխինում բնակավայրի

¹ Ungnad, 1936, էջ 38-39; Gelb, 1944, էջ 34; Kramer, 1963, էջ 309-310:

² Hirsch, 1963, էջ 21-22; RIM-SGP, էջ 88-90 («միջանոս» տեղանունը ժամանակին ընթերցվել է «նիմուս/շ»):

³ RIM-SGP, էջ 129-131:

⁴ Garelli, 1963, էջ 95-96 հղումներով համոզիվ:

⁵ RIM-SGP, էջ 129-130:

մասին¹, որը հիշատակվում է նաև Մարիից, Թեյլ ալ-Ռիմահիից և Քաննեշից («Ուս/զուխիմում» տարբերակով) գտնված քնագրերում և տեղայնացվում է Խարուրի եռանկյունում արևելքում, Ռած/գամից ոչ եռու²:

դ) Ք.ա. III հազարամյակի մեկ այլ քնագիր ավելի որոշակի պատասխան է տալիս մեզ հետաքրքրող հարցին՝ հիշատակելով «Սուբարտու երկիրը՝ Վերին ծովի ափերին...»³, այսինքն՝ Վանա լճի ավազանում:

Այսպիսով, Սուբուր (Սուբիր, Սուբարի, Սուբարտու) երկրի տեղորոշման արդյունքում բավական մեծ մի տարածք՝ Վանա լճի ավազանը (հարավում սահման ունենալով Թալմուս-Ազուխիմում գիծը), որը Ուրմիտ լճի ավազանով աղեղնաձև ձգվում է Չագրույան լեռներով դեպի հարավ⁴:

**3. ԱՐՄԱՆՌՈՒՄ, ԱՐՄԻ
ԵՐԿՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՂՈՐՈՇՈՒՄ
ԸՍՏ ԱԶԱԴԱԿԱՆ ԵՎ ԷՐԼԱՅԱԿԱՆ ԱԳՐՅՈՒՐՆԵՐԻ**

Աքադական արձանագրությունների Արմանում (-ում մասնիկը արադերենի ուղղական հղովի վերջավորությունն է, նույն արքայի մասին պատմող խեթական քնագրում երկրանունն է «Արմանի») երկրի տեղադրության խնդիրը դարձել է երկարատև և բուռն քննարկումների առարկա: Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝

- Արման(ի/ում) երկիրը հնագույն Հայաստանն է⁵:

¹ RIM-SGP, էջ 86, 124-125: Նկատենք, որ Սուբարտուի արքայի անվան (Թախիշ-աքիլի) առաջին բաղադրիչը նույնանուն է Հայաստայի տեղանուններից (Թախիսիչա և Թախիշնա, տես Քոսյան, 2004, էջ 94):

² Garelli, 1963, էջ 90-92; RIM-SGP, էջ 124-125՝ հղումներով հանդիսով:

³ RIM-SGP, էջ 162-163:

⁴ Հմմտ. Gelb, 1944, վերջում գիտնելված քարտեզը:

⁵ Կա բյուր պատկերացում, թե այս տեսակետի ստեղծողներն ու պաշտպանները ձեղել են հայազգի գիտնականները, ինչն անտեղյակության հետևանք է: 1920-1930-ական թթ. այս տեսակետը ձևավորող գիտնականները, բացառությամբ Գ. Գարամիշիլյանի, ընդուն այլազգիներ էին,

- Արձան(ի/ուժ)ը գտնվել է Հյուսիսային Սիրիայում և որևէ կապ չունի Հայաստանի հետ¹;

Իսկ Ն. Ադոնցը 1930-ականների վերջին գրած «Հայաստանի պատմություն» աշխատության էջերում մերժում էր Արձանի-Հայաստան կապը (Ադոնց, 1972, էջ 26-27): Դեռևս 1926 թվականին Յ. Հոմմելը, տեղորոշելով Արձանը Ջազոսի արևմտյան վիշեքին, Ջեքի-Խամբինի շրջանից արևելք, կապ է տեսնում վերջինիս և Հայաստանի «Արմենիա» անվան միջև (Hommel, 1926, էջ 295): 1929 թ. Գ. Գարանձիկյանը հասնելու նկատվելով Արձանին Բեհիստունի արձանագրության Արմինայի հետ նույնացման տեսակետով (Գարանձիկյան, 1929, էջ 287-288): 1934 թ. քննելով Դիարբեքիի մոտակա Փիր-Հուսեյն հնավայրից գտնված Նարամ-Սուենի արձանագրությանը կորողը Է. Ունգերն արտահայտվում է հոգուտ Արձան(ի/ւժ)-Հայաստան կապի, նշելով Յ. Հոմմելի կարծիքի իրավացիությունը (Naab und Unger, 1934, էջ 44-45): 1937 թ. արադական աղբյուրների Արձանին նույնացվում է Ուրարտուին և երկուսն էլ համարվում են օտարների կողմից Հայաստանին տրված անվանումներ (Rigg, 1937, էջ 416-418):

Արձանին Հայաստանի հետ նույնացնելու տեսակետը գնալով ավելի էր (և է) քաղաքագիտություն տեսնում այդ տեսակետը պաշտպանեցին Ե. Ջասունին (Ջասունի, 1950, էջ 28-29), Ա. Ալադյանյանը (Ալադյանյան, 1950, էջ 9, նաև՝ ներդիր քարտեզը), Հ. Ժամկոչյանը (Ժամկոչյան, 1961, էջ 116-120), Լ. Բարսեղյանը (Բարսեղյան, 1964, էջ 324-328), Ա. Կիձիչինը (Կեփուտ, 1965, էջ 65), Վ. Խաչատրյանը (Նասրյան, 1971, էջ 106-107), Մ. Գավորչյանը (Գավորչյան, 1973, էջ 7-32; Գավորչյան, 1982, էջ 33-43), Վ. Վ. Իվանովը (Հոսոտ, 1983, էջ 32-33, կապելով այն Էրլայի քնազրեքի Արմիի հետ), Ռ. Իշխանյանը (Իշխանյան, 1988, էջ 42-47), տողերիս հեղինակը (Մովսիսյան, 1993, էջ 113-127), Վ. Մարթոսյանը (Մարթոսյան, 1994, էջ 255-259) և արիշներ:

¹ Տեղադրվել է հիմնականում Հաջնի (խաղվան կամ Խաղման) շրջանում (UET, I, էջ 80; Մոցոն, 1936, էջ 51, ծմբ. 2; Ադոնց, 1972, էջ 26-27 (ինսպարտը էր համարում Արձանիի նույնացումը Հալեպի (Խաղվան) կամ աստվածաշնչյան Հելաննի հետ); Gelb, 1944, էջ 103, ծմբ. 51 (դրամ հեղինակը նշում է այս տեսակետը պաշտպանած Մ. Մմիթի, Յ. Ալիի, Է. Եփայզեթի և իր մասին մի աշատանքի մասին, հայտնելով, որ վերանայում է իր կարծիքը՝ հոգուտ օարևելատիգրիտյան Արձանիի»); Hrozny, 1947, էջ 110 (որը վերանայել էր 1929 թ. հայտնած իր տեսակետը); Gadd, 1966, էջ 12, 28 (նաև էջ 12, ծմբ. 2-ում եղված գրավանդությունը); Matthiae, 1977, էջ 192; Matthiae, 1980, էջ 176-177; Foster, 1982, էջ 34 (Եփրատի ավին, Երլա-Միսլաթ ուղղության վրա) և այլն :

- Արման(ի/ում)ը նույնացվել է Բաբելոնի և Ասորեստանի սահմանին հիշատակվող Արման-Ակարսայի տեղանվան հետ, որը գտնվել է Ջագրոսի արևմտյան փեշերին, Բաբելոնից հյուսիս-արևելք¹:

Կան ուսումնասիրողներ, որոնք ձեռնպահ են մնում այս խնդրի վերաբերյալ վերջնական կարծիք հայտնելուց²: Մասնագետների զգալի մասը (այդ թվում՝ հիշատակվածներից շատերը) նշում են Արման(ում) անունով երկու երկրների գոյության մասին (արևելյանը՝ Տիգրիսից արևելք, Արման-Ակարսայի շրջանում, արևմտյանը՝ Սիրիայի հյուսիսում)³:

Առանձին-առանձին կանգ չառնելով հայտնված տեսակետների քննության վրա, ստորև կվկայակոչենք միայն սկզբնաղբյուրների հաղորդումները և կքննենք դրանք:

ա) Արման(ի/ում) երկրի տեղադրության տեսակետներից չափազանց արժեքավոր է Սարգոն Արաղացու (Ք.ա. 2334-2279 կամ 2316-2261 թթ.) տերության աշխարհագրությանը վերաբերող նոր ասուրական բնագիրը, որում արտահայտություն են գտել նաև Ք.ա. II հազարամյակի իրողությունները⁴: Բնագրի համաձայն՝ «*Էրլայից մինչև Բիթ-Նանիայ Արմանի երկիրն է*»⁵: Բիթ-Նանիայը, դատելով առկա փաստերից, գտնվել է Նուգիի շրջանում⁶: Արման(ի/ում) երկրի համար գծագրվում է քաղաքական սեռ մի տարածք, որը համեմա-

¹ Albright, 1925, էջ 212-214; Hommel, 1926, էջ 295; Hrozný, 1929, էջ 71-72; Güterbock, 1938, էջ 73-75 և այլն:

² Տե՛ս, օրինակ, HUB, էջ 250; RIM-SGP, էջ 132:

³ Տե՛ս, օրինակ, UET, I, էջ 79-81; Ադունց, 1972, էջ 26-27 (նշում է երկր Արման(ի)՝ Խալվան-Արմանին, արաղական պետության «արևմտյան սահմանների մոտ» գտնվող Արմանին, որը հիշվում է Նարամ-Սուենի դեմ դաշնակցած 17 երկրների շարքում, Արման-Ակարսային); Gelb, 1944, էջ 103; Weidner, 1952-1953, էջ 12-13 և այլն:

⁴ Բնագիրը՝ համաձայնաձայն վեցուրտությանը՝ տե՛ս Albright, 1925, էջ 193-245; առավել ճշգրտված՝ Weidner, 1952-1953 էջ 1-24: Հայերեն քարգնամությունը տե՛ս Հավիվիան, N 9:

⁵ Weidner, 1952-1953, էջ 4-5, 12-13:

⁶ Astour, 1992, էջ 30:

տելի է Սուրուր (Սուրարսու) երկրի տեղորոշմամբ պարզաբանված տարածքի հետ:

բ) Արմանիի տեղորոշման համար կարևոր նշանակություն ունի Նարամ-Սուենի՝ դեպի հյուսիս կատարած արշավանքի մասին վկայող «Նարամ-Սուենն ու իր բշնամիները» կոչվող խեթերեն բնագիրը: Այն հաղորդում է միջագետքի արքայի դեմ ելած հյուսիսային տասնյոթ երկրների դաշնության մասին: Երկրներից ու նրանց արքաներից մի քանիսի անունները չեն պահպանվել, իսկ ընթերցվող երկրանունները հետևյալներն են. Գուստա, Պակկի..., Ուլլիվի¹, ..., Խարթի², Կանեշ³, Պուրուշխանդա⁴, Ամուրու⁵, Պարասի⁶, ...:

¹ Ուլլիվի երկիրը հիշատակվում է խեթական, ասորա-բաբելոնյան ու Կանի քաղաքությունքան սեպագիր արձանագրություններում՝ Ուլլիվանդա, Ուլլիբի և Ուլլիբամի տարբերակներով: Այն տեղադրվում է Հայաստանի իսթրալ-արևմուտքում՝ Նուրի բնակավայրի տեղում, Պարսերիլից արևելք (Hrozny, 1929, էջ 70-71 (նդում է նաև Է. Ֆորերին); Բարսեղյան, 1962, էջ 87-90; Xaxarova, 1971, էջ 104-107; АВНИУ, N 26, 42, 43; ТУ, էջ 150-151, 445 և այլն):

² Խարթին խեթական պետության անվանումն է, որի մայրաքաղաքը գտնվել է այժմյան Բուրսայի շրջանի տեղում (Անկարայի մոտ):

³ Գտնվել է Կեսարիա (Մածաք) քաղաքի մոտ՝ այժմյան Էլուլ-Յեֆի հնավայրի տեղում:

⁴ Գտնվել է Կրիկյան Տալլուսի և Հալիս գետի ոլորանի միջև, Տուզ լճի մոտ:

⁵ Ամուրուն կամ Մարուն ամորիացիների երկրի անվանումն է (հայտնի նաև Ասուվածաշնչից), որը գրադեցրել է Եունիթից և Աբադից արևմուտք ընկած տարածքները: Կարծիք է հայտնվել, որ նման հնավությունքան վրա հասելով քի կնքված լինեք ուսզմական դաշինք, նաճանավանդ որ Ամուրուի տարածքն արդեն պետք է նվաճված լինեք Նարամ-Սուենի կողմից: Այդ դեպքում հնարավոր է Ամուրուն նույնացնել Մարդոն Թ-ի հիշատակած Ամուրուի հետ (АВНИУ, N 46 (178)), հետագա Փոքր Հայքի Ամարայի (Համարա), որը գտնվել է Սեբաստիայի նահանգում, Տերիկ քաղաքից ոչ հեռու (Երեմյան, 1963, էջ 62; ՀՀՏՏԲ, 1986, էջ 282):

⁶ Պարասին նույնացվել է Բարասիշի (Պարասիշի), Պարսու և Պարսուա (Պարսուաշ) երկրանունների հետ (Hrozny, 1929, էջ 70-71; Գարանիլիան, 1929, էջ 286-287): Առաջին երկուսը տեղադրվում են Էլամի և իսթրալից տարածքներում: Ավելի հավանական է թվում Պարասիի նույն

Արմանի, Մայրիների լեռներ (Ամանոս)¹, ..., Լարակ, Նիկ-
կի, Թուրկի², Կուրսատրա³: Գաշինքի մեջ մտած երկրները
գտնվել են Փոքր Ասիայի արևելյան, Հայկական լեռնաշխար-
հի արևմտյան և դրանց հարակից հարավային շրջաններում:

Այս բնագրի Արմանի երկրանվան տեղորոշման համար
խիստ օգտակար է խեթական Թուրխալիաս Դ արքայի (Ջ.ա.
XIII դար) տարեգրությունը, որում Արմանա և Ուլլիվանդա
երկրանունները հիշատակվում են միասին: Ուլլիվանդան,
ինչպես նշվեց, Նարամ-Սուենի դեմ էլած Ուլլիվին է՝ ասու-
րա-բաբելական և Վանի թագավորության աղբյուրների Ուլ-
լիբին և Ուլլիբանին (տեղանվան վերջին -անդա մասնիկն ու-
նի խեթական ծագում), որը գտնվել է Կիայիբեբիից արևելք,
Կուլի բնակավայրի տեղում⁴: Ուլլիվի-Ուլլիվանդա-Ուլլիբի-
Ուլլիբանիի հարևանությամբ Արմանիի վկայվելը խեթական
բնագրում ցույց է տալիս վերջինիս՝ Հայկական լեռնաշխար-
հի հարավ-արևմուտքում գտնված վիճելը:

գ) Եփրատի վերին հոսանքի երկրները նվաճելու մասին է
պատմում Նարամ-Սուենի ամենամտախալուն արձանագրու-
թյուններից մեկը (նույնպես մեզ հասած հինբաբելոնյան շրջա-

նացյունց ասուրա-բաբելական և Վանի թագավորության արձանա-
գրություններում վկայված Պարսուա (Քարսուա, Պարսուաշ) երկրի
հետ, որը գտնվել է Ուրմիա լճի հարավակողմում՝ Մանա երկրի հարևա-
նությամբ (տե՛ս նաև ԿՄ, էջ 55՝ հղված աղբյուրներով):

¹ Ամանոսի լեռները գտնվել են Կիլիկյան Տավրոսի հարավ-արևելյան
կողմում (Հյուսիսային Սիրիայի արևմուտքում):

² Թուրկին (Թուրուկի/ու) թագմիսա հիշատակվում է սուսյավորասիական
բնագրերում, տեղադրվում է Ասորեստանից հյուսիս, Տագրոսի հյու-
սիսային լեռնաճյուղերին (ABIMY, N 1, մմբ. 11) և, հավանաբար, իր ա-
նունն է թողել Վանի մահաճգի Հաջրոսի գավառի Թուրկունիս բնակա-
վայրին, Մեծ Ջաթ գետի աջակողմում (ՀՀԸՏԲ, 1988, էջ 499):

³ Կուրսատրա երկիրը, եղևելով այդ տեղանվան վերջին՝ -ուրա թաղաքի-
չի խեթա-լուվիական բնույթից, կարելի է տեղադրել Փոքր Ասիայում: Է.
Ֆրոբերն այն նույնացնում է Հալիս գետից հարավ գտնվող Գարսատրա
բնակավայրի հետ, ինչն անհավանական է համարում Բ. Հրոզնին
(Hrozny, 1929, էջ 73; տե՛ս նաև Ջահուկյան, 1987, էջ 335, 337):

⁴ Մատթոթ, 1971, էջ 104-107; ԿՄ, էջ 150-151, 445:

նի կրկնօրինակով)։ «Թանի որ երբևէ՝ մարդկության արարու-
մից ի վեր, ոչ մի բազավոր չէր կործանել Արմանումն ու Էր-
լան, Ներգալն՝ (իր) գեներով ճանապարհի բացեց Նարամ-
Սուենի՝ հորդի համար, և տվեց նրան Արմանումն ու Էրլան։
Եվ նա տվեց նրան Ամանուց՝ Մայրինների լեռը, ու Վերին ծո-
վը։ Ընդդիմով Դագանի՝՝ գեներների, որը մեծացնում է նրա բա-
զավորությունը, Նարամ-Սուենը՝ հորդը, մվածեց Արմանումն
ու Էրլան։ Եվ Եփրատի ափից մինչև Ուլիշում նա քանդակեց
մարդկանց, ում Դագանը նվիրել/տվել էր նրան ի սկզբա-
նե...»։ Արձանագրության շարունակության մեջ նշվում է նաև
Արմանումի արքա Ռիդ/2-Թեշուրին (Ռիդ/2-Աղադին) գերելու,
նվաճված տարածքում ամրոց կառուցելու և Նարամ-Սուենի
պատկերով ու արձանագրությամբ կորոզ կանգնեցնելու մա-
սին¹։

Արձանագրությունից պկնհայտ է, որ Արմանումի և Էրլա-
յի նվաճումը Նարամ-Սուենի տիրապետությունը հասցրել է
մինչև Ամանու և Վերին ծով, որը Վամա լիճն է (Միջերկրա-
կան ծովը արադական աղբյուրներում կոչվում է «Արևամու-
տի ծով», «Արևամտաի մեծ ծով», «Մեծ ծով»)։ Աքադի արքա-
յի տիրապետությունը մինչև Ամանու հասել է Էրլայի նվա-
ճումով, իսկ մինչև Վամա լիճ, բնականաբար, պետք է հաս-
ներ Արմանումի նվաճման շնորհիվ։ Ի դեպ, Նարամ-Սուենն
իրոք կառուցել է ամրոց Քեյլ Բրաբ հնավայրի տարածքում,
որի պեղումներից գտնվել են նրա անունը կրող արձանա-

¹ Ներգալը միջագետքյան դիցարանության անդրաշխարհի աստվածն էր
(Adapa-asadu (a), 1992, էջ 212)։

² Արևմտասեմական աստված (արադական, ուգարիթյան աղբյուրներում՝
Դագան, փյունիկյանում՝ Դագոն), որը դատուիով անվան աստվաթա-
նությունից՝ սկզբնապես եղել է երկրագործության կամ ձկնորսության
նովանտիոր, արադական դիցարանության մեջ գրագաղթել է Ալադի և
Էնլիլի հետ՝ համարվելով ռազմի, զերագույն աստված (Adapa-asadu,
1991, էջ 346)։

³ UET, I, էջ 74-76; Hirsch, 1961, էջ 20-21, 73-77; ANET, էջ 268; IRSA, էջ
107-108; Foster, 1982, էջ 27-36; RIM-SGP, էջ 132-135; Մատթեոսյան,
1994, էջ 255-256 և այլն։

գյուրջյամք յոր կնիքներ¹, և թողել իր պատկերով ու արձանագյուրջյամք կորոզ Դիարթեքիի մոտ գտնվող Փիր-Հուսեյն հնավայրում², Թեյլ Բրաք և Փիր-Հուսեյն հնավայրերն, իսկապես, գտնվում են Ուլիշում-Ամանոս-Վերին ծով եռանկյունու կենտրոնում: Հեռևաբար, Արմանում երկիրը պետք է գտնվեր Վանա լճի և Եփրատի միջև ընկած տարածքում:

դ) Նարամ-Սուենն իր որոշ քնագրերում համոզես է գալիս «նվաճողն Արմանումի և Էրլայի» տիտղոսով³: Էրլայի քնագրերում Արմին երբեմն հիշատակվում է Էրլայի հետ (Eb-la⁴ wa Ar-mi⁵), որը քազմաքիվ ուսումնասիրողներ իրավամբ համադրում են արադական աղբյուրների Արմանումի ու Էրլայի հետ⁶: Դա, սակայն, դարձել է Արմանումի՝ Հալեայի շրջանում տեղադրման կամ Հալեայի հետ մույնացման հիմնական փաստարկը (Էրլան գտնվում էր Հալեայից շուրջ 55 կմ հարավ, դեպի արևմուտք), ինչը չի դիմանում փաստերի քննադատությանը: Մարզոն Արադացին արձանագրություններից մեկում հաղորդում է, որ նվաճել է Եփրատից արևմուտք գտնվող երկրները՝ «Մարին, Յարմուտին⁷ և Էրլան՝ մինչև Մայրինների և Արծաթի լեռները»⁸ (տե՛ս ներդիր-քար-

¹ Hirsch, 1963, էջ 19; RIM-SGP, էջ 125-126:

² RISA, էջ 140-141 (քնագրի սառչին հրապարակումների հղումներով): կորոզի գտնվելու հանգամանքները և քնութագրական մանրամասները տե՛ս Naab, Unger, 1934, էջ 5-48, սղ. 1-IV: Արձանագրությունն ունեցել է քազմաքիվ վերահրատարակումներ (օրինակ, RIM-SGP, էջ 128-129, Մովսիսյան, 2003 (ա), էջ 173-174):

³ SAKI, էջ 166-167; UET, I, էջ 74-76; RISA, էջ 138-141; Hirsch, 1961, էջ 20-21, 73-77; ANET, էջ 268; IRSA, էջ 106-108, 111; Foster, 1982, էջ 27-36; RIM-SGP, էջ 132-136, 166-167; Մաաթեոսյան, 1994, էջ 255-256 և այլն:

⁴ Sh, օրինակ, Matthiae, 1977, էջ 192; Matthiae, 1980, էջ 176-177; Hanoos, 1983, էջ 32 և այլն:

⁵ Մարին գտնվել է Եփրատի ափին, գետի միջին հոսանքի շրջանում, իսկ Յարմուտինն մույնացվում է Միջերկրական ծովի ափին, Քիլիկիայի ոչ հեռու գտնվող Յարմուտայի հետ (Röllig, 1977(b), էջ 266-267):

⁶ RISA, էջ 108-111; Hirsch, 1963, էջ 37-39, 49-50; IRSA, էջ 99; RIM-SGP, էջ 28-31:

տեղեր 3-4-ը), այսինքն՝ Եփրատից արևմուտք ընկած տարածաշրջանը մինչև Տավրոսյան լեռներ, որտեղ չի հիշատակվում Արմինուսը: Արմինուսի՝ Հալեպի հետ նույնացումը լիովին անհիմն է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ Էրալական բնագրերը Արմինից անկախ հիշատակում են Հալեպը՝ Խալաթի ձևով, այն նույն կերպ հիշվում է նաև Մարիից գտնված բնագրերում¹:

և) Արմին բազմիցս հիշատակվում է Էրալի բնագրերում (Ջ.ա. XXVI-XXIII դդ.): Դրանցից մեկում Արմին նշվում է Էրալից և Դուլու քաղաքից հետո²: Դուլու քաղաքը սովորաբար հիշվում է Ուրսամից (Ուրշուից)³ հետո և Իրիթումից⁴ ու Խառանից առաջ⁵: Այսինքն՝ այդ քաղաքը գտնվել է Ուրսամի և Խառանի շրջանում: Էրալ - Դուլու - Արմին հաջորդականությունը հուշում է, որ վերջինս պետք է գտնվեր առաջին երկու բնակավայրերը կապող զծի ուղղության վրա, այն է՝ Եփրատի Հայկական Տավրոսով անցման շրջանում և/կամ հարակից տարածքներում: (Հիշենք, որ այս տարածքը համապատասխանում է արադական աղբյուրների Արման(ում)ին, և հենց այս տարածքում՝ Գիարբերիթի մոտ է Նարամ-Մունենը կանգնեցրել իր հաղթակոթողը: Այդ շրջանում է տեղադրվում նաև խեթական աղբյուրներում Ուլիվանդայի հարևանությամբ հիշված Արմանա երկիրը):

¹ Գաբառ, 1985, էջ 286:

² Գաբառ, 1985, էջ 286-287:

³ Հիշատակվում է հիմարենյան բազմաթիվ աղբյուրներում, հետագայի Ուրնա (Ուրնա-եղիսիա) քաղաքն է (Pettinato, 1979, էջ 279-ում հղված բնագիրը, Գաբառ, 1985, էջ 281-282; Արս, 1985, էջ 298-299):

⁴ Մարիի բնագրերում հիշատակվում է Լե-րի-սի, խեթական աղբյուրներում՝ Լե-րի-տե/ե, Ալալախի և միջինասորական բնագրերում՝ Լե-րի-սի տարբերակներով: Տեղադրվում է Նաբրեմիշի և Խառանի միջև, ենթադրաբար նույնացվում է ներկայիս Օրդի բնակավայրի հետ (տես՝ Hawkins, 1977, էջ 171; Pettinato, 1979, էջ 277-ում հղված բնագիրը, Գաբառ, 1985, էջ 283; Արս, 1985, էջ 298-299):

⁵ Գաբառ, 1985, էջ 286; Արս, 1985, էջ 298-299:

զ) Սեկ այլ քննազրուած¹ հիշվում են Արմիի երկու քնակիչ, որոնցից մեկն անվանված է Հայայի միջոնորդ (լիագոր): Այնուհետև, նույն քննազրուած հիշատակվում է Ազի տեղանունը (կամ, գուցե, ցեղանունը): Վերջինս ակնհայտորեն հիշեցնում է խեթական աղբյուրների Ազգի երկրանունը, որը «Հայասայի» համարժեքն է²: Մի ուրիշ քննազրուած Հայա անունը կապվում է Խուրիմու տեղանվան հետ, որը հիշատակվում է Ջաքարում, Ուրիգա, Ուրշու (Ուրսասում), Իրիթում, Խառան և Թիշում քաղաքներից հետո³: Այսպիսով, մի կողմից Արմիի հիշատակումն Ազիից առաջ, մյուս կողմից Արմիի կապվելը Խուրիմուի հետ Հայա ցեղանվան (հատուկ անվան) միջոցով, ինչպես նաև վերը բերված համադրումներից վկայում են, որ Երլայի քննազրուած հանդիպող Արմի երկրանունը վերաբերել է Հայկական լեռնաշխարհի տարածքին:

է) Արմիի՝ Հայկական լեռնաշխարհում գտնվելու անմերկա ապացույցն է այն փաստը, որ այն Երլայի քննազրուած առավել հաճախ հանդիպում է Ուրսասում (Ուրշու), Դուլու, Խառան, Ուրիգա/ու, Կակմ(ի)ում⁴, Խազուվան (Խասսու)⁵, Նագար⁶, Թուր⁷, Էսու (Էշու)⁸, Գուդադանում, Աբադիզ, Մա-

¹ Խեսոս, 1983, էջ 31-32:

² Կանաստ, 1956, էջ 11-64; Բոսյան, 2004, էջ 43-51 (իդիամ աղբյուրներով և ուսումնասիրություններով հանդերձ):

³ Խեսոս, 1983, էջ 32-33:

⁴ Տեղադրվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում, Մասնայի հարևանությամբ: Համուրապի արքայի (Ք.ա. 1792-1750 թթ.) գանակալուքյան 37-րդ տարում հիշատակվում է Սուբարտուի և Թուրուկիտի միջև (Röllig, 1977 (a), էջ 288-289):

⁵ Գտնվել է Հայկական Տափուսով Եփրատի անցման շրջանում (Szabo, 1973, էջ 136; Güterbock, 1973, էջ 137):

⁶ Հիշատակվում է նաև Մարիի քննազրուած, տեղորոշվում է Խարուք գետի ավազանում (Դաքոտ, 1985, էջ 281):

⁷ Գտնվել է Եփրատ գետի և Հալեսի միջև (Matthiae, 1979, էջ 115-118; Gordon, 1992, էջ 66):

⁸ Ելնելով տեղորոշումից և անունների խիստ նմանությունից՝ ենթադրոք է այս տեղանունը նույնացնել խեթական աղբյուրների Իսուվայի (Իշուվա, հնաագա հայկական աղբյուրների Մուլը) հետ: Չի բացառ-

նույնպես, էրալ և այլ բնակավայրերի հետ, որոնք բոլորն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհի հարավում, հարավ-արևմուտքում և կից շրջաններում:

Է) Նարամ-Սուենի մասին բնագրերից մեկը պատմում է Սիմուրրումի դեմ տարած հաղթանակի և Սիմուրրումի ու Արամե երկրի տիրակազներին գերեզարելու մասին¹: Ուշագրավն այն է, որ Նարամ-Սուենը հաղթում է Սիմուրրումին, Արամե երկրի նվաճման մասին խոսք չկա, քայց գերեզարվում են երկու երկրների տիրակազները: Դրանից կարելի է եզրակացնել, որ Արամե երկիրը գտնվել է ավելի հեռու (տվյալ դեպքում՝ հյուսիսում), նրա առաջնորդը եկել է Սիմուրրումին օգնության, սակայն անհաջողություն է կրել վերջինիս տիրակալի հետ միասին: Սիմուրրումը հիշատակվում է մաև հինարևելյան այլ սկզբնաղբյուրներում և տեղադրվում է Փոքր Չարի միջին հոսանքի շրջանում, ժամանակակից Ալբին-քյոփրյու հնավայրի տեղում: Արամե երկրին, որն ավելի հյուսիսում է գտնվել, իր տարածքով ու անվամբ կարող է համապատասխանել Ուրի III հարստության արքա Շուլգիի մի բնագրում հիշվող Արամի², Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծով բվագրվող Աշուրից գտնված խաթա-խեթական երկլեզու մի արձանագրության Ուրամի³, հինբաբելոնյան աղբյուրներում հիշատակվող Արամուի, որը Մուրարուտի մասն էր կազմում⁴, Վանի քազավորության (Ուրարտու)

վում մաև, որ այն կապ ունենա հետագա Մեծ Հայքի Մոկաց աշխարհի Իշաքր, Միս Իշաքր և Իշոց գավառների հետ (Երեմյան, 1963, էջ 46, 54, 108, 117):

¹ «Տարին, երբ Նարամ-Սուենը Կիրաշենիվեում հաղթեց Սիմուրրումին և գերեց Բաբելոնի Սիմուրրումի կառավարչին, (և) Գուրուլին՝ Արամի կառավարչին» (RIM-SGP, էջ 87): Սիմուրրումի կառավարիչ Բաբան հիշատակվում է մաև մի խիստ վնասված արձանագրության մեջ (RIM-SGP, էջ 144-145):

² Finkelstein, 1955, էջ 2:

³ Haanon, 1983, էջ 30-31:

⁴ Finkelstein, 1955, էջ 1-2:

արքունական Արամայի (Արմարիլի) երկրի¹ հարավակողմին կամ Մանայի բազավերություն Արմաիդ (Արմեդ, Ուրմնյատե) քաղաքի շրջանին²: Պատահական չէ, որ Ք.ա. III հազարամյակի Արամ(ե) երկիրը մի շարք ուսումնասիրողներ նույնացնում են Արման(ի/ում)ի հետ³: Ուստի մեծագույն հավանականությամբ Արամ երկրանունը պետք է կապել հայկական ավանդության Արամին, որի անունով էլ, ըստ Պատմահայր Խորենացու (գիրք Ա, գլուխ ԺԲ), օտարները կոչեցին մեր երկիրն ու ժողովրդին⁴:

ը) Երբ ի մի ենք բերում Արման(ի/ում), Արմի, Ար(ա)մ(ե) երկրանունների և դրանց տարբերակների հիշատակումները, տեսնում ենք, որ Ք.ա. XXVI-VI դարերում շուրջ երեք տասնյակ անգամ հիշատակվող «ար(ա)մ» հիմքով տեղա-

¹ Արամայի / Արմարիլի երկրի տեղորոշումը տես ԿՄ, էջ 30-31, 38-39:

² Արմաիդ (Արմեդ, Ուրմնյատե) քաղաքի տեղորոշումը տես ԿՄ, էջ 37-38:

³ Gelb, 1935, էջ 6; Lowy, 1950-1951, էջ 368-376; Կաթոստ, 1965, էջ 64-66:

⁴ Ինչպես իրավամբ նշում են բազմաթիվ ուսումնասիրողներ, Արամ(ե) երկիրը կապ չունի սենական արամեացիների հետ, քանի որ վերջիններս «սխլամուտ» անվամբ առաջին անգամ Հայկական լեռնաշխարհի հարավային մասույցներում հայտնվում են միայն Ք.ա. 14-րդ դարի վերջում (Thureau-Danin, 1911, էջ 199; Gelb, 1935, էջ 6; Finkelstein, 1955, էջ 2; Կաթոստ, 1965, էջ 71; Lipinski, 2000, էջ 25-30; Ավետիսյան, 2002, էջ 97-105, վերջին երկուսը՝ խնդրի ծանցամասնայի ընթացիկում): Հավանական չէ նաև այդ երկրի նույնացումը Աստվածաշնչից հայտնի (ՏՅՏՅ, 24, 10; 25, 20; 28, 2-7) Արամ Նահարայնի («Միջագետքի Արամ») կամ Պաղան Արամի («Արամի դաշտ») հետ (O'Callaghan, 1948, էջ 96; Moscati, 1957, էջ 168; Ավետիսյան, 2002, էջ 99): (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, նկատի առնվելով, որ սենական Արամը արամեացի-ասորիների նախնին է, հիշյալ տեղանունները թարգմանվել են «Ասորիների (Ասորական) Միջագետք»): Արամ Նահարայնի կամ Պաղան Արամը զունվել է Միջագետքի հյուսիս-արևմուտքում՝ Խարթը գետից արևմուտք, իսկ ընթացիկում երկիրը՝ Տիգրիսից արևելք, Մեծ և Փոքր Ջաբելի վերին հովտի շրջանում, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքում:

նունները¹ խմբավորվում են Հայկական լեռնաշխարհի հարավային և արևմտյան սահմանների լայնությամբ, այսինքն՝ այն տարածքներում, որոնց, լեռնաշխարհի հետ առնչվելիս, առաջին հերթին համդիպել են մեզ հասած հիշատակությունների հեղինակները: Փաստերի նման առատության պայմաններում չի կարելի ընդհանրություն չտեսնել աղազգիների կողմից Հայաստանին և հայերին տրված ամենատարածված «Այաննիա» ու «արմեն» անվանումների և նշված տեղանունների միջև²:

Անվտղվելով՝ տեսնում ենք, որ Ջ.ա. III հազարամյակին վերաբերող հաղորդումները ոչ միայն շն հակասում Արման(ի/ում)-Արմի-Ար(ա)մ(ե) երկրի հայաստանյան տեղդրշմանը, այլև այլընտրանք շն թողնում այդ երկիրը Հայկական լեռնաշխարհից դուրս տեղդրշելու համար:

4. Կ/ԳՈՒՏԻԱԿԱՆ ԵՐԿՐԻ ՏԵՆՈՐՈՇՈՒՄԸ

Կ/Գուտի(ում)³ լեռնային երկրի տեղդրշման հարցում ուսումնասիրողները բաժանվում են մի քանի խմբի: Մի խումբ ուսումնասիրողներ այն տեղդրում են Կորդվաց (Գորդին-

¹ Արդեն նշվածներից քսպի բազմաթիվ հիշատակություններ՝ աղյուսըների հղմամբ՝ տե՛ս Սեփոսյան, 1993, էջ 121-127:

² Ավելորդ չէ նաև նշելը, որ գալստը տե՛սակա՛ն արազացիների հեանորդները համարվող արաբները հայերին կոչում են «արմանի»:

³ Ջ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին Ջագրոսի արևմտյան վեշելին, Փարկունից կյոսիս-արևելք հիշատակվող Արման-Ակարսաղի կամ Ակարսաղի Արման քնակախարի անունն իսկ լինչպես նշել են որոշ նախորդ ուսումնասիրողները) ցույց է տալիս, որ այն տարբերվում է բուն, հիմնական Արման(ում) երկրից (այսինքն՝ «Արման, որ գտնվում է Ակարսաղի շրջանում») կամ, ըսվազույն ղնացրում, դա բուն Արման(ում) երկրի ծայրագավառն է, որն ընկած է Ակարսաղի շրջանում: Երկու ղնարտն էլ Ջ.ա. II հազարամյակում հիշատակված այդ տեղանունը չի հակասում Արման(ի/ում)-Արմի-Ար(ա)մ(ե) երկրի հայաստանյան տեղդրությունը:

⁴ «Արքին -ում մտանիկը արազերենի ուղղական հողովի ցուցիչն է, բուն երկրանունն է Կուտի կամ Գուտի»:

յան, ալ-Ջուդի) լեռների շրջանում կամ ավելի հյուսիս՝ Վանա լճի հարավում, արևելքում¹: Ունանց համաձայն կուտիական երկիրը գտնվել է Տիգրիս, Փոքր Ջար, Դիալա գետերի և Սուլեյմանիե լեռների կազմած քառանկյան տարածքում²: Գիտնականների մի ուրիշ խումբ այն տեղադրում է Չագրոսյան լեռներում՝ առանց որոշակիացման³: Մեկ այլ տեսակետի համաձայն, կուտիական երկիրը պետք է գտնված լինի Չագրոսի հյուսիսում, Ուրմիո լճի ավազանում՝ երբեմն ընդգրկելով նաև Կորդվաց լեռները⁴: Մեր խնդրից դուրս համարելով այդ տեսակետների քննարկումը՝ այստեղ կվկայակոչենք միայն սկզբնաղբյուրների հաղորդած տեղագրական տվյալները:

ա) Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ Նարամ-Սուենի դեմ հայտնի արշավանքից առաջ կուտիներն արդեն հաստատվել էին Խարուր գետի հովտում և Եփրատի միջին հոսանքի շրջանում⁵: Նշված տարածքը, սակայն, լեռնային չէ և այն կարող էր լինել աշխարհակալության ծավալման առաջին փուլի արտահայտություն, իսկ ո՞րն է այն լեռնային երկիրը, որտեղից նրանք կարող էին մուտք գործել նշված տարածք: Կուտիական տիրապետության ավարտի մասին պատմող

¹ Այս տեսակետը տարածում էր գտել անցյալ դարում և մեր դարի առաջին տասնամյակներին (տե՛ս Շտրեք, 1904, էջ 52; Масперо, 1911, էջ 156; նաև Дьяконов, 1956, էջ 104-ում նշված գրականությունը): Կուտիների երկիրը Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքում են տեղադրում Հ. Վինդլերը, նրան հետևելով Գ. Խալաթյանցը ու Լեոն (Винолтер, 1903, էջ 12; Халетянц, 1910, էջ 35-39; Լեո, 1966, էջ 176-177): Առանց նշելու սկզբնաղբյուրներ, Ա. Ղարիբյանը «Հայ ժողովրդի պատմության սկզբնավորման շրջանը» հոդվածում գրում է. «Գիտության մեջ հավանական է համարվում, որ Գոբիոմի անունը պահպանվել է «Խուր» կամ «Խուր» երկրանամի վրա...» (Ղարիբյան, 1946, էջ 14):

² Дьяконов, 1956, էջ 104-ի համապատասխան հղումները:

³ Shu, օրինակ, Меликшвили, 1954, էջ 118-120; Bottero, 1967, էջ 99; ЕАС, էջ 80 և այլն:

⁴ АВНИУ, N 1, ծմբ 1; Hall, 1952, էջ 186; Алнев, 1960, էջ 4 (տե՛ս նաև քարտեզը) և այլն:

⁵ Sauren, 1967, էջ 75-79; Hallo, 1971, էջ 719; հմմտ. ИДВ, էջ 77:

քնազրի քննության արդյունքը, ըստ որի Ուրուխեզալի զորքի հետ ընդհարվելուց հետո կոտիսացիները Միջագետքի հարավից իրենց երկիր էին նահանջում՝ գնալով դեպի հյուսիս¹: Այս տեղեկությունը կողմնորոշող, բայց ճշգրիտ տեղադրության համար անբավարար է:

բ) Աղաթի Լուզալամիմունդու արքայի (Ջ.ա. XXIV դ.) արձանագրության մեջ արևելքից արևմուտք՝ շրջանաձև հերթականությամբ, թվարկվում են Մայրիների լեռները², Էլամը, Մարիաշին, Գուտիունը, Սուքիրը, Մարտուն, Սուտիունը և Էաննայի երկիրը (այսինքն՝ Ուրուկի շրջանը)³: Նարամ-Սուենի մասին պատմող «Ջուրայի արքայի լեզնիցը» անունը ստացած քնազրի համաձայն՝ նրա դեմ գործող բանակը Ուման-Մանդայից⁴ մտնում է Սուրարտուի կենտրոն, միավորում «Շովերը» (յնա՝ Վանա և Ուրմիտ լճերը), ապա Գուտիունը⁵: Գուտիունը Սուքիր-Սուրարտուի հարևանությամբ է

¹ Sauren, 1967, քախտեզը՝ էջ 77:

² Հին միջագետքյան քնազրերում տարբերակվում են մայրիների հետ կապված մի քանի տեղանուններ: Ամանուսի լեռները Սարգոն Արադացու ժամանակաշրջանից են կոչվում «Մայրիների լեռներ», իսկ մինչ այդ մայրիների անվամբ են անվանակոչվել Իրանական սարահարթի արևմտյան և Հայկական լեռնաշխարհի հարավային որոշ շրջաններ (այդ առթիվ տես Կոեծոս, 1988, էջ 128-132): Տվյալ դեպքում «Մայրիների լեռները» գտնվում են Իրանական սարահարթի արևմուտքում (Էլամի հարևանությամբ):

³ Ugnad, 1936, էջ 36-37; Gelb, 1944, էջ 33-34:

⁴ Ումման-Մանդան հիշատակվում է էփնարեկյան բազմաթիվ քնազրերում (տես Կոմորեցի, 1977, էջ 43-67՝ համեզամանալի հղումներով): Ջ.ա. I հազարամյակում այն ալեյի շատ համընթաց է գալիս իրրև հյուսիսի ննդեկորսական աշխարհի ընդհանրական անվանում (Կոմորեցի, 1977, էջ 43-51), իսկ ալեյի վաղ շրջանի քնազրերում՝ որոշակի տարածքի, որը կենթյվում էր մարտիկական մասին խեղճական աղբյուրների վերլուծությունից՝ Գր. Նավանդյանը կապում է հայկական Մանդակունի տոհմական հետ, այն տեղորոշելով Արածանիի վտակ Ընդգյուտի ավազանում (Կատառտ, 1956, էջ 136-141): Այս տեղորոշումը լիովին համապատասխանում է նաև քննարկվող քնազրի աշխարհագրական վերլուծությանը:

⁵ Gurney, 1955, էջ 101:

հիշատակվում մահ Բարեչոնի Համմուրայի արքայի (Ջ.ա. XVIII դ.) արձանագրություններում¹: Այս տեղեկություններից հետևում է, որ Գուտիումը գտնվել է Սուրիյ-Սուբարտուի, Վանա և Ուրմիտ լճերի ավազանների հարեանոթյամբ:

գ) Կուտիական երկրի ճշգրիտ տեղորոշման համար մեծ արժեք ունեն Ջ.ա. XIV-XIII դարերի ասորեստանյան արձանագրությունները: Ասորեստանի արքա Աշադներարի Ա-ն (Ջ.ա. 1307-1275 թթ.), փաստաբանելով իր հայր Արքիդեմիլոտ արքային, քվարկում է նրա կատարած նվաճումները Թուրուկի երկիրը, կուտիների երկիրը (քնազքում՝ կուտիական լեռների բոլոր տիրակալներին), Կուտսուխի² երկիրն ու նրա բոլոր դաշնակիցներին³: Այսինքն՝ կուտիների երկիրը պետք է փնտրել Կադմեա տան և Հաքյարի զավանի միջև: Ասորեստանի Սալմանասար Ա-ն (Ջ.ա. 1274-1245 թթ.) արձանագրում է, որ իր դեմ ապստամբած կուտիների («որոնք անհաշիվ են, ինչպես աստղերն երկնքում») տարածքները ձգվել են մույն Կադմուխից մինչև Ուրուասարի երկրի սահմանը: Թուկույի-Նիմուրթա Ա-ն (Ջ.ա. 1244-1208 թթ.) իրեն փաստաբա-

¹ Ungnad, 1936, էջ 46-49; Gelb, 1944, էջ 41; ANET, էջ 270:

² Կուտսուխին (Կադմուխին) հայկական Կադմեա տունն է և գտնվել է Արևմտյան Տիգրիսի ու միացյալ Տրոֆիսի կազմած անկյունում (ԿԿ, էջ 98-99):

³ ABNHY, N 1; Նույն քնազքում ինքը՝ Աշադներարին ներկայանում է իբրև «կասիթների, կուտիների, լուլամների և շոբարեցիների հզոր ցեղերին (կամ զորքերին) ոչնչացնող»: Կասիթները Կաշու (Կասու) երկրի քնակիչներն են, որոնք Ջ.ա. XVIII դարում արշավանքներ կազմակերպեցին դեպի Բարեչոն, իսկ XVI-XII դարերում զբաղեցրին Բարեչոնի գահը: Մեր կարծիքով Կաշուն կարող է կապվել Հայկական Տավրոսից հարավ, մրան զուգահեռ ձգվող Կաշխարի (-ի մասինիլը տեղանվանակերտ է) լեռների հետ: Լուլամն մույն Լուլուսի երկիրն է՝ Ուրմիտ լճից հարավ Ըուրասին (Ըուրքիան) գրայեցրել է Արևմտյան Տիգրիսի հովիտը: Այսինքն՝ կուտիական երկիրը պետք է փնտրել Կաշխարի և Հայկական Տավրոս լեռների միջնատարածքից մինչև Ուրմիտ լճից հարավ ընկած տարածության վրա:

⁴ ABNHY, N 2:

նում է որպես «անհնազանդ ուկրաճանուցիներին (Կումանու¹ երկրի ժողովրդին) և բարխեցիներին², Կաղմոխի երկրին ու կուտիների զորքը ղեկավարող չարագործներին ոչնչացնող³»: Նույն արքայի մեկ այլ արձանագրության մեջ մեզ հայտնի երկրներից բացի կուտիների հարևանությամբ հիշվում է Մեխրի (Մեքրի) երկիրը, որը գտնվել է Տիգրիսի վտակ Արևելյան Խարուրի հովտում, Մեհրի-ճար լեռան շրջանում⁴: Ամփոփելով Ասորեստանի արքաների հաղորդումներից տեսնում ենք, որ կուտիների երկիրը պետք է փնտրել Կաղմուխի, Բարխի, Կումենուի, Ուրուտրի, Թուրուկիի և Մեխրիի հարևանությամբ: Իսկ այդ երկրները քարտեզի վրա շրջան են կազմում, որի կենտրոնը ճիշտ և ճիշտ համընկնում է Մեծ Հայքի Կորդվաց աշխարհի (Կորճայք) մահաճգի Կորդոպ գավառին (ներդիր-քարտեզ 5): Կորդոպի և կուտիների կապի օգտին է խոսում նաև այն փաստը, որ արամեա-ասորական աղբյուրներում Կորդվաց լեռները կոչվում են Կուտի, որից էլ՝ արաբական աղբյուրների Ջուդի՝ անվանումը, որը տեղ է գտել Ղուրանի XI սուրահում՝ համաշխարհային ջրհեղեղի պատմության մեջ:

դ) Զ.ա. 714թ. Վանի թագավորության (Բիայնիլի-Ուրարտու-Արարատ) դեմ Ասորեստանի արքա Սարգոն Բ-ի արշավանքի մասին պատմող արձանագրության հատվածներից մեկում ներկայացվում է ռազմերթից առաջ վերջինիս ելքը կանխագուշակող մարգարեությունը: Գուշակությունների ու

¹ Կումանու (Կումենու) երկիրը տեղադրվում է Արևելյան Խարուրի հովտում (ԿՄ, էջ 119-120):

² Բարխեճն Տիգրիսի արևելյան ու արևմտյան ճյուղերի միացման շրջանի իյուսխում (ԿՄ, էջ 50-51):

³ АВННУ, N 5: Նույն արքայի այլ արձանագրություններում (АВННУ, N 3 և 7) տնտղոսաշարի մաս է կազմում «արքա շուրբոցիների, կուտիների և Լաիթի սոլոր երկրների» արտահալոտությունը, ինչը վկայում է կուտիների երկրի Եսրթիայից արևելք և Վանա լճից հարավ գտնվելու մասին:

⁴ Աղոնց, 1972, էջ 69; իմնու. ԿՄ, էջ 143-144:

⁵ Haffo, 1971, էջ 718:

մարզաբնությունների ժամանակ երկրները, սովորաբար, կոչվում էին ոչ թե տվյալ ժամանակի, այլ հնում ունեցած անուններով: Եվ Ուրարտուն տվյալ քնագրի գուշակության մասում կոչվում է «Գուտխում»¹: Ավելի վաղ՝ Մալմանասար Գ-ի ժամանակ (Ք.ա. 781-772) գրված մի արձանագրության մեջ Վանի քաղաքապետությունն ուղղակի կոչվում է «Կուտինների երկիր»²: Այսինքն՝ Ք.ա. I հազարամյակի Ուրարտուն համապատասխանում է Միջագետքին քաջածանոթ Ք.ա. III հազարամյակի Կուտի(ում)ին:

Վերոշարադրյալ ողջ քննությունը բերում է մի եզրահանգման. կուտիական աշխարհակալության մեկնակետը Հայկական լեռնաշխարհի հարավն է, այն ստեղծվել է հնագույն Հայաստանի (գոգե նաև հարևան երկրամասերի) դաշնակից զորքերի ջանքերով, ուստի և պետք է դիտարկվի իբրև հայոց հնագույն պատմության քաղկագուցիչ մի մաս: Թերևս այդ ժամանակներից եկող ավանդությանք է պայմանավորված Աստվածաշնչի քարգմանություններում Հայաստանի՝ Կորդուք անվան տարբերակներով (Կարդու, Զարդու, Զարդա) հանդես գալը³ (ինչպես Ուրարտուն էր կոչվում «Կուտի(ում)»):...

5. ՄԻԵՆՆՈՒՅՆ ԵՐԿԻՐԸ՝ ՏԱՐՔԵՐ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ

Պատմության մեջ քազմաթիվ են դեպքերը, երբ նույն երկիրն ինչպես տարբեր ժողովուրդների, այնպես էլ դպրության զանազան կենտրոնների կողմից կոչվել է մի քանի անուններով: Վաղ միջնադարի հայ պատմագրությունն, օրինակ, ճանաչում էր Հայաստանին տրված մի քանի անվանումներ՝ Հայք, Արարատ/դ, Արմենիա, Թորգոնա տուն (նաև «Ասրանազյան ազգի» երկիր), որոնք գալիս էին տարբեր ակունքներից: Ուստի մեր խնդիրներից մեկն էլ պետք է լինի

¹ АВНИУ, N 49 (318), ծնթ. 79:

² АВНИУ, N 38:

³ Ինգլիզեան, 1947, էջ 5-8:

պարզաբանել՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններում վկայված երկրանունները վերաբերել են տարբեր քաղաքական միավորների, քե՞նույն երկրի տարանվանումներ են՝:

ա) Շումերական բնագրերի քննությունից հայտնի դարձավ, որ Արատտա երկիրը տարածվել է առնվազն եփրատի՝ Հայկական Տավրոսով անցման շրջանում, Վանա և Ուրմիո լճերի ավազաններում: Նման պատկեր է ստացվում նաև Ս/Շուրուր-Ս/Շուրարտու երկրի տեղագրական քննության արդյունքում²: Արատտա-Մուրուր տեղագրական համընկնումը հատուկ իմաստավորում է ստանում մեկ այլ կարևոր փաստի լույսի ներքո: Մեպպազիր և հիերոգլիֆ արձանագրություններում հատուկ անունները վանկայինից բացի կարող էին ունենալ նաև գաղափարանշանային գրություն: Եվ «Արատտա» երկրանունը գաղափարանշանային գրության պարագայում գրվում է Մուրուր երկրի գաղափարագրով՝ SU.KUR.RU³: Այսինքն՝ որոշակիորեն փաստվում է Արատտա-Մուրուր (Մուրարտու) նույնությունը՝:

¹ Եզրորոշումից խուսափելու նպատակով պետք է նկատի ունենալ, որ երկրի տարբեր անվանումներ ունենալու ճանապարհներից է առանձին շրջանների անուններով կոչվելը, երբ վերջիններս հասել են գերիշխանության ամբողջ երկրի տարածքում:

² Gelb, 1944, քարտեզը տես Վերջում:

³ Albricht, 1925, էջ 206-207; Deilmel, 1932, էջ 839; Labat, 1988, էջ 250:

⁴ Առանձնակի հետազոտություն են ներկայացնում երկու երկրանունների առավել իսպանական առուգարանությունները, մասնավաճ, կրի նկատի ունենանք չունեցական բնագրերում Արատտային տրված «սուրբ օրինաց երկիր» պատվանուն-մակդիրը: «Արատտա» անունը առուգարանի է հնդեվրոպական -*arto արմատից, որից հայ-հունաարիական բարբառամերի լեզուներում առաջացել են «սուրբ օրենք», «կարգ», «սուրբ իրավունք», «արդար», «քարեպաշտ», «հշմարիտ» և այլ բառերը (Մովսիսյան, 1992, էջ 30-31, Հր. Մալուխոյանի առուգարանություն է): «Մուրուր» անունը (իր տարբերակներով) մեծ հավանականությամբ կարելի է առուգարանել հնդեվրոպական -*kubhro ձևից, որից ծագում են ամսակրիտի ջսհրա «փայլում, սրայտ, գեղեցիկ, մաքուր», նայկրեմի՝ աշյր, որից ք-ի դրավիդական (հնձու. մուրք>մուրք, լիքր>լիքր և այլն) առաջվել է աշյր (սանաթատ, մաքուր, մվիրական, սուրք) բառը (Մճատյան, 1979, էջ 255-256; Ջախուկյան,



Ալաջի սարմալեփե ճԱԲ (Մասնակապ Մազրն Մարտար) հանձնաճեզ ցրճիք՝
հայտնաբերեաճ Նճիճճե

1987, էջ 57-58, 132, 222¹: Հնդեբրոյալկան նախալեզվոճ սրբոյրոճ, նվիրալկանոյրոճ, օրինալկանոյրոճ ցրոյց տվոլոյ արճատնեբից ասա-
լացեղ էն նոյն երկրի երկոտ անվանոճնեբը: Ավելոլոյ չէ նշելո, որ միջա-
զետրյան օրեկ բնազրոճ երկոտ երկրանոճնեբը չեն հիշվոճ կոլոլ կոլո-
րի, ինչը ևս կարոլ է ցրոյց տալ, որ դրանց ոչ թե տարրեթ (հարեան), այլ
միևնոյն երկրին սրվաճ անվանոճնեբ են:

բ) Վաղուց նկատվել է, որ քիայնական (ուրարտական) սեպագիր աղբյուրների Արմե երկիրը նույն ասուրա-բաբելոնական արձանագրությունների Շուրբիան է: Այսինքն՝ Վանի բազալտոքայան ժամանակաշրջանում այս երկու անունները տրվել են նույն երկրին, ինչի հիման վրա էլ մասնագիտական գրականության մեջ և ուսումնական ձեռնարկներում այն ստացավ Արմե-Շուրբիա բաղադրյալ անվանումը¹: Շուրբիան Ք.ա. III-II հազարամյակների սկզբնաղբյուրների Ս/Շուրուր-Ս/Շուրարի-Ս/Շուրարուն է: Ուստի առաջ է գալիս նոր խնդիր, եթե սկզբնաղբյուրների քննությանը պարզվի, որ Ք.ա. I հազարամյակի Արմեն նույնանուն է Ք.ա. III-II հազարամյակների Արման(ի/ում), Արմի, Ուր(ու)մե, Արամ, Արմանա, Արիմե երկրանունների հետ, ապա պետք է եզրակացնել, որ ինչպես Ք.ա. I հազարամյակի Արմեն և Շուրբիան, այնպես էլ Ք.ա. III-II հազարամյակների նրանց նախորդները եղել են միևնույն երկրի տարբեր անվանումները: Իսկ Արման(ի/ում), Արմի, Ուր(ու)մե, Արամ, Արմանա, Արիմե երկրանունների վերջ կատարված տեղագրական վերլուծությանը զմայգրվում է մի տարածք, որը համապատասխանում է Ք.ա. III-II հազարամյակների Սուրուր-Ս/Շուրարուն (Ս/Շուրարի) երկրին²: Հետևաբար, այս դեպքում ևս մենք գործ ունենք միևնույն երկրին տրված տարբեր անվանումների հետ³:

¹ Տես, օրինակ, Kamaham, 1956, էջ 189 և այլն; ՀԺՊ, 1971, էջ 423-435:

² Gelb, 1944 (քարտեզը տես վերջում):

³ Տարածքային համընկնումից բացի, Ք.ա. III-II հազարամյակներում նշված երկրանունների՝ միևնույն երկրին վերաբերելու մասին կարող են վկայել այլ փաստեր ևս: Մասնավորապես, պատահական չի կարելի համարել Արմանումի արքայի «սուրարյան» անունը՝ Մադաքիմա կամ Մադակիմա (Gelb, 1944, էջ 103, 107): Հատկանշական է նաև, որ ինչպես Արաստան և Ս/Շուրուրը, այնպես էլ Ս/Շուրուրը (Ս/Շուրարուն) և Արման(ի/ում)ը չեն հիշատակվում միասին, տարբեր երկրներ լինելու դեպքում դրանք, իրեն հաջևաններ կամ տարածքով մտա գտնվողներ, գտնե մեկ անգամ կհիշատակվին կողք կողքի: Միակ բազալտոքայան Սարգուն Արադացու տեղության աշխարհագրությանը վերաբերող նոր աստիակական բնագիրն է, որում, ինչպես նշվեց, կատարվել են ընդմիջարկություններ, լրացվել են նաև Ք.ա. II հազարամյակի իրողություն-

Կատարված քննությունը ցույց է տալիս, որ Արատտան, Սուրբուրը (Սուրբարտուն) և Արման(ի/ուն)ը նույն երկրի տարբեր անվանումներն են Ք.ա. III հազարամյակում: Ուշագրավ է, որ երեք երկրանուններին վերաբերող տվյալների առանձին-առանձին ուսումնասիրություններն ուրվագծում են նույն աղեղը՝ Հայկական լեռնաշխարհից Եփրատի արտահոսքի շրջան, Վանա լճի ավազան և Ուրմիտ լճի ավազանի հարավակողմ: Նման մեծ ընդգրկման շնորհիվ է, որ Արման(ի/ուն) երկրանունը տարածվեց հարևան ժողովուրդների շրջանում և դարձավ այլազգիների կողմից Հայաստանին տրված ամենատարածված անվանումը¹:

գ) Ինչպես վերը նշվեց, շումերական աղբյուրների Արատտան և Աստվածաշնչի Արարատը միևնույն երկրի՝ Հայաստանի հնագույն անվանումներն են շումերական և հին եբրայական աղբյուրներում: Արատտա անունը հետագա դարերում և՛ Արարատ, և՛ Ուրարտու, և՛ Ուրարատ² տարբերակներով շարունակվում է կիրառվել Հայաստանի նկատմամբ: Հատկանշական է, որ Աստվածաշնչի Յոթանասանից բարգամնության մեջ Երեմիայի մարգարեության Արարատ բազավորությունը հիշատակվում է «Արատե բազավորություն» տարբերակով³: Արատտա երկրանունը իր հետքն է թողել Եփրատի՝ A.RAT, Urattu, Uruttu⁴, Ուրմիտ լճի ավազանի հարավում գտնվող Aratta գետի⁵ և բազմաթիվ այլ անվանումներում: Հնարավոր է, որ Ուրարտու անունը, որի զարգացումը

ներք: Ալդուհանդերձ, չորս հատվածից բաղկացած այդ բնագրում Արմանին և Սուրբարտուն հիշատակվում են տարբեր հաառվածներում (Weidner, 1952-1953, էջ 4-5):

¹ Այս անվան առաջին ընդունելի ստուգաբանությունը, մեր կարծիքով, Գ. Բ. Ջահուկյանի առաջարկածն է՝ բնիկ հայերեն *արմն, գ-այրմ* «ցեղ, սերունդ, արմատ, հիմք» արձատից (Ջահուկյան, 1987, էջ 287-288):

² Ուրարատ (Hwret) տարբերակով է հիշատակվում Արարատ-Ուրարտուն Քունբանի ձեռագրերում (Покрощевкин, 1959, էջ 33):

³ Ինկլիգեան, 1947, էջ 7-8:

⁴ Gelb, 1944, էջ 21-22, 86, 98:

⁵ ARAB, II, N 144; ABHMY, N 49 (6); ՀԺՊՔ, էջ 24-25:

կարծես թե երևում է Ք.ա. XIII-IX դարերի ասորա-բաբելական արձանագրություններում՝ Ur(u)atri/u > Urartu ճանապարհով, առաջացած լինի Արատտա անվանը վաղնջահայերենի -ro ածանցի կամ -ri տեղանվանական մասնիկի հավելումով, ապա r-ի դրսևոթյանը (տե՛ս վերը) ստանա իր վերջնական տեսքը՝ Aratri (Uratri/u) > Ararti/u (Urartu):

Հանրահայտ փաստեր են, որ Աստվածաշնչի բարգմանություններում Արարատը փոխարինված է Արմենիայով, Բեհիսրունի եռալեզու արձանագրության (Ք.ա. VI դար) մեջ համարժեք են պարսկերենի Արմինան, էլամերենի Խարմինույան և բաբելերենի Ուրաշտուն¹: Ընդ որում, վերջինս մինչև Ք.ա. IV դարի առաջին կեսը հանդես է գալիս որպես Հայաստանի բաբելական անվանում²: Սրանք մեկ անգամ ևս ցույց են տալիս Արատտա-Արարատ-Ուրարտու և Արման(ի/ում)-Արմի/ե-Արմինա-Արմենիա անունների (և դրանց տարբերակների) համարժեքությունը, որը պարզել էինք մահ Սուրուր-Սուրարտուի միջոցով: Վերջինս Ք.ա. IX-VII դարերում կիրառվում է ավելի փոքր տարածքի նկատմամբ (քան Ք.ա. III-II հազարամյակներում)՝ Հուրրիա (Հուրրե) տարբերակով: Դրանից հետո Ս/Հուրուր-Ս/Հուրարտու, Հուրրիա երկրանունը դուրս է մղվում գործածությունից, ըստ երևույթին, տեղը մեկընդմիջտ զիջելով Արմենիա համարժեքին:

դ) Ըստ միջազգային հնագույն բնագրերի՝ Սուրուր-Սուրարի երկրանվանը համարժեք հանդես եկող մյուս տեղանունն է «Հայա» (H.A.) շումերա-արադական մի շարք երկլեզու բնագրերում շումերերենի H.A.-ին արադերենում փոխարինում է Սուրուր երկրանունը³, ինչը ցույց է տալիս դրանց՝ միևնույն երկրին վերաբերելը: «Հայ(ա)» հիմքով ցեղանուն և տեղանուններ են հիշատակվում մահ էրլայի, Աշուրի, Խերական տերության Ք.ա. III-II հազարամյակներով քվագրվող քաղաքիվ բնագրերում, որոնք ակնառու են

¹ Kent, 1953, էջ 121-124, 171; Նալբանդյան, 1964, էջ 8, 14-15:

² Дьялманен, 1990, էջ 102-106:

³ Gelb, 1944, էջ 31, 94-97:

դարձնում Հայ(ա)-Հայասայի (և Մուրուր-Մուրարուրի) կապը Հայք-Հայաստանի հետ: Մասնավորապես, «հայ(ա)» ցեղանուն և տեղանուն են բազմիցս հիշվում էրլայի բնագրերում, ընդ որում, առնչված Արմի ու Ազի քաղաքների հետ¹: «Հայա» ցեղանունը հիշվում է Ք.ա. III-II հազ. սահմանագծով բվագրվող Աշորից գտնված մի բնագրում²: Իսկ խեթական արձանագրություններում Ք.ա. XV-XIII դդ. հիշատակվում է Հայասա երկրանունը, որի -(ա)տա վերջավորությունը խեթական տեղանվանակերտ մասնիկ է³: Համակարգի մեջ դիտելիս՝ ակնհայտ է մեր լեռնաշխարհի հետ կապվող Հայա աստծո անվան, շումերա-արադական, էրլայական, հին աշուրական և խեթական աղբյուրների «հայ(ա)» ցեղանվան, նրանով կազմված տեղանունների և հայ ժողովրդի ինքնանվան ծագումնաբանական ընդհանրությունը:

Հայա աստծո կապը Հայկական լեռնաշխարհի հետ առավել ընդգծվում է նրա որդի Դումուզիի՝ Արատտա երկրի հովանավոր աստվածը լինելով: Ուշագրավ է, որ միջագետքյան Դումուզի-Քամմուզը համապատասխանում է Օրիոնին, որն Աստվածաշնչի հայերեն բարգմանության մեջ (Հոր, 9, 9) փոխարինված է Հայկով⁴: Այսինքն՝ Արատտայի հովանավոր աստվածը եղել է Հայկը: Հայայի որդի Դումուզիի անունը նշանակում է «հարազատ (լուկական) որդի», իսկ «Հայկ» անունը կազմված է «հայ(ա)» ցեղանունից (կամ դիցանունից) և -իկ մասնիկից (հմնա. հնդ-իկ, պարս-իկ և այլն), նշանակելով «հայ(ա)» ցեղի (կամ աստծո) ներկայացուցիչ, որդի: Հայա (Էնկի) աստվածը շումերաարադական դիցաբանության մեջ արարչագործության գլխավոր դեմքերից է՝ աստվածներից ինաստնագույնը, իսկ Հայկ նահապետի մասին Մար Ա-

¹ Hnato, 1983, էջ 31-33:

² Hnato, 1983, էջ 30-31:

³ Kautava, 1956, էջ 39; ՀԺՊ, էջ 190-194 (յամեն հեղինակ՝ Ս. Տ. Երևնյան): Քոչյան, 2004, էջ 47-50 և եղված գրականությունը:

⁴ Մովսիսյան, 2004, էջ 52-53 (Դումուզի-Քամմուզ-Օրիոն-Հայկ համադրությունն առաջինը կատարել է Վ. Մատթեոսյանը):

բաս Կատինայի մատյանից քաղելով՝ Մովսես Խորենացին գրում է. «Աստվածներից առաջիններն անեղ էին և երևելի, և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Մրանցից առաջ եկավ իսկաների սերունդը... Մրանցից մեկն էր և Հասպտոսրյան Հայկը»¹...

Ամեն բան, կարծես, իր տեղն է ընկնում, և մեր առջև բացվում է հայոց ծագումնաբանության մոտացված կարևոր մի էջը: Ըստ այդմ, մենք սերում ենք արարչագործ, աստվածների մեջ իմաստնագույն Հայա աստծուց, որի որդին էր դյուցազն Հայկը²: Նրա անունը նշանակում էր Հայ(ա)ի որդի, մերկայացուցիչ, այսինքն՝ հայ, ուստի և, ինչպես Պատմահայրն է վկայում, նրա անունով կոչվեցինք բոլորս (Հայկ=հայ, Հայկը=Հայք-Հայաստան): Իսկ աստծու անունով ժողովրդի ու երկրի անվանակոչումը հայտնի երևույթ է հին աշխարհում (օրինակ՝ Աշուր աստծու անունով՝ Աշուր երկիրը, մայրաքաղաքը և ժողովուրդը)...

Ամփոփելով առվաձը՝ տեսնում ենք, որ Հայաստանին տրված հնագույն անվանումները՝ Արատտա-Արարատ/Ռուրարատ-Ռրարտու, Ս/Շուրուր-Ս/Շուրարտու-Շուրբիա, Արման(ի/ում)-Արմի/ն-Արմիմա-Արմենիա, Հայ(ա)-Հայասա-Հայաստան, իրենց տարբերակներով վկայված են Ք.ա. III հազարամյակի առաջին կեսից, երբ, ըստ լեզվաբանության տվյալների, հայերենը դարձել էր ինքնուրույն լեզու, իսկ վաղնջահայերենի կրողները Ք.ա. III-II հազարամյակներում բնակվել են Հայկական լեռնաշխարհում³:

¹ Մովսես Խորենացի, գիրք II, գլուխ Թ:

² Մովսիսյան, 2004, էջ 52-53 և հղված գրականությունը:

³ Джаякян, 1967, էջ 330-332; Пирокос, 1980, էջ 80-93; Гамкрелидзе, Исаиш, 1984, I, էջ 393-428; Ջախուկյան, 1987, էջ 24-25:

Գլուխ Գ.

ՀԱՅԿԱՎԱՆ ԼԵՈՆԱՇԵԱՐՀԻ Զ.Ա. ՈՒ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ՎԱՂՂԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄԻՋԱԳԵՏՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ա) Ուրուկի I հարստությունը և Արատտա երկիրը

Քրիստոսի ծննդից շուրջ երեք հազար տարի առաջ Միջագետքի հարավում՝ Շումերում, կազմավորվել էին քաղաք-պետություններ, որոնք ճանաչում էին Նիսպուր սրբազան քաղաքի հոգևոր առաջնությունը (վերջինս շումերների գերագույն աստծո՝ Էնլիլի պաշտամունքի կենտրոնն էր): Գործում էր մի տեսակ «հոգևոր համադաշնություն»: Այդ քաղաքների միջև ժամանակ առ ժամանակ հանուն քաղաքական ու տնտեսական առաջնության սանձազերծվում էին պատերազմներ, որոնց արդյունքում որևէ քաղաք-պետություն դառնում էր գերիշխող:

Ըստ «Շումերական արքայացանկի»¹, Միջագետքում ցրեղենից առաջ իշխել են հինգ դինաստիաներ, որոնցից առաջինը Էրիդու քաղաքինն էր: Արքայացանկի տարբերակներից մեկի համաձայն՝ այդ դինաստիայի ծագումը կապվում է Հայա (Սուբարի) քաղաքի/նրկրի հետ, ինչից էլ ներով՝ Ի. Գեյրը հավանական է համարում, որ «շումերական առաջին դինաստիան կոչվել է սուբարեցիների անունով»²:

¹ RISA, էջ 340-355; SKL; Kramer, 1963, էջ 328-331; ANET, էջ 265-266; ETCSL, 2.1.1 (հայերեն թարգմանությունը՝ Հավելված 1):

² Gelb, 1944, էջ 31:

Համաշխարհային ջրհեղեղից հետո, երբ, ըստ «Շուն-
 բազան արքայացամկի», արքայական իշխանությունը
 կրկին իջեցվեց երկնքից, առաջինը գերիշխեց Քիշը, որից
 հետո գերիշխանության կենտրոն դարձավ Ուրուկը (այն եր-
 բեմն իր գլխավոր տաճարի անունով կոչվում է նաև Էաննա):
 Ուրուկի I հարստությունն ունեցավ տասներկու արքա, որոն-
 ցից մեր նյութի հետ առնչվում են առաջին հինգը: Առաջինը՝
 «Մեսքինգաշերը՝ որդին (արևի աստված) Ուրուի, դարձավ
 քույր և արքա, (և) իշխեց 324 (տարբերակ՝ 325) տարի: Մե-
 քինգաշերը մտավ ծով (և) բարձրացավ լեռները՝: Ընմերքա-
 րը՝ որդին Մեսքինգաշերի, Ուրուի արքան, որը կատուցեց
 Ուրուկը (տարբերակ՝ «ում օրոք կատուցվեց Ուրուկը»), դար-
 ձավ արքա (և) իշխեց 420 (տարբերակ՝ 900 + ?) տարի: 745
 էին Մեսքինգաշերի դիմաստիայի տարիները՝: Լուգալբան-
 դան՝ հովիվը, իշխեց 1200 տարի, Դումուզին՝ ձկնորսը, որի
 քաղաքն էր Հայան (Սուրուրը)՝, քաղապորեց 100 (տարբե-
 րակ՝ 110) տարի: Նա միայնակ հաղթեց Ընմերքազնսինը՝:
 Գիլգամեշը, որի հայրը ևիլա՝ էր, քույրը Կուլլարայի, իշխեց
 126 տարի»¹: Այս հարստության չորրորդ արքան ևս Հայայից
 էր, որը կրում էր Հայա-Սուրարի-Արատուայի հովանավոր
 աստված Դումուզիի անունը:

Հարստության երեք արքաներ՝ Ընմերքարը, Լուգալբան-
 դան և Գիլգամեշը դառնում են շումերական դյուցազնավախի

¹ Ա. Լ. Օպպենհայմն այս հատվածը քարզմանում է՝ «և գնաց (կրկին) դե-
 պի (Արևածագի) Լեռները» (ANET, էջ 266):

² Որոշ տարբերակներ չունեն այս նախադասությունը: Մյ տարբերակում
 առկա է «... նա իշխեց 5 + 7 տարի» հավելումը:

³ Բնագրում՝ H.A.A.²⁵: Մասնագիտական գրականության մեջ անաբարի-
 վել են տեղանվան հնչյունագիր ընթերցման Subar, H.A. Kua(r/i) տար-
 բերակները: Այդ աննի բնմարկումը և H.A.A-Subar նույնության հան-
 զամանակի հիմնավորումը տե՛ս Gelb, 1944, էջ 94-98:

⁴ Որոշ տարբերակներ չունեն այս նախադասությունը:

⁵ Առաջարկվել են այս քառի «դև», օրախառնական, «խելազար» և այլ
 բարզմանություններ, սակայն բոլորն էլ՝ հարցականի նշանով:

⁶ RISA, էջ 340-341, 348-349; SKL, էջ 84-92; Kramer, 1963, էջ 328-329;
 ANET, էջ 266; ETCSL, 2.1.1, տող 95-133:

զլիսավոր հերոսները: Անկախ իր էպիկական քնույրից՝ շուներական դյուցազնավեպը կարևոր ծառայություն է մատուցում որպես պատմական սկզբնաղբյուր¹: Դյուցազնավեպի առաջին՝ «Էնմերբարը և Արատտայի տիրակալը» վիպերգում հաղորդվում է, որ Ուրուկի առաջին հարստության երկրորդ արքա Էնմերբարի և Արատտայի տիրակալի միջև բնթանում էր երկարատև պայքար: Այն ընթացում էր դիվանագիտական բանակցությունների տեսքով² և, ի վերջո, ավարտվեց հաշտությանը ու տոնախմբությունների կազմակերպմամբ: Պայմանավորվածության համաձայն, շուներները պետք է Արատտա ուղարկեին երկրագործական սպրանքների՝ փոխարենը ստանալով մետաղներ: Արատտայի վարպետները համաձայնում են Շուներում կառուցել ճարտարապետական կառույցներ³:

«Էնմերբարը և Էնսուխեշղաննան» քնագրի համաձայն՝ Արատտայի և Շուների պայքարը շարունակվում է: Այդ ժամանակ կործանված Խամազի երկրից Արատտա է գալիս նրա ներկայացուցիչը, որը կախարդ էր, և առաջարկում Արատտայից Շուներ ռազմական արշավանք կատարել Եփրատով: Առաջարկը նա ներկայացնում է Արատտայի կառավարիչ Անսիզգարիային, որն էլ իր հերթին՝ Արատտայի տիրակալ Էնսուխեշղաննային: Վերջինս արշավանքի համար տրամադրում է հինգ մինա⁴ ոսկի, նույնքան էլ արծաթ, պարենամթերք: Խամազիի ներկայացուցիչը հասնում է Եփրատի ափին գտնվող Էրեշ քաղաքը, սակայն այնտեղ անհաջո-

¹ Sb'u, հատկապես, Kanena, 1964, N 3, էջ 245-260:

² Քնագրի առաջին վիճամոդ Ս. Ն. Հրամերն այն համարում է «առաջին հոգեբանական պատերազմը» մարդկության պատմության մեջ (Kramer, 1956, էջ 17-28):

³ Թնագիրն ամբողջությամբ տե՛ս Kramer, 1952, էջ 1-55; Kanena, 1964, N 4, էջ 191-220; Cohen, 1973, էջ 112-143; ETCSL, 1.8.2.3:

⁴ «Մինա» չափի միավորը (հավասար է 0,5 կգ) լայն տարածում է ունեցել Առաջավոր Ասիայում: Հայկական միջնադարյան աղբյուրներում այն հայտնի է «մնաս» անվամբ:

դուքյուն է կրում, որից հետո Արատտայի տիրակալն ընդունում է Էնմերքարի առաջնությունը՝ կոչելով «մեծ նորայր»¹:

«Լուգալբանդան լեռների խավարում» («Լուգալբանդան և Խուռում լեռ») և «Լուգալբանդա» («Էնմերքար և Լուգալբանդա») բնագրերում² պատմվում է հետևյալը: Շումերական գորքի գլուխ անցած՝ Էնմերքարն արշավում է դեպի Արատտա: Արշավանքի մասնակիցների մեջ էր մահ Լուգալբանդան: Ճանապարհին, երբ գորքը հասնում է Չամուա (Լուլլուրի) երկիր, Լուգալբանդան մահացու հիվանդանում է: Թողնելով նրան այնտեղ, գորքը շարունակում է արշավանքը՝ պայմանով, որ վերադարձին վերցնեն Լուգալբանդայի մարմինը և տանեն հայրենի երկիր: Այնուհետև պատմվում է, թե ինչպես է աստվածների և գերբնական ուժերի օգնությամբ նա առողջանում և հասնում բանակին: Շումերական բանակը պաշարում է Արատտայի համանուն մայրաքաղաքը, սակայն մեկ տարի պաշարելով՝ չի կարողանում գրավել այն. *«Քաղաքից տեղում էին մետեր, ինչպես անձրևն անպերից, պարսաափկների քարերն անձրևի կարիչների պես Արատտայի պարիսպներից թափվում էին ամբողջ տարին՝ աղմուկոտ սուղոցով: Օրերն անցնում էին, ամիսները երկայրում, տարին բոլորեց մի ամբողջ շրջան»*³: Լուգալբանդան օգնության է մեկնում Շումեր, սակայն, թե ինչպես է ավարտվում պատերազմը, հայտնի չէ, թանի որ բնագրի վերջնամասը վնասված է:

Լուգալբանդայի վիպաշարքն ավարտվում է Ռուուկի համար ծանր իրադրությամբ և, թերևս, դրանով է պայմանավոր-

¹ Kramer, 1956, էջ 232-234; Berlin, 1979, էջ 38-59; ETCSL, 1.8.2.4 (և այնտեղ հղված աղբյուրները): Վիպիգի վերնագրի երկրորդ սանձանմուցի հղված երեք աղբյուրներում մտի տալիս ենք ընթերցումներ՝ Էնսուրուշի-թաննա, Էնսուխեբշդաննա, Էն-սուխգիր-անա:

² Երկու բնագրերը շարունակելով իրար՝ կազմում են մեկ ընդհանուր կոմպոզիցիա, որն ընդամենը է համարել շումերական դյուցազնավեպի Լուգալբանդայի ճյուղ կամ վիպաշարք (Kramer, 1956, էջ 235-238; Wilcke, 1969; ETCSL, 1.8.2.1; ETCSL, 1.8.2.2 և հղված աղբյուրները):

³ Wilcke, 1969, էջ 114-115; ETCSL, 1.8.2.2 (տող 253-259):

ված, որ նրան հաջողում է Դունուզին, «որի քաղաքն էր Հայան (Սուրուրը)»:

Եթե էնմերթարն ու Լուգայրանդան դյուցազնալիսուն հանդես են գալիս պատմական իրադարձությունների կապակցությամբ, նրանց հռչակավոր հետևորդ Գիլգամեշի առնչությունն Արատտա երկրի հետ վերաբերում է դիցաբանության ոլորտին: Ըստ «Գիլգամեշն ու Աննահության երկիրը» վիպերգի¹ (որը դարձել է քաբելոյան (աքադական) «Գիլգամեշ» էպիսի գաղափարասյուժետային սկզբնաղբյուրը), Գիլգամեշը որոշում է ուղևորվել «աննահության երկիր», որին հասնելու համար Ուրու (Արև) աստվածը նրան տալիս է «դեպի Արատտա ճամապարհը ցույց տվող» յոթ ուղեցույցներ²: Ըստ քաբելոյան «Գիլգամեշ» էպիսի՝ հերոսը հաղթահարում է Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մաշու (հուն. աղբյուրների Մասիուս և «Աշխարհացոյց»-ի Մասիոն) լեռները և, ի վերջո, հասնում է իր նպատակին: Նա ձեռք է բերում «աննահության ծաղիկը», սակայն վերադարձին օձը գողանում է այն³ (ինչպես և Աստվածաշնչում՝ մարդկությունը մահկանացու է դառնում օձի միջամտության հետևանքով):

բ) Մինչսարգոնյան Միջագետքը Ք.ա. XXVI-XXV դարերում և Հայկական լեռնաշխարհը

Ք.ա. XXVIII-XXVII դարերից մինչև Աքադի քաղափութության ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհի և նրա քնիկների մասին տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը վերաբերում է Միջագետքում քնկություն հաստատած սուբարեցիներին, երկրորդը՝ Հայկական լեռնաշխարհին:

¹ Kramer, 1947, էջ 3-46; ՈՒԼԵԲ, էջ 130-135; ETCSL, 1.8.1.5.1 (և այնուղի հղված աղբյուրները; հայերեն թարգմանությունը՝ Հավելված, N 2):

² ՈՒԼԵԲ, էջ 131; ETCSL, 1.8.1.5.1, տող 44:

³ Պնակիտ XI (տես ՈՒԼԵԲ, էջ 211-220; MM, էջ 109-120; հայերեն թարգմանությունը՝ ՀԱՊ, էջ 155-165):



«Նարոտ-Մտերն և իր քննածինը» խմբինը քնարի գրությունը

Առաջին խմբի առավել վաղ բնագրերը (որոնք գտնվել են Ֆատայից և բվագրվում են Ք.ա. XXVI-XXV դարերով) սուրբաբեցիմներին հիշատակում են որպես դալիմներ, դայրապետեր, հացբուխներ, հացբուխապետեր, դարբիմներ, իսկ քիչ ավելի ուշ շրջանի բնագրերը՝ դարբիմներ, այգեպաններ և այլն¹:

Երկրորդ խումբը կազմում են Ք.ա. XXV-XXIV դարերում իշխած երեք՝ Ադաթի Լուգալանիմունդու, Լագաշի Էանատում և Ուննայի Լուգալզիգեսի արքաների արձանագրությունները:

Ադաթի Լուգալանիմունդու արքայի արձանագրության մեզ հասած հինբաբելոնյան ժամանակաշրջանի կոկնօրինակը հաղորդում է, որ նա հարկեր է ստացել Մայրիների լեռներից², Էլամից, Մարխաշիից, Գուտիումից, Սուրիից, Մարտուից, Սուտիումից և Էաննայի երկրից (այսինքն՝ Ուրուկի շրջանից)³: Երկրամունները ակնհայտորեն թվարկված են արևելքից արևմուտք՝ շրջանաձև հերթականությամբ, ինչը ցույց է տալիս, որ սարգոնյան արչավանքների նախօրյակին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքն ընդգրկված էր Գուտիումի, իսկ հարավ-արևմուտքը՝ Սուրուրի կազմում:

Լագաշի Էանատում արքան հաղորդում է, որ միջագետքյան մի քանի քաղաքներից քացի պարտության է մատնել արևելյան և հյուսիսային երկրներին. արձանագրություննե-

¹ Gelb, 1944, էջ 31-32:

² Հին միջագետքյան բնագրերում տարբերակվում են մայրիների հետ կապված մի քանի տեղանուններ: Ամանոսի լեռները Սարգոն Աքադացու ժամանակաշրջանից են կոչվում «Մայրիների լեռներ», իսկ մինչ այդ մայրիների անվամբ են անվանակոչվել Իրանական սարահարթի արևմտյան և Հայկական լեռնաշխարհի հարավային որոշ շրջաններ (այդ առիթվ տե՛ս Քեոբեռ, 1988, էջ 128-132): Տվյալ դեպքում «Մայրիների լեռները» գտնվում են Իրանական սարահարթի արևմուտքում (Էլամի հարևանությամբ):

³ Ungnad, 1936, էջ 36-37; Gelb, 1944, էջ 33-34:

րից երեքում նա հիշատակում է Սուրբուր երկիրը, ընդ որում, մեկում էլամի և Ուրուայի, երկուսում՝ միայն էլամի հետ¹:

Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին շումերական քաղաքների միավորվելիս Ումմայի Լուգալզիգեսի արքայի իշխանության ներքո: Վերջինս իր քոլամ արձանագրություններում հաղորդում է, որ շումերների հայր-աստված Էնլիլը բացել է նրա ճանապարհը «Ներքին ծովից *Sharphut* ու Եփրատով մինչև Վերին ծով»²: Եթե սա հայտնի բանաձևի սուկ մի կրկնություն չէ, նշանակում է Լուգալզիգեսին հասել է մինչև Հայկական լեռնաշխարհի փեշերը:

2. ԷՐԱՆՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի Ք.ա. III հազարամյակի պատմությանը վերաբերող հույժ արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև Էրլայի (Թեյլ Մարդիլս հնավայր)³ գրավոր հուշարձանները: Հայտնաբերված բնագրերի վերծանությունից հայտնի դարձավ, որ Ք.ա. XXVI-XXIII դարերում Էրլան եղել է ինքնուրույն և հզոր պետություն, որն ասևորական լայն ցանցով կապված է եղել շրջակա երկրների հետ: Բնագրերի զգալի մասը տնտեսական բնույթի վավերագրեր են, որոնք վերաբերում են Էրլայի արքունի ծախսերին, այլ

¹ Ungnad, 1936, էջ 38-39; Gelb, 1944, էջ 34; Kramer, 1963, էջ 309-310; IRSA, էջ 47-59:

² IRSA, էջ 93-95; Дьяконов, 1959, էջ 199; Kramer, 1963, էջ 323-324 (տե՛ս Հավիված, N 3):

³ Էրլան գտնվում է Հայեպից մոտ 55 կմ հարավ (դեպի արևմուտք): 1970-ական թթ. ենավայրը պեղող իտալական արշավախումբը Պ. Մաթինի գլխավորությամբ հայտնաբերեց չուրջ 17 հազար սեպագիր սալիկ, որի հիմնական մասը կազմում էր Էրլայի արքայական արխիվը: Բնագրերի առաջին իրատարակությունն իրականացրեց իտալացի սեպագրագետ Ջ. Պետտինատոն: Էրլայի պեղումների և բնագրերի մասին լույս է տեսել մեծածավալ գրականություն (տե՛ս, օրինակ, Matthiae, 1977; Matthiae, 1980; Pettinato, 1979; Pettinato, 1981; LÉ, BE; IIՃ և այլն):

երկրների ու քաղաքների հետ ունեցած առևտրա-փոխանակային և այլ հարաբերություններին:

Ըստ Էրլայի բնագրերի՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակվող իշխանություններից առնվազն երեքը՝ Արմին, Ուրսաունը (Ուրշուն) և Կակմիունը ունեցել են սեփական արքաներ¹: Չնայած այն հանգամանքին, որ նշված երեք բազավորությունների և Հայկական լեռնաշխարհի ու հարակից տարածքների երկու տասնյակից ավելի բնակավայրերի վերաբերյալ մեզ են հասել մի քանի տասնյակ բնագրեր (մի մասին անդրադարձ եղավ տեղագրության բաժնում), դրանք դեռևս չեն դարձել հայագիտության քննարկման առարկա:

3. ԱՐԱՂԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱՎԻՑ ԵՐԿՐՆԵՐԸ

ա) Մարզոն Արաղացին և Հայկական լեռնաշխարհը

Քննարկվող ժամանակաշրջանում Միջագետք էին ներթափանցել սեմական ցեղեր, որոնց ներկայացուցիչները, գանազան ցածրաստիճան ծառայությունների անցնելով շումերական քաղաքներում, ձգտում էին որոշ դիրքեր գրավել և տիրանալ տեղերի իշխանությանը: Նման ճանապարհով Քիչ քաղաքում իշխանությունը զավթեց սեմացեղ այգեսպանմատովակը, որը գահ բարձրանալով՝ ցածր ծագումը քողարկելու միտումով իրեն կոչեց Շարրում-քեն (Մարզոն), որ նշանակում է՝ «հիրավի (ճշմարիտ) արքա»: Հաղածվելով ու փախուստի մատնվելով Լուգալզիգեսի արքայից՝ նա հաստատվեց մինչ այդ աննշան Արաղ քաղաքում (Շումերից հյուսիս), վերափոխվեց զորքը ստեղծելով պատմությանը հայանի առաջին մշտական բանակը (քաղկացած 5400 զինվորներից) և պատերազմ սկսեց շումերական քաղաքների դեմ: Շուրջ տասը տարի պատերազմելով՝ Մարզոն Արաղացին (Ք.ա. 2334-

¹ Pettinato, 1979, էջ 273-ում հղվող բնագրերը:

2279 կամ 2316-2261 թթ.), տալով 34 ճակատամարտ, նվաճում է Շուսերն ու կենտրոնական Միջագետքը ստեղծելով նախադեպը շումերոյ մի աշխարհակալություն, պատմությամբ հայտնի առաջին բոնապետությունը¹:

Սարգոն Արադացին արձանագրություններից մեկում հաղորդում է, որ նվաճել է Եփրատից արևմուտք գտնվող երկրները՝ «Մարին, Յարմուտին և Էրլամ՝ մինչև Մայրիների և Արժարի լեռները»²: Ուշ շրջանի բնագրերի համաձայն, դա տեղի է ունեցել Սարգոնի կառավարման տասնմեկերորդ տարում: Հավանաբար, սրա շարունակությունն է եղել նրա արշավանքը «Արևամուտի ծովով» (իմա՝ Միջերկրական ծովով) մինչև Փոքր Ասիայի Պուրուշխանդա քաղաք, որի տիրակալ Նուր-Դագանը ճնշումներ էր գործադրել սեմացեղ առևտրականների նկատմամբ³:

Մեկ այլ հյուսիսային արշավանքի ընթացքում, այս անգամ Տիգրիսի հովտով, Սարգոնը հասավ Սիմուրում երկիր⁴, կրկին մուտք չգործելով Հայկական լեռնաշխարհ:

Նրա տիրապետության վերջին տարիներին նվաճված երկրներում ծագեցին ապստամբություններ: Ապստամբները պաշարեցին Արադի տերության նույնանուն մայրաքաղաքը և Սարգոնը դժվարությամբ կարողացավ փրկել իր գահը: Ուշագրավ է, որ դրանից հետո նա արշավանք սկսեց Սուրաբուու (Սուրուր) երկրի դեմ, որն, ըստ մեզ հասած բնագրերի, ավարտվեց հաղթանակով և ավարտությամբ⁵:

Սարգոնի տերության քարտեզի մասին արդեն խոսք եղել է տեղագրական խնդիրների քննարկման ընթացքում: Այս

¹ Սարգոն Արադացու մասին կա մեծածավալ գրականություն (տե՛ս, օրինակ, Weidner, 1952-1953, էջ 1-24; Hirsch, 1963, էջ 1-9, 34-52; Gadd, 1966, էջ 1-20; ИДБ, էջ 233-243; RIM-SGP, էջ 7-39 և այլն):

² RISA, էջ 108-111; Hirsch, 1963, էջ 37-39, 49-50; IRSA, էջ 99; RIM-SGP, էջ 27-31 (տե՛ս Հավելված, NN 4 և 5):

³ Weidner, 1922, էջ 62-71; Hirsch, 1963, էջ 6-7; Gadd, 1966, էջ 10-16 (և հղված գրականությունը, հայտինն թարգմանությունը՝ Հավելված, N 7):

⁴ RIM-SGP, էջ 8:

⁵ Дьяконов, 1959, էջ 213-215; Gadd, 1966, էջ 16-17; ANET, էջ 266:



Копия клинописи

տեղ ավելացնենք, որ մեզ հասած աշխարհի բարեկոնյան քարտեզին կից պահպանված վիպական բնագրում նշվում է, որ միայն երեք մարդու է հաջողվել «թոշնի բուվ» անցնել ծովի մյուս կողմը: Դրանք են Ուրնապիշտինը (արադական «Նոյը»), Սարգոնը և Նուր-Դագանը¹:

Սարգոնի իշխանության ողջ ժամանակաշրջանն անցավ բռնարարքներով, դրանց դեմ բարձրացած ապստամբություններով, որոնք ճնշվում էին շտեմնված վայրագությամբ, քերես դա է կարևոր պատճառներից մեկը, որ ուշ շրջանի բնագրերում նրա վախճանը համարվում է սրբապղծության արդյունք²:

Ապստամբությունների ու դրանց ճնշման մթնոլորտում անցան մահ Սարգոնին հաջորդած նրա երկու դստիկների՝ Ռիմուշի և Մանիշտուշուի գահակալության տարիները (Ք.ա. 2278-2255 կամ 2260-2237 թթ.): Իրավիճակը պատկերացնելու համար քավական է նշել, որ Ռիմուշը միայն մեկ ապստամբության ճնշման ժամանակ ավերեց շումերական հինգ քաղաք, որոնցից երկուսում սպանվեցին մոտ 9 հազար, կախաղան հանվեցին 3600 և գերվեցին շուրջ 20 հազար շումերներ: Նրանք երկուսն էլ սպանվեցին սրալատական խռովությունների քոհուրոհում:

բ) Նարամ-Սուենը և Հայկական լեռնաշխարհը

Դրությունը փոխվեց Աքադի չորրորդ տիրակալ Նարամ-Սուենի օրոք (Ք.ա. 2254-2218 կամ 2236-2200 թթ.), որին հաջողվեց վերականգնել Սարգոնի տերության՝ իր նախորդների օրոք անկում ապրած հզորությունը, հռչակել իրեն ոչ միայն «Շումերի և Աքադի արքա», «աշխարհի չորս կողմերի արքա», «տիեզերքի արքա», այլև՝ «աստված»: Նարամ-Սուենի առաջին գործերից եղավ Շումերում ծագած նոր

¹ Horowitz, 1988, էջ 148-149:

² Дьяконов, 1959, էջ 214; ANET, էջ 266:

ապստամբությունների ճնշումը, որի համար հարկ եղավ կազմակերպել մի շարք արշավանքներ:

Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր նա ձեռնարկել է բազմաթիվ ուղևորական արշավանքներ: Ըստ Նարամ-Սուենի բազալորությունն ախտը վերականգնվող ժամանակագրության¹, հյուսիսային արշավանքներից առաջինն ուղղված էր Սուբուր (Սուբարտու) երկրի դեմ, որի ընթացքում երկու գոբրերի միջև ճակատամարտ է տեղի ունեցել Թալմուս բնակավայրի մոտ (Ներկայիս Ջերախիյահի մոտ, որը գտնվում է Խոշր գետի ափին, Մոսուլից 40 կմ հյուսիս)², ինչը կարող էր լինել Սուբուրի հարավային շրջանը:

Արադի բռնակալի դեմ կազմված առաջին դաշինքը դեկավարում էր Ափիշալ երկրի արքան³, որի անունը հայտնի է ավելի ուշ շրջանի գրական քննադրերից՝ Ռիշ-Ադադ/Թեշուր⁴: Այդ անունով (Ռիշ-Ադադ/Թեշուր կամ Ռիդ-Ադադ/Թեշուր) հայտնի է Նարամ-Սուենի դեմ պայքարած Արման(ում) երկրի արքան (տե՛ս ստորև): Համընկնումը, թեևս, կհամարվեր պատահական, եթե չլիներ մեկ այլ հանգամանք: Ափիշալ և Ուրումու երկրները համատեղ հանդես են գալիս Նարամ-Սուենի մասին ուշ շրջանի մի քննադրում, ինչը շատ լավ գուգադրելի է Թիգլաթպալասար Ա-ի արձանագրություններում արեշլայեցիների և ուրումայեցիների կողք կողքի հիշատակությունը. դա հիմք է տվել եզրակացնելու, որ Ափիշալը

¹ St'U RIM-SGP, էջ 84-87:

² Hirsch, 1963, էջ 21-22; RIM-SGP, էջ 88-90 («թալմուս» տեղանունը ժամանակին ընթերցվել է «Լիմուս/շ»):

³ Hirsch, 1963, էջ 19-20; RIM-SGP, էջ 85, 90-93 (Ասիշալ երկրանվան հիշատակությունները՝ համապատասխան հղումներով, տե՛ս Foster, 1990, էջ 40-44):

⁴ Անճամունը գրվում էր՝ *ri-is/ud ԴIM, որի երկրորդ բաղադրիչը (IM) ամպրոպի աստծո անվան գաղափարացիքն է, ուստի անունը կարող է ընթերցվել և՛ «Ռիշ-Իշրուր», և՛ «Ռիշ-Ադադ», և՛ «Ռիշ-Թեշուր» (Խմբու. Գալուցճեան, 1973, էջ 21-22; Մառթեոսիան, 1994, էջ 259):

գտնվել է Հայկական լեռնաշխարհում¹: Առաջարկվել է նաև Ափիշալը տեղադրել Միջագետքում՝ Ուննայի հարևանությամբ²:

Հաջորդ առնչությունը Հայկական լեռնաշխարհի հետ Նարամ-Սուենն ունեցավ իր դեմ ծագած «Մեծ ապստամբությունից» հետո, որը ճնշելուց հետո նա արշավեց Եփրատի վերին հոսանքի շրջանում գտնվող Խախ(ում) երկրի դեմ³: Ոսկու արդյունահանման այս կարևոր շրջանը հիշվում է Գուդեայի (Ք.ա. XXII դ.)⁴, Ք.ա. XX-XVIII դդ. փոքրասիական (Կամեշի) առևտրական բնագրերում⁵, Խախա անվամբ՝ խերական արքյուրներում⁶, Խախի տարրերակով՝ Վանի քաղաքության արձանագրություններում, Խախ ձևով՝ Մովսես Խորենացու և Փավստոս Բյուզանդի մոտ⁷: Այն գտնվել է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում, որը հայտնի էր ոսկու արդյունահանմամբ⁸:

¹ Gelb, 1938, էջ 70-72: Այս տեսությունն առաջ քաշելով Ի. Գեյրը եզրակացնում է, որ Ափիշալը պետք է տեղադրել Վանա լճի և Տիգրիսի միջև: Այստեղ հարկավոր է անել մի ճշգրտում. արեշայեցիները և ուրումայեցիները ասորեստանյան արքյուրներում հանդես են գալիս որպես անդրևիստոսյան տարածքների (բնագրում Խաթթի երկրի) բնակիչներ (ARAB, I, NN 277, 311, 318), հետևաբար, Ափիշալը ևս պետք է տեղադրել Եփրատի հովտում, գետի արևմտյան կողմում:

² Նման ենթադրության հիմք են ծառայել Ուրի III հարստության ժամանակաշրջանի որոշ բնագրեր (տես Gelb, 1938, էջ 70-72; RIM-SGP, էջ 90): Ուշագրավ է Հ. Գ. Գյուրեբրաքի մի դիտարկումը, ըստ որի Ափիշալ տեղանունն իր կազմությամբ ակնհայտորեն հիշեցնում է Խուշալ(ում) կամ Խուրեշալ(ում) երկրանունը՝ վկայված Գիարթեթիի շրջանից գտնված Ք.ա. XIX-XVIII դդ. բվագրվող բրոնզե թրի վրայի հին ասորերեն սեպագիր արձանագրության մեջ (Güterbock, 1965, էջ 197; հմտ. Մովսիսյան, 2003 (a), 175-176):

³ RIM-SGP, էջ 86:

⁴ Sh'u տողը:

⁵ Garelli, 1963, էջ 109-110; Янковская, 1968, էջ 46-47, 120-122 և այլն:

⁶ Kallanits, 1956, էջ 110-111; Քոսյան, 2004, էջ 51-52:

⁷ Ty, c. 227-228, նաև իրված գրականությունը:

⁸ Մի շարք մասնագետներ Խախումը տեղորոշում են Էլքիստանից հյուսիս (Պոլոմեները՝ Քոսյան, 2004, էջ 51), ինչը չի հակասում Բարձր Հայքի

Մի շարք արձանագրություններ վկայում են Սուրարտուի հարավային Ազուխինում բնակավայրի մասին: Թե որքան էր կարևոր Նարամ-Սուենի համար Սուրարտուի դեմ Ազուխինումի մոտ տարած հաղթանակը, երևում է այդ իրադարձությանը տվյալ տարին անվանակոչելու փաստից. «Տարին, երբ Նարամ-Սուենը հաղթեց Սուրարտուին Ազուխինումի մոտ և զերեց Թախիշ-աքիլին»¹: Եվս երկու արձանագրություն տեղեկացնում են Նաուսրիից մինչև Նախուր, Կուրդայից մինչև Ազուխինում արշավանքի մասին²: Ազուխինումի մոտ տարած հաղթանակից հետո Թեյլ Բրաք հնավայրի տարածքում Արադի արքան կառուցեց ամրոց, որի պեղումներից գտնվել են նրա անունը կրող արձանագրությանը յոթ կնիքներ³: Ազուխինումը հիշատակվում է նաև Նարամ-Սուենի՝ Սուրարտուի բնակավայրերը ներկայացնող արձանագրության մեջ, որը մեզ է հասել հինբաբելոնյան շրջանի երկու կրկնօրինակներով⁴:

Թեյլ Բրաք հնավայրի տարածքում կառուցած ամրոցը հեմակետ դարձնելով՝ Նարամ-Սուենը կատարեց մի քանի արշավանք դեպի շրջակա տարածքները: Մասնավորապես, նա հասավ մինչև «ակունքը Տիգրիսի (և) ակունքը Եփրատի»⁵, հասավ մինչև Փիր-Հուսեյն հնավայրի շրջան (Դիարբեքիից մոտ 25 կմ հյուսիս-արևելք), ուր բողեց իր պատկերաքանդակով և արձանագրությանը կոթող⁶:

տեղորոշմանը. Խախումը Ք.ա. III հազ. վերջին և II հազ. առաջին դարերում ընդգրկել է զգալի տարածք, որի արևմտյան կամ հարավ-արևմտյան սահմանը կարող էր լինել Էջփատանից հյուսիս ընկած շրջանը:

¹ RIM-SGP, էջ 86, 124: Եկառենը, որ Սուրարտուի արքայի անվան (Թախիշ-աքիլի) առաջին քաղաքիչը նույնանուն է Հայաստանի տեղանուններից երկուսին (Թախիշիչա և Թախիշնա, տես Քուսյան, 2004, էջ 94):

² RIM-SGP, էջ 124-125:

³ Hirsch, 1963, էջ 19; RIM-SGP, էջ 125-126:

⁴ RIM-SGP, էջ 140-143:

⁵ RIM-SGP, էջ 139-140:

⁶ RISA, էջ 140-141 (բնագրի առաջին հրատարակումներից եղումներով): կոթողի գտնվելու համզամանքները և բնութագրական մանրամասները

Որ Հայկական Տավրոսի լեռնազանգված մտնելը և դեպի հյուսիս առաջանալը համարվել է բացառիկ հնրություն, երևում է Նարամ-Սուենի գահակալության ևս երկու տարիները այդ իրադարձություններով անվանակոչելու փաստից: Գրանցից մեկը վկայում է Տիգրիսի և Եփրատի ակունքները հասնելու¹, մյուսը՝ Արևմտյան Տիգրիսի ակունքներում գտնվող Աբարնում (Ամարնում)² երկրի դեմ արշավելու մասին³: Աբարնումը հիշատակվում է նաև Նարամ-Սուենի գահակալության վերջին շրջանի մի վնասված արձանագրության մեջ (մեզ հասել է վերջինիս հինբաբելոնյան կրկնօրինակը), որում ամփոփվում են նրա նվաճումների արդյունքները. «... Մախազ(ում), Փուշ, ..., Էրլա, Մարի, Քուրբուլ, ..., Ուրբիշ, Մուրիշ, ..., ..., Աբարնում, և երկիրը, որտեղ ժայրիներն են կտրում, իր նահանգներով: Սուբարտու երկիրը՝ Վերին ծովի ափերին, և Մագանը՝ իր նահանգների երկայնքով ... ծովի մյուս կողմը...»⁴:

Նարամ-Սուենի մեկ այլ արձանագրություն (պահպանվել է հինբաբելոնյան շրջանի երկու կրկնօրինակով) ներկայացնում է Սուբարտուն և Վերին երկրները՝ որպես նվաճված և

տևս Naab, Unger, 1934, էջ 5-48, աղ. I-IV: Արձանագրությունն ունեցել է բազմաթիվ վերահրատարակումներ (օրինակ, RIM-SGP, էջ 128-129, Մովսիսյան, 2003 (a), էջ 173-174):

¹ «Տարին, երբ Նարամ-Սուենը հասավ ակունքները Տիգրիսի ու Եփրատի և պատերազմում հաղթեց Հենամինդա (յարգարին)» (RIM-SGP, էջ 86):

² Աբարնումը (Ամարնում) հիշատակվում է Ուրի III հարստության ժամանակաշրջանում (Gelb, 1938, էջ 66-67, Kärki, 1986, էջ 130-131): Հետագայում վկայվում է Քանեշի բնագրերում և համապատասխանում է անտիկ հեղինակների Աբարնին: Տեղադրվում է Մալաթիայի և Ամիդի միջև, ժամանակակից Ջերմուկի (յարգիլին աղավաղմանը՝ Չերմուկ) տեղում (Gelb, 1938, էջ 66-67; Bilgic, 1945-1951, էջ 32 և հղումները):

³ «Տարին, երբ արքան արշավեց դեպի Ամարնում» (RIM-SGP, էջ 86):

⁴ RIM-SGP, էջ 162-163: Կա կարծիք, որ այս արձանագրությունը պատկանում է Ուրի III հարստության արքա Հուդլիին (Kärki, 1986, էջ 130-131):

հարկատու, որոնցից նա հարկեր է ստացել դեպի Թալխա-
րում կատարած արշավանքի ընթացքում¹:

Եփրատի վերին հոսանքի երկրները նվաճելու մասին է
պատմում Նարամ-Սուենի ամենաձավալուն արձանագրու-
թյուններից մեկը (նույնպես մեզ հասած հինբաբելոնյան
կրկնօրինակով)։ «Քանի որ երբևէ՝ մարդկության արարածից
ի վեր, ոչ մի քաղաքի չէր կործանել Արմանումն ու Էրլան,
Ներգալմ² (իր) զենքով ճանապարհ քացեց Նարամ-Սուենի՝
հզորի համար, և տվեց նրան Արմանումն ու Էրլան: Եվ նա
տվեց նրան Ամանուը՝ Մայրիների լեռը, ու Վերին ծովը:
Շնորհիվ Դազանի՝ զենքերի, որը մեծացնում է նրա քաղաքու-
թյունը, Նարամ-Սուենը՝ հզորը, նվաճեց Արմանումն ու
Էրլան: Եվ Եփրատի ափից մինչև Ուլշում նա ջախջախեց
մարդկանց, ում Դազանը նվիրել/տվել էր նրան ի սկզբա-
նե...»: Արձանագրության շարունակության մեջ նշվում է նաև
Արմանումի արքա Ռիդ/2-Թեշուբին (Ռիդ/2-Ադադին) գերելու,
նվաճված տարածքում անրոց կառուցելու և Նարամ-Սուենի
պատկերով ու արձանագրությամբ կորոզ կանգնեցնելու մա-
սին³: Վերջին երկու միջոցառումները, ամենայն հավանակա-
նությամբ, կապվում են Թեղ Բրաք և Փիր-Հուսեյն հնավայրե-
րի հետ, որոնց մասին նշվեց վերը:

¹ RIM-SGP, էջ 129-131: Թալխադունը գտնվել է Ներկադիա Թեղ Դյուլյուպ
հնավայրի տեղում Այնթապից 11 կմ հյուսիս (տես Բ գլխում):

² Ներգալլ միջագետքյան դիցաբանության ամերաշխարհի աստվածն էր
(Աֆոսուսեսա, 1992 (ա), էջ 212):

³ Արևմտասեմական աստված (աքադական, ուգարիթյան աղբյուրներում՝
Դազան, փյունիկյանում՝ Դազոն), որը դաստիարակում էր ստուգաբա-
նաբանության սկզբնապես եղել է երկրագործության կամ ձկնորսության
հովանավոր, արաբական դիցաբանության մեջ զուգադրվել է Ադադի և
Էնլիլի հետ՝ համարվելով ռազմի, զերադույն աստված (Աֆոսուսեսա,
1991, էջ 346):

⁴ UET, I, էջ 74-76; Hirsch, 1961, էջ 20-21, 73-77; ANET, էջ 268; IRSA, էջ
107-108; Foster, 1982, էջ 27-36; RIM-SGP, էջ 132-135; Մատթեոսյան,
1994, էջ 255-256:

Նարամ-Սուենը, որպես նվաճող Արմանումի ու Էրլայի, հիշվում է ևս երեք տարբեր առաքյալների վրա բողոքված նույնարովանդակ արձանագրություններում¹ և իր վասալ, Նիգգումի (Դիալա գետի վերին հովտում) կառավարիչ Քարշումի երկու քնագրերում²:

Արմանի երկիրը հիշատակվում է Ք.ա. II հազարամյակում գրի առնված «Նարամ-Սուենն ու իր թշնամիները» անվանումը ստացած խեթերեն քնագրում, որը հաղորդում է միջագետքցի արքայի դեմ ելած տասնյոթ երկրների դաշնության մասին³:

Նարամ-Սուենի դեմ դաշնակցած տասնյոթ երկրների մասին է պատմում նաև «Քուրայի արքայի լեգենդը» անունով հայտնի միպոսը, որի համաձայն դաշինքը ղեկավարել է Լուլլուբիի արքա Անուրանիին՝ իր յոթ որդիների հետ: («Նարամ-Սուենն ու իր թշնամիները» անունը ստացած քնագրում պահպանվել են դաշնակից երկրներից տասնչորսի անվանումները, երեքինը՝ ոչ, չի քացառվում, որ դրանցից մեկը եղել է Լուլլուբին:): «Քուրայի արքայի լեգենդի» համաձայն՝ դաշնակից տասնյոթ երկրների 90 հազարանոց բանակի տիրապետության տակ էին միավորվել Պուրուշխանդայից մինչև Էլամ ընկած տարածքները (նույնպիսի տարածաշրջան է ուրվագծվում նաև «Նարամ-Սուենն ու իր թշնամիները» քնագրի տեղագրական վերլուծության արդյունքում):

¹ Երեքն էլ ունեն նույն բովանդակությունը. «Նարամ-Սուենը՝ եզորը, (աշխարհի) չորս կողմերի արքան, նվաճող Արմանումի և Էրլայի» (SAKI, էջ 166-167; RISA, էջ 138-141; IRSA, էջ 106; RIM-SGP, էջ 136; Մատթոսեան, 1994, էջ 255):

² Ի տարբերություն նախորդների, Քարշումի քնագրերում Նարամ-Սուենը ներկայանում է իբրև «նվաճող Արմանումի, Էրլայի և Էլամի» (IRSA, էջ 111; RIM-SGP, էջ 166-167):

³ Forer, 1926, էջ 2, N 3; Hrozný, 1929, էջ 65-73: Դաշնակից 17 երկրները տարածված են եղել Փոքր Ասիայի կենտրոնից մինչև Ռոբոն լճի ավազանի հարավային շրջանը, իսկ Արմանին զտնվել է Արևմտյան Տիգրիսի սնման տարածաշրջանում (Վարանֆիլսան, 1929, էջ 287-288; Քարսեղյան, 1962, էջ 87-90; Մովսիսեան, 1993, էջ 113-127; Մատթոսեան, 1994, էջ 255-268՝ եղված գրականությանը համեմատ):



Նարան-Սունի նախակրթողը՝ Զվիգան Լույրախի երկրի ղյան կասարան
սրբափանքին ժայռնաքերն է Մուգախի սելանմեխն)

Հայկական լեռնաշխարհի տարածքներից բնագրում հիշատակվում են Ուման-Մանդան, «Ծովերը» (իմա՝ Վանա և Ուրմիո լճերը), Գուտիտնը, ընդ որում, նշվում է, որ քոլոր գորքերը հավաքվել էին «Սուրարտուի կենտրոնում»: Նարամ-Սուենը դաշնակից զորքերի դեմ է ուղարկում երեք բանակ (120 հազար, 90 հազար և 60700 զինվորներով), որոնցից ոչ մի կենդանի շունչ չի վերադառնում¹:

Անուրամնիից մեզ է հասել ժայռափոր կտրող՝ պատերազմի Իմանա-Իշտար դիցուիտ և իր պատկերով ու արադերեն արձանագրությամբ, որում նա ներկայանում է «*Իզոր արքա, արքա Լուլլուրումի*» տիտղոսներով: Չափազանց վնասված արձանագրության մեջ հիշատակվում են Վերին և Ներքին ծովերը, սակայն չի հասկացվում, թե ինչ առնչությամբ²:

Լուլլուրի երկիրը հիշատակվում է Նարամ-Սուենի թողած արձանագրություններից մեկում, որը ժամանակին՝ որպես ռազմավար՝ Սուգա է տարել Էլամի արքա Շուտրուկ-Նախունտեն, իսկ նոր ժամանակներում Սուգայի պեղումներից հայտնաբերել է Ժ. դը Մորգանը³:

Նարամ-Սուենի դեպի հյուսիս կատարած արշավանքների մեջ յուրօրինակ դիրք է գրավում դեպի Տիրար լեռն ուղղված ռազմերթը, որի մասին են պատմում նրա մի արձանագրության Նիպպուրից գտնված հինբաբելոնյան ժամանակաշրջանի երկու կրկնօրինակները: Վերջիններիս համաձայն՝ Նարամ-Սուենն արշավանքի ընթացքում հաղթում է Խարշամաթ երկրին, Տիրար լեռան վրա «*անձամբ տուրա-*

¹ Gurney, 1955, էջ 93-113: Թնագրի՝ այդ մասին պատմող հատվածի եալերին թարգմանությունը տե՛ս Հավելված, N 12:

² SAKI, էջ 172-173; RISA, էջ 150-151; IRSA, էջ 168:

³ «Նարամ-Սուենը՝ Իզորը ... (մոտ 9 տող պակասում է) ... Միդուրեցու և Սարունի Լուլլուրեցու հավաքեց, այդ բանակը նա պարտության մատնեց: Դեպի ... (մնացած մասը խիստ վնասված է)» (SAKI, էջ 166-167; RISA, էջ 142-143): Վերջերս առաջարկվել է «Սարունի Լուլլուրեցու» փոխարեն ընթերցել *լուլլուրեցի լեռնակամները* (RIM-SGP, էջ 143-144):

լում վայրի ցույն» և քանդակում իր պատկերը¹: Դժվար է ստույգ ասել՝ արշավանքն իրականացվել է Եփրատի², թե՞ Տիգրիսի հունով: Տիգրիսի տեղորոշման համար օգտակար է Միջագետքի արքաներից մեկի (որի անունը քննարկում ջնջված է) քավականին վնասված մի արձանագրությունը, ըստ որի դեպի հյուսիս կատարած արշավանքի 7-րդ օրն այդ արքան հասել է Առավիսա, 20-րդ օրն անցել Ջար գետն ու նվաճել Տաքրա և Ուրբիլում երկրները³: Ա. Կիֆիշինը փորձում է կապ տեսնել «Տաքրա» և «Տավրոս» անունների միջև, տեղորոշելով Տաքրան Հայկական Տավրոսի արևելյան հատվածում⁴: Առաջարկվել է նաև Տիգրիս լեռը նույնացնել Խարուր գետից քիչ արևմուտք գտնվող Ջերել 'Արդ ալ-'Ազիզ լեռան հետ⁵:

Նարամ-Սուենը Տիգրիսի հովտով արշավանքներ է ձեռնարկել դեպի Մեծ և Փոքր Ջար գետերի միջնատարածքում

¹ «Նարամ-Սուենը՝ արքան (աշխարհի) յոթ կողմերի, երբ մա հայրեց իւարշամարին և Տիգրսը լեռան վրա անձամբ տապալեց վայրի ցույն, նա իր պատկերը քանդակեց և նվիրեց Էնլիլ աստծուն՝ իր հորը: Ով որ ջնջի այս արձանագրությունը, քող Էնլիլ և Շամաշ աստվածները պատաստան նրա իկրեքը և ոչնչացնեն նրա սիրունիցը» (IRSA, էջ 108-109; RIM-SGP, էջ 126-127): Ժամանակին այս արձանագրությունն ցնքեցվում էր այլ կերպ, ըստ էին ընթերցման՝ Նարամ-Սուենը պատկերավորվել է Aram և Am երկրների տիրակալ Խարշամասուլիի դեմ, որի ընթացքում կործանել է Տիգրսը երկիրը (Thureau-Dangin, 1911, էջ 199-200; Gelb, 1952, էջ 110-112; Hirsch, 1963, էջ 21):

² RISA, էջ 338-339; Kaefermann, 1965, էջ 71:

³ Kaefermann, 1965, էջ 66: Նույն տեղում վերալայրվում է Հ. դը Փենույակի կարծիքը, որը հավելում է Տաքրայի համար գազափոփոխ փնարել Մարտատանում, ինչը քիչ հավանական է: Հայտնվել են Տիգրս/Տաքրայի տեղորոշման քիչ ձավանակա՛ն այլ տեսակետներ ևս. Բ. Հրոզմիհ Տիգրսը լեռնամունջ կապելով «Տավրոս» լեռների հետ՝ տեղադրում Կիֆիկիայից հյուսիս և հյուսիս-արևելք՝ ամռչելով ասորական աղբյուրների Տաքրայի հետ (Hrozy, 1929, էջ 75), Ջ. Լեվին, նույնացնելով Պարուր լեռան հետ, տեղադրում է Պուդեաստինում (Lewy, 1950-1951, էջ 357-386) և այլն:

⁴ RIM-SGP, էջ 127 (հոլում է M. Stol, On Trees, Mountains, and Millstones in the Ancient Near East. Leiden, 1979, էջ 25-30):

գտնվող Միմորրում երկիրը: Այդ մասին վկայող քննագրերից մեկը պատմում է միայն դեպի Միմորրում երկիր արշավանքի¹, մեկ ուրիշը՝ Միմորրումի դեմ տարած հաղթանակի և Միմորրումի ու Արամե երկրի տիրակալներին գերեվարելու մասին²: Երկրորդ արձանագրության մեջ ուշագրավն այն է, որ Նարամ-Սուենը հաղթում է Միմորրումին, Արամե երկրի նվաճման մասին խոսք չկա, քայց գերեվարվում են երկու երկրների տիրակալները: Դրանից կարելի է եզրակացնել, որ Արամե երկիրը գտնվել է ավելի հեռու (ավելի դեպքում՝ հյուսիսում), նրա կառավարիչը եկել է Միմորրումին օգնության, սակայն անհաջողություն է կրել վերջինիս կառավարչի հետ միասին:

Ելնելով Արամ երկրի տեղորոշումից և հետագա դարաշրջանների զուգահեռներից (տե՛ս տեղագրության բաժնում), մեծազույն հավանականությամբ Արամ երկրանունը կարելի է կապել հայկական ավանդության Արամին, որի անունով էլ, ըստ Պատմահայր Խորենացու, օտարները կոչեցին մեր երկիրն ու ժողովրդին: _

4. ԿՐՈՒՏԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Իբրև Նարամ-Սուենի արշավանքների քննական հետևանք՝ նրա դեմ, ըստ երևույթին, կազմավորվում է նոր դաշինք, որի գլուխ էր կանգնած Կուտիների երկիրը: Կուտիական փոսանգն այնքան շոշափելի էր, որ Արաղի տիրակալը դեպի Էլամ (Իրանի հարավ-արևմուտքում) կատարած արշավանքի ժամանակ ոչ թե ավերածություններ գործեց, այլ Էլամի արքայի հետ կնքեց հաշտության ու փոխօգնության

¹ «Տարին, երբ Նարամ-Սուենն արշավեց Միմորրումի վրա» (RIM-SGP, էջ 87):

² «Տարին, երբ Նարամ-Սուենը Կիրայնիվում հաղթեց Միմորրումին և գերեց Բարային՝ Միմորրումի կառավարչին, (և) Դուրային՝ Արամեի կառավարչին» (RIM-SGP, էջ 87): Միմորրումի կառավարիչ Բարան հիշատակվում է նաև մի խիստ վնասված արձանագրության մեջ (RIM-SGP, էջ 144-145):

պայմանագիր¹, ստեղծելով մի տեսակ հակակուտիական միություն: Էլամի արքա Կուտիկ-Ինշուշինակի (աքադական աղբյուրներում՝ Պուզուր-Ինշուշինակ) մեզ հասած մի արձանագրության մեջ կուտիական երկիրը՝ «Կուտու» ձևով, հիշվում է նրա թշնամի երկրների ցանկում, որոնց դեմ պատերազմել է ինքը²:

Սակայն դա ևս չէր փրկելու Նարամ-Սուենին կործանումից, որի և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականությունը շատ ամպեր էին կուտակել նրա գլխին: Իր իշխանության հենց սկզբից նա մեծ հարված էր հասցրել միջագետքյան բնիկ իշխանատոհմերին և քրմությանը՝ առաջիններից զրկելով տոհմական տիրույթներից, իսկ քրմական կարևորագույն պաշտոններում իր մերձավորներին նշանակելով: Վերջին միջոցառման արդյունքում հնարավոր դարձավ մախադեպը չունեցող սրբապղծությունը. Նարամ-Սուենն իրեն հռչակեց «աստված»՝ կործանելով աստվածների տաճարները և հատատելով իր անձի պաշտամունքը:

Դա առաջ բերեց նոր ընդվզում, որի ճնշման նպատակով փառամոլ բռնակալը գրոհեց շումերների սրբազան Նիպպուր քաղաքի վրա: Ըստ «Աքադի նգովումը» պատմա-վիպական բնագրի, սրբապղծությունից զայրացած մեծ աստվածները նգովեցին Աքադը, իսկ գերագույն աստված Էնլիլը (որի պաշտամունքի կենտրոնը Նիպպուրն էր) լեռներից Աքադի դեմ ուղարկեց կուտիների մեծաթիվ զորքերը³: Այս սողերում պետք է տեսնել շումերական քրմության խնդրանքով կուտիական զորքերի օգնություն գալու պատմության վիպականացումն ու դիցաբանական գունավորումը: Եվ օգնությունը չուշացավ. Միջագետքի կենտրոն արշավեցին կուտիական

¹ Դա մինչ օրս պատմությանը հայտնի ամառին արձանագրված դաշնագիրն է, որն ունի հետաքրքիր ատանցքային ձևակերպում՝ «Նարամ-Սուենի թշնամին իմ թշնամին է, Նարամ-Սուենի քարեկամն իմ քարեկամն է» (Xant, 1977, էջ 73-75):

² RISA, էջ 158-159:

³ Attinger, 1984, սուղ 141-156; ANET, էջ 649:

դաշինքի զորքերը, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց:

Կուտինևրի առաջնորդ Էնրիդա-պիզիրը Աքադի հարևանությամբ գտնվող Միպպալ քաղաքում (որն արևի պաշտամունքի կենտրոնն էր) կանգնեցրած արձանագրության¹ մեջ ներկայանում է պարտված Նարամ-Սուենից նվաճված «աշխարհի չորս կողմերի քաղաքներ» տիտղոսով: Նույն տիտղոսն է կրում նրա որդի Էրրիդու-պիզիրը, որի թողած երեք արձանագրություններից տեղեկանում ենք, որ նրա հայր Էնրիդա-պիզիրը նվաճել էր Միմուրբում և Լուլլուբում երկրները, որոնք իր օրոք ապստամբել էին Միմուրբումի արքայի գլխավորությամբ: Էրրիդու-պիզիրը ճնշում է ապստամբությունը և իր իշխանությունն ամրապնդում Միմուրբում, Լուլլուբում, Ուրբիլում, Մադգա և այլ երկրամասերի վրա: Հատկանշական է, որ այդ ժամանակ Աքադ քաղաքը գտնվել է Էրրիդու-պիզիրի իշխանության ներքո²:

Նարամ-Սուենի որդի Շար-կալի-շարիին (Ք.ա. 2217-2192 կամ 2200-2176 թթ.) հաջողվում է վերստին տիրել հոր գահին³, սակայն նրա իշխանությունը տարածվում էր միայն տերության մի մասի վրա: Նա այլևս չէր կրում «աշխարհի չորս կողմերի արքա» կամ «տիեզերքի արքա» տիտղոսները, այլ ստիպված էր քավարարվել միայն «Աքադի արքա» տիտ-

¹ Այս արձանագրությունը պեղումներից հայտնաբերվելուց որոշ ժամանակ անց անհետացավ և կորած է համարվում մինչ այժմ: Մենք ունենք հաղորդագրություն քնագրի հայտնաբերման մասին, որում նշված է արքայի անունն ու տիտղոսաշարը (տե՛ս, օրինակ, IRSA, էջ 128):

² Արձանագրություններից չորսը անշուշտ քանդակված է եղել մի արձանի վրա, որոնք մեզ չեն հասել: Մեզ է հասել իննսուսըսյան ժամանակաշրջանով թվագրվող մի քնագիր Նիպպուրից, որում արտացոլված են երեք արձանագրությունները՝ արձանների վրա ունեցած համապատասխան մակագրություններով (RIM-SGP, էջ 219-228): Գրականության մեջ երբեմն նույնացվել են Էնրիդա-պիզիրը և Էրրիդու-պիզիրը, մինչդեռ Նիպպուրից հայտնաբերած քնագրից պարզ է դառնում, որ նրանք հայր և որդի են:

³ Այդ ժամանակաշրջանի ուշագրավ մի մամուլի և իրադարձությունների մասին տե՛ս Smith, 1932, էջ 295-308:

դոսով¹: Նրանից մեզ են հասել մի քանի արձանագրություններ, որոնցից երկուսում հաղորդվում է, որ նա հասել է մինչև «ակունքների Տիգրիսի և Եփրատի»², ինչը յուրօրինակ ուխտագնացություն էր:

Աքադին հյուսիսից սահմանակից է դառնում կուտիական տերությունը, որի հետ նա ունենում է ռազմական քայտուներ: Այդ մասին են վկայում նրա արձանագրություններից երկուսը, որոնցից մեկը միայն հիշատակում է Գուտիումի պարտության մասին³, երկրորդում նշվում է, որ Շար-կալի-շարիին հաջողվել է հաղթել կուտիական Սարլակ (Շարլակ, Սարլագար) արքային և գերեվարել նրան⁴:

Շար-կալի-շարիի մահից հետո կուտիական զորքերին հաջողվում է տիրանալ Աքադին ու Շումերին և իրենց աշխարհակալության սահմանը հասցնել Պարսից ծոցի ջրերին: Քիչ անց կուտիական գերիշխանությունը տարածվում է նաև Էլամի վրա, որը Նարամ-Սուենի դաշնակիցն էր և պատերազմել էր ընդդեմ կուտիների: Այդ դեպքերից հետո շուրջ յոթ տասնամյակ շարունակվում է կուտիական գերիշխանությունը Առաջավոր Ասիայի զգալի մասի վրա:

Կուտիական աշխարհակալության ընդհանուր տևողության մասին հիմնիջագետքյան քննադերում պահպանվել են երեք, միմյանցից տարբերվող տեղեկություններ՝

ա) 21 արքաներ կառավարել են 125 (տարբերակ 24) տարի և 40 օր,

բ) 23 արքաներ կառավարել են 99 տարի,

¹ Շար-կալի-շարիի արձանագրությունները տե՛ս Hirsch, 1963, IRSA, էջ 27-30; RIM-SGP, էջ 182-208: Նրա արձանագրություններում չենք հանդիպում նաև «աստված» տիրոջսին, այդպես են նրան կոչում իր վասալներից միայն երկուսը, ընդ որում, միայն Աքադի հետ կապված՝ «Աքադի աստված», «աստված, Աքադի ինքս» (RIM-SGP, էջ 201, 206):

² RIM-SGP, էջ 191-194.

³ «Տարին, երբ Գուտիումը պարտվեց» (RIM-SGP, էջ 183):

⁴ «Տարին, երբ Շար-կալի-շարին Անունիքում դիցանիս տամարի և Բարկունում Իլարա աստծո տամարի [ինանքերը] դրեց և հաղթեց Շ-Սարլակին՝ Գուտիումի արքային» (RIM-SGP, էջ 183):

զ) 21 արքաներ կառավարել են 91 տարի և 40 օր¹;

Ժամկետների մասն անհամապատասխանությունը տարբեր աղբյուրներում, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Աքադը կուտիական տիրապետության տակ էր մտել դեռևս Էրբիլու-Պիզիրի (ինքնավոր է՝ նրա հայր Էնրիդա-պիզիրի) օրոք², ապա անցել Շար-կալի-շարիին և նրա մահից հետո կրկին ենթարկվել կուտիական իշխանությանը³:

Կուտիական աշխարհակալության պատմությունը կարելի է բաժանել երեք փուլի: Առաջինում կուտիական զորքերը, շարժվելով Հայաստանի հարավից, հաստատվել էին Միջագետքի հյուսիսում և այնտեղից արևելք ընկած շրջաններում (Միմուրբում, Լուլուբում, Ուրբիլում և այլն): Այս փուլը ժամանակագրորեն համընկնում է Նարամ-Մուենի իշխանության վերջին տարիների հետ: Երկրորդ փուլը կարելի է համարել Էնրիդա-պիզիրի արշավանքով Նարամ-Մուենի տապալումից մինչև Շարկարիշարիի մահն ընկած ժամանակամիջոցը: Այդ փուլում կուտիական գերիշխանության հարավային գիծը հասավ Աքադի տերության հյուսիսին, հակառակորդ կողմերի միջև տեղի ունեցան մի շարք բախումներ: Երրորդ փուլում՝ Շարկարիշարիի մահից հետո, կուտիական գահակալները տիրանում են Շումերին և Աքադին, ապա նվաճում Էլամը և մինչև աշխարհակալության ավարտը

¹ Hallo, 1971, էջ 711:

² Նրա անունը չի նշվում «Շումերական արքայացանկում», որպես կուտիական առաջին կառավարիչ այնտեղ նշվում է «անանուն արքան», որին ուսումնասիրողները հակված են նույնացնելու Էրբիլու-Պիզիրի հետ (SKL, էջ 117; RIM-SGP, էջ 219-220):

³ Հավանական է, որ կուտիական իշխանության քննիմանք ժամկետում հաշվարկված լինի և՛ Էրբիլու-պիզիրի, և նրա ձոր՝ Էնրիդա-պիզիրի գահակալումը, որտեղից էլ ակրմաբարձրներում պատկանված կուտիական 23 արքաների մասին տեղեկությունը: Նշենք, որ «Շումերական արքայացանկում» չի նշվում «անանուն արքայի» գահակալման տևողությունը:

(չորք յոթ տասնամյակ) տիրում են Առաջավոր Ասիայի մեծ մասին:

Աշխարհակալության տարածքային ընդգրկման մասին պատկերացում են տալիս կուտիական դարաշրջանի Միջագետքի ամենահայտնի կառավարիչ Գուդեայի արձանագրությունները¹: Դրանցում բվարկվում են այն երկրները, որոնցից նա զանազան շինանյութեր (այդ թվում բանկարժեք մետաղներ ու քարեր) է բերել տաճարաշինության նպատակով: Գուդեան ազատ տեղաշարժվում էր Առաջավոր Ասիայի մեծ մասում: Խասկանալիորեն, այդ երկրները պետք է գտնվեին կուտիների տերության մեջ (կամ ազդեցության ոլորտում), որոնց աջակցությունն էր վայելում Միջագետքի կառավարիչը:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհակալության արևելյան սահմանները ներառել են Էլամը, իսկ արևմտյան սահմանները՝ Ամանոսի (Մայրիմերի) լեռները: Տերության մեջ ընդգրկված է եղել ողջ Միջագետքը՝ Տիգրիսի արևելակողմյան ու Էփրատից արևմուտք ընկած հարակից տարածքներով: Հարավում սահմանը հասել է Պարսից ծոց: Գուդեան շինանյութեր է բերում մաս անդրծովյան Թիլմուն², Մագան և Մելոխա երկրներից³, դժվար է ասել՝ նրանց հետ կապը եղել է առևտրական, թե՛ այլ բնույթի: Հյուսիսում աշխարհակալությունը ներառել է Հայկական լեռ-

¹ Արձանագրությունները և դրանցում հիշվող երկրների աշխարհագրությունն տե՛ս Lambert et Tournay, 1951, էջ 49-66; Lambert et Tournay, 1952, էջ 75-86; Falkenstein, 1966, էջ 46-54; Kaeppeler, 1965, էջ 61-83 (նշված ուսումնասիրություններում բերվող մի քանի տեղորոշումներ այսօր ընդունելի չեն):

² Թիլմուն երկրի վերաբերյալ միջագետքյան աղբյուրներն ունեն երկու կարգի հաղորդում. մեկը, որ այն դախասն է, մյուսի ծամածայն, դա տվորակն մի երկիր է Բահրեյան կղզիներում տեղորոշվող: Գիցարսնական բնագրերի դախատ-Թիլմունը գտնվել է Հայկական լեռնաշխարհում (տե՛ս Մովսիսյան, 2004, էջ 33-37: Այստեղ խոսքը Բահրեյնի մասին է:

³ Մագանը տվորարար տեղադրվում է ներկայիս Օմանի տարածքում, Մելոխիսան՝ Հնդկաստանում: Կան տեղեքոշման այլ տեսակետներ ևս:

նաշխարհի բավական մեծ մի հատված (իննարավոր է՝ ողջ լեռնաշխարհը): Գուդնայի քնագրերը հիշատակում են Մե-
նուա լեռները¹, որոնք վաղուց համադրվել են սեպագիր աղբյուրների Մաննա երկրի (Ուրմիտ լճի ավազանի հարավում) և Հին Կտակարանի Միհնի քաղաքությունն ինքն² (որն Աստվածաշնչի քարգմանություններում հանդես է գալիս «Արմենիա» անվամբ կամ որպես «Արարատյան քաղաքություններից» մեկը³): Ընդ որում, Ա. Կիֆիշինն ուղիղ կապ է տեսնում լեռների և Վանի քաղաքությունն արքա Մենուայի անունների միջև⁴: Հայկական լեռնաշխարհին վերաբերող մյուս տարածքը Խախում լեռներն են, որտեղից բերվել է ոսկի⁵: Գուդնայի արձանագրություններից մեկը հիշատակում է նաև Արատտա երկրանունը⁶, սակայն քնագրի տվյալ հատվածի խիստ վնասված լինելու պատճառով հնարավոր չէ պարզել՝ ինչ առնչությամբ:

Ամփոփելով՝ տեսնում ենք, որ Ք.ա. XXIII-XXII դարերում Հայաստանից ծավալված կուտիական աշխարհակալությունն ունեցել է տարածքային հսկայական ընդգրկում՝ Ամա-

¹ Lambert et Tournay, 1951, էջ 56-57; Falkenstein, 1966, էջ 53; Կաֆուառ, 1965, էջ 65; ANET, էջ 269:

² Այս տեսակետը դեռ անցյալ դարում ստաց էր քաշվել Հ. Ենիսեյի, ապա պաշտպանվել այլ գիտնականների կողմից (տե՛ս Ըտրեք, 1904, էջ 105; Քաստմի, 1950, էջ 32; Կաֆուառ, 1965, էջ 65-67):

³ Ինգլիզեան, 1947, էջ 7-8, 176-177:

⁴ Հեղինակը նույնպիսի կապ է տեսնում Ք.ա. III հազարամյակում հիշատակվող Արամ երկրի և Ք.ա. IX դարի ասորեստանյան աղբյուրներում հիշատակված «Արամն ուրարտացու» անվանումների միջև (Կաֆուառ, 1965, էջ 66-67):

⁵ Lambert et Tournay, 1951, էջ 58-59; Falkenstein, 1966, էջ 53; Կաֆուառ, 1965, էջ 77; ANET, էջ 269:

⁶ «Անբիմ/կատարյալ՝ Քեշ (և) Արատտա երկրների պես...» (ETCSL, տող 734): Արատտան միջագետքյան քնագրերում ասորեանարար վերածվում է ասասպիական երկրի, անգամ տեղ է գտնում ասորային երկրում. «Արատտա» է կոչվում *GU₄.AN.NA («երկնային ցուլ») ասոր(ասսուր)ը (Weidner, 1963, էջ 118):

նոսի խոնքերից ձգվելով մինչև Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից մինչև Պարսից ծոց...

Տարալեզուլ արաղական բնապետությունը և իրենց գերիշխանությունը տարածելով Առաջավոր Ասիայի մեծ մասի վրա՝ կուտիական տիրակալները ոչ միայն շատեղծեցին մասնատիպ իշխանություն, այլև սկսեցին արմատախիլ անել սեմական բնապետության օրոք հաստատված ռեժիմի մնացորդներն ու հետևանքները: Պաշտոնից հեռացվեցին մախկիմում նշանակված դրամոնները, վերականգնվեցին շումերական ավանդական հոգևոր ու աշխարհիկ կարգերը: Վերսկսեցին գործել ավագների խորհուրդն ու ժողովրդական ժողովները, որոնք ընտրում էին իշխանավորին: Գուդեան, ըստ սկզբնաղբյուրների, ընտրվել է 216 հազար ժողովրդի կողմից¹:

Կուտիական ժամանակաշրջանից մեզ հասած միջագետքյան բնագրերը պատմում են հիմնականում մաքրագործումների և կրոնական բնույթի այլ իրադարձությունների մասին, այդ պատճառով հայտնվել է կարծիք, թե դա քրմական ռեակցիայի ժամանակահատված է, ինչը ճիշտ բնութաւում չէ: Իրականում դա շումերական հոգևոր ավանդույթների վերականգնման դարաշրջան էր և պատահական չէ, որ «շումերական վերածնունդը» սկսվեց իննց այդ ժամանակ:

Կուտիական արքաների տիրապետությունը պայմաններ ստեղծեց շումերական վերածննդի համար: Հարկ է նշել, որ Միջագետքում երկար պահպանվեց հիշողությունն արդարությունը վերականգնած արքաների մասին, գերիշխանության ավարտից ավելի քան կես դար անց Լագաշ քաղաքի իշխանները շարունակում էին կրել նաև «կուտիների երկրի կառավարիչ» տիտղոսը²: Ավելացնենք, որ Լագաշը դեռևս Ք.ա. XXV-XXIV դարերում հայտնի էր արդարության ու ազա

¹ Կես կարծիք, որ այս թիվը պետք է կարգաւ 36 հազար, որը ևս նշանակալի թիվ էր այն ժամանակներում (ИДВ, т. 262-263):

² IRSA, т. 163; Kärki, 1986, т. 98-99:



Statue of a seated female figure, possibly a goddess or queen, wearing a patterned headscarf and a long, pleated skirt.

տության համար մղվող պայքարի համար ավանդույթներով¹,
և հենց այդ քաղաքն էր դարձել կոտիական իշխանության
պատվարը Սիջագետքում:

Կոտիական կառավարման վերջում տեղի ունեցավ լուս-
նի խավարում, որը քրմերի կողմից մեկնվեց որպես նրանց
գերիշխանության ավարտի երկնային նախանշան: Ուշա-
գրավ է, որ Ռուոկ քաղաքում Շումերի քաղավորությունը վե-
րականգնելու դրոշը պարզապես Ռութխեգալի² գործերի հետ
ռազմական մեկ քախումից հետո կոտիները հետ քաշվեցին
իրենց լեռները՝ չփորձելով այդան մեջ խեղդել անկախութ-
յան համար ուրի կանգնածների շարժումը: Սա պատմութ-
յան այն հազվագեղ պրվագներից է, երբ ազատագրական ա-
ռաքելություն կատարողը, գալով իշխանության և ամրա-
պնդելով այն, չի վերածվում բռնակալի:

Կոտիական աշխարհակալության մեկնակետի տեղորոշ-
ման ճշգրտումը և Կոտի(ում)ի՝ իբրև Հայաստանի հնագույն
անվանումներից մեկի պարզաբանումը հնարավորություն են
տալիս լուսարանելու Հայաստանի հնագույն պատմության
մի քանի այլ դրվագներ և³:

¹ Մանրամասն տե՛ս Երցյաե, 1961 աշխատության էջերում:

² Ռութխեգալի մասին տե՛ս Kramer, 1963, էջ 325-326, 330-331; Sauren,
1967, էջ 75-79; RIM-SGP, էջ 280-296 և հղված աղբյուրները:

³ Տե՛ս Մուխիայան, 1997, էջ 24-29: Այս առթիվ մի ուշագրավ դիտարկում էլ
կատարել է Մ. Օհանյանը: Նրա կարծիքով կոտիական աշխարհա-
կալության իշխողությունը կարող է պատկանված լինել Արա Կեղծցիկի
և Շամիրամի մասին արարական գրույցում, ըստ որի հայերը պար-
տության են մատնել Շամիրամին իսպառլիս իսպառլիս՝ Արա Կեղծցիկի
հետո Ասորեստանի քսան քաղաքներն «հարկ էին վճարում հայոց
քաղաքներին» (Օհանյան, 2002, էջ 245-246):

5. ՈՐԻ III ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՆՆԱՇՆԱՐԿԸ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԸ

Ուրուխեզալի իշխանությունը կարճ տևեց: Նրա մահից հետո գերիշխանությունն Ուրուկից անցավ Ուր-Նամմուին¹, որն էլ դարձավ Ուրի III հարստության (Ք.ա. 2112-2003 թթ.) հիմնադիրը: Ուր-Նամմուից մեզ է հասել այսօր աշխարհում հայտնի հնագույն օրենսգիրքը²:

Ուրի III հարստության արքաները վերցրեցին արադական տիրակալների «Շումերի և Աքադի արքա» տիտղոսը: Ստեղծվեց հսկա բյուրոկրատական ապարատով պետական համակարգ, որը նպաստեց հիմարեւելյան տիպի բռնակցությունում վերջնական հաստատմանը: Շուլգիից սկսած՝ հարստության բոլոր արքաները կրում էին «աստված» տիտղոսը: Մեծ ուշադրություն դարձվեց երկրի տնտեսությանը, հատկապես, ռոտզման համակարգին: Չարգացավ գրականությանը:

Արտաքին քաղաքականության մեջ Ուրի III հարստությունը զգալիորեն զիջում էր արադական արքաներին: Նրանց արձանագրություններում բազմիցս հիշատակվում են Տիգրիսի հոսանքով դեպի հյուսիս կատարած արշավանքները, որոնց ընթացքում հիշատակվում են Սիմուրրում, Լուլլուրում, Ուրբիլում, Շաշրում, Խումուրում, Կիմաշ և Խարշի երկրները³ (տե՛ս ներդիր-քարտեզ 4-ը): Վերջինս, որ նշվածներից ամենապայծառն է, հիշատակվում է Շուլգի արքայի իշխանության 27-րդ ու 48-րդ տարիների ընթացքում: Այն համադրելի է Աշուրբանակալի արձանագրություններում հիշատակվող Խարսի լեռան և Թիգլաթապալասար Ա-ի հիշատա-

¹ Վերջինս եղել է Ուրուխեզալի ժառանգներից, ինչի մասին են վկայում Սերտիսեզալի օրոք նրա բողոք արձանագրությունը (RISA, էջ 360-361; IRSA, էջ 133; RIM-SGP, էջ 295-296):

² Kramer, 1954, էջ 40-51; Афанасьев, 1960, էջ 61-74; Römer, 1982, էջ 17-23:

³ SAKI, էջ 230-233; Edzard, 1959-1960, էջ 1-2; Киришин, 1965, էջ 69-72:

կամ Խարուսա լեռների հետ, որոնք տեղորոշվում են Ուրմիո լճի հարավում, Մամայի բազալտրոբյան հարևանությամբ¹: Տիգրիսի հովտով ավելի հյուսիս Ուրի III հարստության արքաներին չի հաջողվել քահանացել:

Եփրատի հոսանքով դեպի հյուսիս կատարած արշավանքներում Ուրի III հարստության արքաները տիրելով Մարիին՝ կարճ ժամանակով իրենց իշխանությանն են ենթարկել Էբլան և Ուրշուն, շինարարություն են իրականացրել Թեյլ Բրաք հնավայրի տարածքում²: Վերջինս գտնվում էր Սուրուր-Սուրարտուի հարավային սահմանի մոտ, որը մնաց Ուրի III հարստության արքաների վտանգավոր ախոյանը: Այդ են վկայում Շուլգիի ժամանակվա հետախուզական փաստաթղթերը, որոնցում Սուրուրը ներկայանում է հզոր ու բարգավաճ: Նամակներից մեկում հետախույզը Շուլգի արքային հաղորդում է, որ Սուրուր երկրի տիրակալն ուներ «արշավանքի տուն» (ներկայիս եզրաբանությամբ՝ «զլխավոր շտաբ»), որի պատերը զարդարված էին քանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված զինատեսակներով, տիրակալը նստում էր ոսկե գահի վրա՝ ոտքերը դնելով ոսկե աթոռակին: Օտարներըյա դեսպանի քնդոմեկության ժամանակ արքայի աջում և ձախում կանգնում էին նրա կատավարիչները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր նշանակված հինգ հազար ծառայողների³: Պատասխան նամակում Շուլգի արքան հանձնարարում է Սուրուրի «նեծ մարդկանցից», այսինքն՝ Ավագների ժողովի անդամներից

¹ Ենթադրվում է, որ Խարսի և Խարուսայի հետ պետք է կապել Արգիշտի Ա-ի Խորխոթյան տարեգրության մեջ հիշատակվող Մրսիտա(նի) երկրանունը (Մրսիտա(նի), Խարսի և Խարուսա տեղանունների մասին, Խաժառանգատախան հոդվածներով հանդերձ, տես ԿՄ, էջ 40-41, 225):

² ՄԻՅ, էջ 283: Ժամանակին տարածված այն պատկերացումը, քի Ուրի III հարստության արքաների տիրապետության տակ են գտնվել Փոքր Ասիայի սեմական առևտրական գաղութների տարածքը (Կապադոկիան և այլ շրջաններ) քննադատության չի դիմանում:

³ Kraemer, 1963, էջ 331-332:

«իմանալ նրանց խոսքը»¹, ինչը ցույց է տալիս, որ պետական կառավարման մեջ դեռևս Զ.ա. XXVIII-XXVII դարերից հայտնի արքային կից բարձրագույն խորհրդակցական մարմինը («Ավագների ժողովը») շարունակում էր գոյություն ունենալ նաև հազարամյակի վերջում:

Շուրջից հետո արտաքին քաղաքականության մեջ առավել աչքի բնկած Շու-Ստեֆն արքայի բնագրերից մեկում նշվում է, որ ավերել է Չարչալի երկիրն ու Սու ժողովրդի երկրները², մեկ ուրիշ բնագրում հաղորդում, որ ոսկի և արծաթ է բերել Սու ժողովրդի երկրից (=Սուրուր-Սուրարտունից)³:

Զ.ա. XXI դարում ևս Սուրուր-Սուրարտուն շարունակում է մնալ հզոր տերություն. այդ մասին է վկայում փաստը, որ վերջինիս զորքերը, դաշնակցած էլանականի հետ, մասնակցեցին Ուրի III հարստության իշխանության կործանմանը⁴:

6. ՀՆԱԳՈՒՅՆ ԽՈՒՌԻԵՐՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂՈՐՀՈՒՄՆԵՐԸ

Մինչ այսօր հայտնաբերված խուրիերեն հնագույն արձանագրությունը՝ գրված արադական սեպագրով (կանգնեցված Զ.ա. XXIII-XXI դարերի միջև) կապվում է Ուրբիշ քաղաքի հետ (Հայոց Միջագետքում), որը գտնվել է Մասիուս-Մասիոն լեռների հարավային լանջերին, ներկայիս բուրք-սի-

¹ Kraemer, 1963, էջ 332-333: Որքան մեզ հայտնի է, սա Հայաստանի հետախուզման առաջին դեպքն է՝ վկայված գրավոր աղբյուրներում:

² IRSA, էջ 155; Kärki, 1986, էջ 134-136:

³ Edzard, 1959-1960, էջ 6-8; Kärki, 1986, էջ 106-109: Շու-Ստեֆնի օրոք նրա վասալ, Լազաշի կառավարի Իր-Նաննայի տիրույթաշարուն նշվում են մի շարք երկրներ (IRSA, էջ 163; Kärki, 1986, էջ 98-99), ինչը կուտիական ժամանակաշրջանից մնացած հիշողություն է (տե՛ս վերը) և չի կարելի այդ երկրները համարել Շու-Ստեֆնի տիրապետության մաս:

⁴ Այդ մասին են վկայում «Որք Ուրի անկման» և «Որք Շումերի և Ուրի անկման» («Որք Շումերի և Աքադի անկման») անունները տտաղած բնագրերը (ANET, էջ 455-463 և 611-619, երկուսն էլ՝ Ա. Ն. Քրամերի բարձրամտությամբ):

րիական սահմանի մոտ, Մարդին քաղաքից հարավ (Մոզան հնավայր): Այն վերաբերում է անդրաշխարհի Ներգալ աստծո պաշտամունքին նվիրված տաճարի կառուցմանը և, ինչպես համանման այլ արձանագրությունները, ավարտվում է կառույցը ոչնչացնողներին ողողված, աստվածներից ակնկալվող անեծքի քանաձևով:

«Թիշարիմ¹ արքան է Ուրբիշի: Տաճարը Ներգալի (նա) կառուցեց, տաճարն այդ Լուրադագան թող սյահայանի: Նա, ով այն իրոք ոչնչացնի, նրան Լուրադագան թող ոչնչացնի, Անը թող չսի աղոթքը նրա, ով այն իրոք կաշնչացնի, նրան թող «NIN.NA.GAR», Շիմիգն և Թեշուր աստվածները անբիվ-անհամար անգամ նկուխն»²:

Արձանագրությունը կարևոր վկայագիր է Ք.ա. III հազարամյակի վերջին դարերում Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների հոգևոր-պաշտամունքային իրավիճակի մասին: Հատկանշական է, որ հենց այս շրջանին (Տիգրիսի ակունքներից) են վերաբերում միջագետքյան դիցարանական քննադրերի (հատկապես «Նինուրթա աստծո սխրանքներն ու գործերը»³ և «Ինաննամ ու Էրիխը»⁴ վիպասերի) հաղորդումները Կուր անդրաշխարհի և նրա տիրակալ Ասագի (աքադ. Ասակկու) մասին: Միջագետքյան անդրաշխարհի տեղայնացումը լիովին համապատասխանում է հնագույն հայկական համարժեք հավատալիքներին: Աստվածաշնչի հայերեն քարգմանության մեջ միջագետքյան անդրաշխարհի տիրակալ Ներգալի անունը փոխարինված է Անգեղով (Թագավորաց Դ, 17,30), ինչը ցույց է տալիս վերջինիս նույնպիսի դերակատարումը հայոց հիմ դիցարանում: Իսկ Անգեղի պաշ-

¹ Անունը նախապես ընթերցվում էր Թիշարի, վերջերս վերանայվել է ատալի ընդունելի համարվել «Թիշարա» տարբերակը (Wilhelm, 1998, էջ 120-121):

² Дьяконов, 1967, էջ 443-445; Diakonoff, 1971, էջ 110; Wilhelm, 1982, էջ 15-16; Wilhelm, 1998, էջ 119-120:

³ van Dijk, 1983; Kramer, 1961, էջ 79-82; Крамер, 1965, էջ 206-208; ETCSL, 1.6.2:

⁴ Kramer, 1961, էջ 82-83; ETCSL, 1.3.2:

տաճուճի կենտրոնը՝ Անգեղ տուն գավառը գտնվում էր հենց Արևմտյան Տիգրիսի ակունքներում (Աղճնիք մահաճում)¹։

Վերջին տարիների ընթացքում հայտնաբերվեցին արձանագրության երեք կրկնօրինակներ, որոնցից երկուսը ներկայումս պահվում են Լուվրում, մեկը՝ Նյու-Յորքի Մետրոպոլիտան բանճարանում²։ Մոճան հնաճայրի պեղումներից գտնվել են մաև կնիքներ՝ մեկ այլ արքայի հակիրճ մակագրությամբ. «*Թուփրիշ արքա Ուրբիշի*»³։

Այսպիսին է Հայաստանի Ք.ա. III հաճարամյակի քաղաքական պատճության մասին օտար աղբյուրներից մեր ստաճամ տեղեկությունների ընդհանուր պատկերը։ Մեկ անճան ևս հիշենք, որ դեռևս կան հայտնաբերվաճ, սակայն չիրատարակվաճ օտարերկրյա բնաճեր, իսկ Հայկական լեռնաշխարհից հայտնաբերվաճ Ք.ա. IV-II հաճարամյակներով թճաճրվող ճրավոր նյութն անբողջությամբ մնում է չվերճանվաճ։ Այս ուղղությամբ ուսումնասիրությունների շարունակությունը, անշուշտ, կրերի նոր անակնկալներ։

¹ Նշվաճ հարցերի մասին մանրամասն տե՛ս Մովսիսյան, 2004, էջ 37-40։

² Ivanov, 2002, էջ 92 (և ճան. 1-ում հղվաճ ճրակամությունը)։

³ Ivanov, 2002, էջ 92 (և հղվաճ ճրակամությունը)։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀՈՒՄ Զ.Ա. III
ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Հայկական լեոնաշխարհի Զ.ա. III հազարամյակի հատարակական-պետական կարգերի ուսումնասիրությունը կարևորվում է հատկապես այն պատճառով, որ այդ ժամանակաշրջանում են սաղմնավորվում հետագա դարերի ու հազարամյակների հայաստանյան պետականության շատ տարրեր:

Սկզբնաղբյուրների համաձայն, Արատտայում իշխանության գլուխ էր կանգնած քրմապետ-արքան, որին, ըստ հավատքի, նշանակել էր «տիեզերքի տիրուհի» համարվող մայր դիցուհին (շումերական Ինաննային համարժեք)¹: Նրա իշխանությունը տարածվել է և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանությունների ոլորտներում. եղած փաստերից դատելով՝ երկրի կառավարման համակարգը եղել է աստվածապետական (կրոնապետական, թեոկրատական)²:

Արքային կից գործել է բարձրագույն խորհրդակցական

¹ Kramer, 1952, էջ 19-21; Kanesa, 1964, N 4, էջ 210; Cohen, 1973, էջ 123:

² Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցությունը հայոց պատմության հետագա դարերում, թեոկրատիայից անցումը աշխարհիկ պետության ունեցել է հետաքրքիր ընթացք: Նախ տեղի է ունենում քրմապետ-արքայի պաշտոնի քաժանումը արքայի և քրմապետի, ընդ որում, սկզբնական շրջանում արքայական ընտանիքն իր ձեռքում է պահում մահ քրմապետի պաշտոնը (Երվանդ Դ-ի օրոք քրմապետը մրա եղբայր Երվազն էր, Արտաշես Ա-ն քրմապետ դարձրեց իր որդի Մաժանին), ավելի ուշ այդ պաշտոնը տրվում է քրմապետական տոհմին (Վահանիներ), որի իրավասությունները քրիստոնյա Հայաստանում անցնում են Գրիգոր Լուսավորչի տոհմին: Հետագայում կարողիկության պաշտոնը դարձավ ընտրովի, շատ ավելի ուշ տեղի ունեցավ եկեղեցու և պետության անջատումը...

ժողով՝ Ավագների ժողովը, որի հետ խորհրդակցելով՝ քրմապետ-արքան որոշում էլ ատավել կարևոր պետական հարցերը (պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել և այլն)¹: Ավագների ժողովը Հայաստանում հիշատակվում է նաև հետագա դարերում՝ հիմք դառնալով Մեծ Հայքի բարձրագույն խորհրդակցական մարմնին՝ «Աշխարհաժողով»-ին²:

Արատտայում հիշատակվում է «կատավարիչ» կոչվող պաշտոնյան³, որը, դատելով փաստերից, եղել է տնտեսական ոլորտի գլխավոր պատասխանատուն և կարող է զուգադրվել հետագա Հայաստանի հազարապետի պաշտոնին⁴:

Բնագրերի տեղեկություն են պահպանել Արատտայի արքունի շտեմարանի և արատտացի պաշտոնյաների՝ հարկահավաքների և վերակացուների մասին⁵, որոնք մի կողմից վկայում են երկրի կազմակերպված պետական կառույցի,

¹ Նման մի ժողով է նա երավիրած վերոհիշյալ արշավանքից առաջ, որում ինչպես երևում է «Էնմերթարը և Էնսուխքեշչամման» քնագրից, նրա ձայնն ունի վճռողիչ նշանակություն (Berlin, 1979, էջ 48-51; ETCSL, 1.8.2.4, տող 140-169): Գիլգամեշին փատարանող «Գիլգամեշն ու Ագան» վիպերգում (Kramer, 1949, էջ 1-18; Kamena, 1964, N 3, էջ 260-267; ETCSL, 1.8.1.1) Ավագների ժողովից բացի, հիշվում է նաև երկրորդ «քաղաքի տղամարդկանց ժողովը», քնագիրը վերծանող Ս. Ն. Արամերը կատավարման այս համակարգը կոչում է «առաջին երկրպալատ պաղաճննա»): Դժվար է ասել՝ գոյություն ունեցել է Արատտայում նման երկրորդ ժողով, թե ոչ, բայց վերագույն քրմին կից բարձրագույն խորհրդակցական ժողովի՝ Ավագների ժողովի գոյությունը փաստ է:

² «Աշխարհաժողով»-ի մասին մատենագրական տեղեկությունները տես Մամանդյան, 1981, էջ 249-252:

³ «Էնմերթարը և Էնսուխքեշչամման» քնագրում այդ պաշտոնյան կրում է շտեմերեբն *sukkal*՝ «կատավարիչ» տիտղոսը (Berlin, 1979, էջ 48-49; ETCSL, 1.8.2.4, տող 150-151), իսկ «Էնմերթարը և Արատտայի տիրակալը» քնագրում՝ «շարթան», որի խմատող լիովին պարզ չէ (Kramer, 1952, էջ 32-33; Kamena, 1964, N 4, էջ 216; Cohen, 1973, էջ 126; ETCSL, 1.8.2.3, տող 444):

⁴ «Հազարապետություն» գործակալության մասին մատենագրական տեղեկություններն էլ մի բերված տես Մամանդյան, 1981, էջ 241-244:

⁵ Kramer, 1952, էջ 22-23; Kamena, 1964, N 4, էջ 212, 218; Cohen, 1973, էջ 126; ETCSL, 1.8.2.3, տող 280-285, 556:

մյուս կողմից՝ համակարգված տնտեսական կյանքի մասին:

Ք.ա. XXIII դարից սկսած ավելի քան մեկ հազարամյակի ընթացքում Հայկական լեռնաշխարհում հիշատակվում է պետական կառավարման նոր ձև: Դա անկախ իշխանությունների համադաշնությունն է, որի միավորման հիմքում, հնարավոր է, ընկած է եղել հոգևոր-էթնիկական ընդհանրությունը: Նարամ-Սուենի արձանագրություններում հիշատակվում են «Սուբարտուի կառավարիչները և Վերին երկրների տիրակալները»¹: Նարամ-Սուենի դեմ դաշնակցած Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածքների տասնյոթ երկրների մասին է պատմում «Քուբայի արքայի լեզենդը» անունով հայտնի վիպասը: Վիպասի համաձայն՝ դաշնակից տասնյոթ երկրների 90 հազարանոց բանակի տիրապետության տակ էին միավորվել Գուրուշխանդայից մինչև Էլամ ընկած տարածքները, ընդ որում, նույնպիսի տարածաշրջան է ուրվագծվում նաև «Նարամ-Սուենն ու իր բշնամիները» քննարկում հիշատակված տասնյոթ երկրների տեղագրական վերլուծության արդյունքում (Հայկական լեռնաշխարհի տարածքներից քննարկում հիշատակվում են Ուման-Մանդան, «Շովերը»՝ Վանա և Ուրմիտ լճերը, Գուտիումը, նշվում է, որ բոլոր զորքերը հավաքվել էին «Սուբարտուի կենտրոնում»)²:

Նարամ-Սուենի իշխանության անկումով նրա՝ «աշխարհի չորս կողմերի արքա» տխրոսն անցավ կուտիական արքաներին (տե՛ս Գ. գլխում): Ուշագրավ է, որ տեր դառնալով հսկայածավալ մի աշխարհակալության՝ նրանք փոփոխության շնորհիվ կրեցին իրենց կարգերը, մասնավորապես, արքայի ընտրության ավանդույթը: «Շումերական արքայացանկում» նշվում է, որ «Գ/Կուտիում երկրում սկզբում ոչ մի արքա հայտնի չէր, նրանք ... իշխում էին 3 (տարբերակ՝ 5) տարով»: Այնուհետև մյուս արքաների իշխանության ժամկետ-

¹ Բնագրում՝ «Սուբարտուի ԵՏԻ-ՆԵՐԵ Վերին երկր(ներ)ի ԵՆ-ԻՐԵ» (RIM-SGP, էջ 90-91, 130-131):

² Այս մասին մարեմանան տե՛ս Գ. գլխում:

ներում ևս որոշակիորեն երևում են ընտրովի կառավարման կրկնվող բվեր¹:

Կուտիական արքաներն անմիջապես իրենք չէին կառավարում գերիշխանության տակ մտնող երկրները: Այդ գործը նրանք հանձնարարում էին տեղացիներից ընտրված կառավարիչներին (հմնտ. Գուդեայի վերոհիշյալ օրինակը), որոնք կանոնավոր կերպով հարկեր ու նվերներ էին ուղարկում չեմական արքաներին: Հարկերի մեջ մտնում էին հիմնականում երկրագործական ապրանքներ (հացահատիկ, բուսական յուղեր և այլն), իսկ որպես նվեր ուղարկվում էին թանկարժեք քարերից ու մետաղներից պատրաստված զանր, զենքեր ու զարդեղեն (վերջիններս հասցեագրվում էին հիմնականում արքայական ընտանիքի անդամներին)²:

Ուրի III հարստության ժամանակաշրջանի հետախուզական փաստաթղթերում Մուրիբ (Մուրուր-Մուրարուտ) երկիրը ներկայանում է հզոր ու բարգավաճ: Նամակներից մեկում Շուլգի արքային հաղորդվում է, որ Մուրիբ երկրի տիրակալն ունի «արշավանքի տուն» (ներկայիս եզրաբանությամբ՝ «գլխավոր շտաբ»), որը զարդարված էր թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված զինատեսակներով, տիրակալը նստում էր ոսկե գահի վրա՝ ոտքերը դնելով ոսկե արձուակին: Կային զորակալաններ, որոնք կերակրվում էին արքունիքի կողմից, այսինքն՝ կար մշտական մասնագիտացված բանակ³: Նամակներում տեղեկություններ կան Մուրիբի Ավագների ժողովի մասին⁴, ինչը ցույց է տալիս, որ պետա-

¹ SKI., էջ 116-121; Kramer, 1963, էջ 330; ETCSL, 2.1.1, տող 308-334:

² Точменев, 1956, էջ 210-211:

³ Kramer, 1963, էջ 331-332; ETCSL, 3.1.01: Որքան մեկ նախնի է, սա Հաստտանի հետախուզման առաջին դեպքն է՝ վերջիվերջ գրավոր արդյունքում:

⁴ Kramer, 1963, էջ 332-333; ETCSL, 3.1.01-02: Հետաքրքիր է, որ այդ նամակներում Մուրիբի տիրակալը ներկայանում է որպես «Շողովի ինաստուն»: Արդյո՞ք սա տիտղոս չէ, որը կարող է ցույց տալ, որ բնութագրող արքան նախագահել է Ավագների ժողովում և համարվել նրա առաջին դիմը («ինաստունը»)...

կան կառավարման մեջ դեռևս Ք.ա. XXVIII-XXVII դարերից հայտնի արքային կից քարձրագույն խորհրդակցական մարմինը շարունակում էր գոյություն ունենալ մաս հազարամյակի վերջում:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Հայաստանում Ք.ա. III հազարամյակում առկա է պետական կառավարման աստվածապետական (կրոնապետական, քեոկրատական) մոդելը, որի գլուխ կանգնած է քրմապետ-արքան, նրան կից գործում է Ավագների ժողովը, երկրում կան տնտեսական և ռազմական քնույրի հաստատություններ՝ իրենց պաշտոններով: Ք.ա. XXIII դարից սկսած փաստվում է անկախ իշխանությունների համադաշնության համակարգը, որը տեսնում ենք մաև Ք.ա. II հազարամյակում՝ «Նաիրյան երկրների» դաշինքի տեսքով:

Հին Արևելքի գրավոր աղբյուրներում ուշագրավ տեղեկություններ կան մաև Հայկական լեռնաշխարհի Ք.ա. III հազարամյակի տնտեսական իրավիճակի մասին:

Բնագրերը տեղեկացնում են Արատտայում ոսկու, արծաթի, բրոնզի, կապարի, լազվարդի ու սարդիոնի մշակման մասին: Կարևոր է մաև, որ Արատտայում գործ է ածվել շափ ու կշռի միավոր՝ «մինա» (տե՛ս Գ գլխում):

Բացի մետաղներից ու քանկարծեք քարերից, Հայկական լեռնաշխարհից հարավ էր տարվում մաև շինարարական հումք՝ «լեռնային քարեր»: Ըստ «Էնմեքբարը և Արատտայի տիրակալը» քնագրի, Ուրուկի նշանավոր Էաննա տաճարը կառուցվել է Արատտայից տարված քարով²:

¹ Kramer, 1952, էջ 6-7, 8-9, 12-15, 42-43; Kanana, 1964, N 4, էջ 205-206, 208, 219; Cohen, 1973, էջ 112, 113-118, 140; ETCSL, 1.8.2.3, տող 17-18, 38-42, 124-126, 620-621:

² Kramer, 1952, էջ 8-9; Kanana, 1964, N 4, էջ 205; Cohen, 1973, էջ 113; ETCSL, 1.8.2.3, տող 31-32: Հայկական լեռնաշխարհից Եփրատով Արշազնոց նսկայական քարաքեղևի տեղափոխման մասին Դիոդորոս Սիկիլիացու պատկանված տեղեկության մասին տե՛ս վերջ:

Արատտայում հիշվող արքունիքի, գեղազայն քրմի «զուսե կացարանի», շտեմարանի, տաճարների, ինչպես նաև Շումեբում տաճարներ կառուցած արատտացի ճարտարապետ-շինարարների մասին տեղեկություններից¹ պետք է ենթադրել Արատտայում տաճարաշինության և ճարտարապետության այլ ճյուղերի զարգացման բարձր մակարդակ:

Արատտայում արիեստների բարձր զարգացման մասին կարող է վկայել հիմնիջագետքյան աղբյուրներում աստվածային համարվող «արատտական» կոչվող գահի հիշատակությունը²: Դա կարող էր պայմանավորվել նաև հին միջագետքյան հոգևոր ընկալումներում Արատտայի՝ «աստվածային սուրբ օրինաց երկիր» համարվելով³:

Արատտան լեռնային երկիր էր, որի տնտեսության մեջ առաջնակարգ դեր է խաղացել ամասնապահությունը, կարևոր դեր է խաղացել նաև երկրագործությունը, հիշատակվում է ցորենի ու սիսեռի մշակություն⁴: Երկրագործական մթերքների պակասը լրացնելու համար արատտացիները հացահատիկ են ներմուծել հարթավայրային Շումեբից՝ փոխարենն այնտեղ արտահանելով մետաղներ ու բանկարժեք քարեր⁵: Նրանք մետաղները փոխանակում էին նաև «ծառերի պտուղների», գինու հետ⁶:

¹ Kramer, 1952, էջ 14-15, 28-29; Kassaba, 1964, N 4, էջ 208, 214; Cohen, 1973, էջ 118; ETCSL, 1.8.2.3, սող 130-133, 374-377:

² AD, հատոր A, մաս II, 1968, էջ 238-239:

³ Շումեբքրմի՝ KUR-ME-SIKIL-LA, այն քաղաքանվել է սուրբեր կերպ (տե՛ս օրինակ Kramer, 1952, էջ 21; Kassaba, 1964, էջ 208, 210; Cohen, 1973, էջ 123; Berlin, 1979, էջ 57 և այլն): Քանի որ «մե» էին կոչվում ստտվածային սրբազան օրհներհրը, մենք նախընտրում ենք «աստվածային սուրբ օրինաց երկիր» քաղաքանությունը:

⁴ Kramer, 1952, էջ 40-41; Kassaba, 1964, N 4, էջ 218; Cohen, 1973, էջ 139; ETCSL, 1.8.2.3, սող 551-552:

⁵ Kramer, 1952, էջ 26-27, 44-45; Kassaba, 1964, N 4, էջ 213, 219-220; Cohen, 1973, էջ 128-129, 142-143; ETCSL, 1.8.2.3, սող 329-335, 619-626:

⁶ Kramer, 1952, էջ 44-45; Kassaba, 1964, N 4, էջ 219-220; Cohen, 1973, էջ 142-143; ETCSL, 1.8.2.3, սող 551-552:

Տնտեսության մեջ կարևոր դեր են խաղացել կենդանիները, որոնք օգտագործվել են որպես քաշող ուժ և փոխադրամիջոց: Շումերական բնագրի համաձայն՝ շումերները խաղաղ, նաև ռազմական արշավանքների ժամանակ որպես փոխադրամիջոց օգտագործել են էշեր, հեծյալներին նրանք կոչում են «էշերի կողերը սեղմողներ (խրողներ)»¹: Ք.ա. XXVIII-XXVII դարերում շումերները ձի չեն օգտագործել: Ի տարբերություն Շումերի, ապրանքների փոխադրումն Արատտայում իրականացնում էին ձիերի միջոցով²: Պետք է ենթադրել, որ ձիերն օգտագործվել են նաև ռազմական գործում: Նշենք, որ սա ձիերի առաջին հիշատակությունն է գրավոր աղբյուրներում:

Հայկական լեռնաշխարհի տնտեսական իրավիճակի տարանմանը նպաստում են կարևոր նշանակություն ունեցող մի շարք տնտեսական բնույթի վավերագրեր, որոնք վերաբերում են Միջագետքում բնակություն հաստատած հայաստանցիներին (ան՝ս հաջորդ գլխում), կոտիական արքաներին տրվող հարկերին³, հայաստանյան մետաղագործությանը⁴, առևտրականներին⁵ և այլն:

Հայկական լեռնաշխարհի Ք.ա. III հազարամյակի տնտեսության ուսումնասիրությանը մեծ նպաստ կարող են բերել էրլայի բնագրերը, որոնք, ինչպես նշվել է, դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել հայագետների կողմից:

¹ Kramer, 1952, էջ 27; Kanessa, 1964, N 3, էջ 264; Kanessa, 1964, N 4, էջ 213; Cohen, 1973, էջ 128; ETCSL, 1.8.1.1, սող 27; ETCSL, 1.8.2.3, սող 331-335:

² Kramer, 1952, էջ 14-15; Kanessa, 1964, N 4, էջ 208; Cohen, 1973, էջ 118; ETCSL, 1.8.2.3, սող 127: Շումերերեն «ձի» (ANŠU-KUR-RA) բառացի նշանակում է «շեմեային էշ»:

³ Шелефов, 1915, էջ XXXI; Тюменев, 1956, էջ 210-211 (նաև եղվող գրականությունը):

⁴ Շումերական դուրսագնավագից և Գուդեայի արձանագրություններից բացի Հայաստանից Միջագետք մետաղների (և բանկաթեղեք քարեր) տանելու մասին վկայում են Ուրի III հարստության արքա Շու-Սուենի բնագրերը (ան՝ս Kärki, 1986, էջ 106-109, 131-132):

⁵ Օրինակ՝ Նարամ-Սուենի բնագրերից մեկը, որը հիշատակում է Սուարուտի առևտրականներին (RIM-SGP, էջ 88-90):



Միգրանական եւեկ ջանքակ կերտւած զարչչուն Միգաւորիկ



Ուրբ III հարատւում իրենաւի Ուր-Նարմուի պատկերարանայից

Գլուխ Ե

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀԻՆ ԱՐԵՎԵԼԵՌՈՒՄ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՂ

Հայաստանի՝ քաղաքակրթության բնօրրան լինելու մասին գրվել են և դեռ կգրվեն քազմաթիվ հատորներ: Մեր նյութում նման տեղեկությունների առկայության տեսակետից կարևորվում է այն, որ դրանք հանդիպում են ինչպես դիցաբանական, այնպես էլ զուտ պատմական բովանդակությամբ բնագրերում:

Հին միջագետքյան դիցարանությունը Հայկական լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստնագույնի՝ արարչագործ, իմաստության, համաշխարհային օվկիանոսի ու ստորերկրյա ջրերի աստված Հայա-Էնկլիի պաշտամունքը: Միջագետքյան հավատալիքների համաձայն՝ նրա գլխավոր կացարանում էին բնակվում յոթ իմաստունները, որոնց Հայա-Էնկին ողորակեց քաղաքակրթություն տարածելու մարդկանց մեջ: Նրանցից հատկապես հայտնի է Օաննեսի պատմությունը (շնորհիվ Բերոսոսի գրառման), որը մինչ այդ կենդանիների նման ապրող Բարեղունի ժողովրդին սովորեցրեց գիր, գիտություններ, շինարվեստ, երկրագործություն և այլն¹:

Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր պատկերացումներում աստվածաբնակ ու սրբազան համարվող Հարայի երկիրը, որ պատմական տարածք է Հայկական լեռնաշխարհում, հանդես է գալիս իբրև քաղաքակրթության բնօրրան²:

¹ MM, էջ 182-183; Schmsbel, 1923, էջ 253-256; Афанасьев, 1992 (б), էջ 234;

² Մովսիսյան, 2004, էջ 22-27 (հղված աղբյուրներով հանդերձ): Հարայի հետ են կապվում մեր նախնիների դիցաբանության «ժարակեզ»

Միջագետքյան հնագույն քնագրերի ու Աստվածաշնչի գաղափարասյուժետային առնչակցությունն ակնհայտ է մաև նախասկզբնական իմաստության բեմատիկայում: Բարու և չարի իմացության ծառն, ըստ Շենդոց գրքի, գտնվել է Եղեմում՝ Հայկական լեռնաշխարհում, որ և առաջին մարդիկ հաստ են դարձել իմաստությանը (Շենդոց, 3, 1-7): Այդ առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի շումերական քնագրերից մեկի հաղորդումը, որի համաձայն «Իմաստությունն ու արվեստը ցած բերվեց Արատտայից»¹:

Հայկական լեռնաշխարհի բնիկների մասին միջագետքյան գոտ սրատմական տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը վերաբերում է բուն Հայկական լեռնաշխարհին, երկրորդը՝ Միջագետքում քնակություն հաստատած մեր նախնիներին: Առաջին խմբի տեղեկությունների շարքում կարելի է նշել շումերական դյուցազնավայի հաղորդումները Արատտայում զարգացած մետաղագործության և այնտեղից մետաղների արտահանման մասին նշումները, որոնց մասին խոսվեց նախորդ գլխում: Նույն աղբյուրը հաղորդում է շատ ուշագրավ մի տեղեկություն ևս. արատտացի վարպետները Շումերում կառուցել են ճարտարապետական կառույցներ, որոնցից էր Ուրուկի հռչակավոր Էաննայի տաճարը (որի անունով երբեմն կոչվել է Ուրուկ քաղաքը)²:

Արատտայում, ըստ շումերական քնագրերի, գործածվել է սեփական գրային համակարգ: Այդ հաղորդումը լիովին համապատասխանում է հայաստանյան նյութին. Հայկական լեռնաշխարհում գրի ծագման և զարգացման ընթացքի ու-

(«յարալեզ») կամ «արալեզ» կոչվող էակները, որոնք օժտված էին մարտադաշտում զոհված հերոսներին հարություն տալու շնորհով (արալեզների մասին մանրամասն տե՛ս Մառնիկեան, 1930, էջ 107-170; Դավիանցյան, 1944, էջ 28-34):

¹ Berlin, 1983, էջ 22 (նրվում է Alster B., Studies in Sumerian Proverbs, Mesopotamia, "Studies in Assyriology", 3, Copenhagen, 1975, էջ 128, ծմբ. 32):

² Kramer, 1952, էջ 8-9, 14-15, 28-29; Kanana, 1964, N 4, էջ 205, 208, 214; Cohen, 1973, էջ 113, 118; ETCSL, 1.8.2.3, սող 31-32, 130-133, 374-377:

սումնասիրությունը ցույց է տալիս, որ Ք.ա. V-IV հազարամյակներում վաղ պատկերագրության զարգացումով ստեղծվում է գաղափարագրությունը, որի կատարելագործման շնորհիվ էլ առաջ է գալիս Հայաստանի գծային գիրը (վերջինս կիրառվում է Ք.ա. III հազարամյակի կեսերից մինչև Ք.ա. I-ի սկիզբը)¹:

Երկրորդ խմբի առավել վաղ շրջանի քնագրերը (Ք.ա. XXVI-XXV դդ.) սուրբեցիներին (Սուրուր = Արատտա = Արմանի = Հայաստան) հիշատակում են որպես դպիրներ, դարապետեր, հացբուխներ, հացբուխապետեր, դարբիններ, իսկ քիչ ավելի ուշ շրջանի քնագրերը՝ դարբիններ և այգեգործներ: Երբ այս տեղեկություններին ավելացնում ենք շումերական դյուցազնավեպի հաղորդումները Հայաստանից Միջագետք գնացած ճարտարապետների և առաքված մետաղների մասին, ստանում ենք հետաքրքիր պատկեր: Հայաստանից Միջագետք գնացած մեր մաթեմիկները եղել են քաղաքակրթական առնվազն հինգ ոլորտների կրողներ ու տարածողներ՝

ա) դպրության (ընդ որում, դարապետների առկայությունը քույլ է տալիս հետոն գնացող եզրակացություններ անել),

բ) մետաղամշակության,

գ) ճարտարապետության,

դ) հացի մշակության (ինչը շատ լավ համադրելի է բազմաթիվ ուսումնասիրություններում շեշտված Հայաստանի՝ վայրի հացաբույսերի և հացամշակման հայրենիքը լինելու փաստի հետ),

ե) այգեգործության (որը ենթադրում է այլ ոլորտներ ևս, օրինակ, գինեգործություն):

Ի մի բերելով ասվածը՝ տեսնում ենք, որ ոչ միայն միջագետքյան դիցարանական քնագրերն են վկայում Հայկական լեռնաշխարհի՝ քաղաքակրթության բնօրրան լինելու մասին, այլև Ք.ա. III հազարամյակի պատմական իրադարձություններին վերաբերող բազմաթիվ արձանագրությունները...

¹ Մովսեսյան, 2003 (b), էջ 23-46:

1930-ական թվականներին գրված «Հայաստանի պատմություն» աշխատության էջերում Ն. Աղոնցը, քննելով այն ժամանակ հայտնի մի քանի արձանագրությունների տվյալները, գրում էր. «Փաստորեն մենք կատարյալ մթության մեջ ենք Հայաստանի՝ շումերա-արադական դարաշրջանի անվան ու ճակատագրի կապակցությամբ»¹:

Բարեբախտաբար, դրան հաջորդող տասնամյակներում հայտնի դարձան հարյուրից ավելի արձանագրություններ, հերթից հայերի եկվորության տեսությունը, և Հայաստանի Ք.ա. III հազարամյակի պատմությունն այսօր պատկերանում է միանգամայն այլ կերպ: Դա պետականության, քարձր զարգացած մշակույթի և անգամ դեպի օտար երկրներ քաղաքակրթական արժեքների տարածման փառահեղ մի դարաշրջան էր, որը մեզանում դեռևս չի արժանացել պատշաճ գնահատման:

Ներկայացված աշխատանքն այդ բացը հաղթահարելու ուղղությամբ արված մի քայլ է, փորձ՝ ըստ գրավոր աղբյուրների դարաշրջանի պատկերի վերականգնման և գնահատման: Այդ նպատակով աշխատանքին, որպես հավելված, կցում ենք Ք.ա. III հազարամյակի Հայաստանի պատմությունը լուսարանող քառասուն սկզբնաղբյուրներ, որոնց մեծագույն մասը, ինչպես նշել ենք առաջաբանում, հայերեն ներկայացվում է առաջին անգամ:

Ավարտելով աշխատանքը՝ նշենք, որ մեր պատմության փառահեղ այս դարաշրջանի լիակատար վերհանման ու արժեկորման համար առաջիկայում դեռ ունենք քազմաթիվ խնդիրներ: Դրանք են՝ բոլոր արձանագրությունների հայերեն թարգմանությունը բնագրից, դարաշրջանի վերլուծությունը հնագիտության, աստղագիտության, արվեստագիտության և այլ գիտաճյուղերի դիտանկյունից:

¹ Աղոնց, 1972, էջ 27:

№ 1. ԸՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿ

«Շումերական արքայացանկը» տեղեցվել է Ուրի 3-րդ հարյուրության ժամանակաշրջանում (Ք.ա. 2112-2003 թթ.), ընդգրկում է շումերական գահակալների անունները, գահակալման ժամկետները, Աշամալոր գործերն ու այլ տեղեկություններ: Հետագայում նախնական քննակիրը տեսվել ու շարունակվել է մեզ է հասել մի քանի խմբագրումներով (տե՛ս RISA, էջ 340-355; Kramer, 1963, էջ 328-331; ANET, էջ 265-266 և այլն): Արքայացանկի համազամանակի ուսումնասիրությունը կատարել է Թ. Ջակոբսենը (SKL); Մինչ այժմ հայտնի տարբերակներից կազմված համահավաք քննակիրը տես ETCSL, 2.1.1 (ստրուքտուրի և գրականության ժանրամասն հղումներով):

- 1-39) Երբ թագավորությունն իջեցվեց երկնքից, (նախ) Էրիդուում էր թագավորությունը: Էրիդուում Ալուխնը (դարձավ) թագավոր և իշխեց 28 800 տարի: Ալալ-գարը իշխեց 36 000 տարի: Երկու արքաներ իշխեցին 64 800 տարի: Էրիդուն ընկավ, (և) թագավորությունը փոխադրվեց Բադ-տիբիրա: Բադ-տիբիրայում Էնմենցյուանան իշխեց 43 200 տարի: Էնմենգալաննան իշխեց 28 800 տարի: Գոմուզին՝ հովիվը, իշխեց 36 000 տարի: Երեք արքաներ իշխեցին 108 000 տարի: Բադ-տիբիրան ընկավ, (և) թագավորությունը փոխադրվեց Լարաբ: Լարաբում Էնսիփազիաննան իշխեց 28 800 տարի: Մեկ արքան իշխեց 28 800 տարի: Լարաբն ընկավ, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Միալպար: Միալպարում Էնմեդուրաննան դարձավ թագավոր (և) իշխեց 21 000 տարի: Մեկ արքան իշխեց 21 000 տարի: Միալպարն ընկավ, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Շուրուպակ: Շուրուպակում Ուրարտուտան դարձավ թագավոր (և) իշխեց 18 600

տարի: Մեկ արքան իշխեց 18 600 տարի: Հինգ քաղաքներում ութ արքաներ իշխեցին 241 200 տարի:
 40-94) Այնժամ ջրհեղեղը տարածվեց (երկրի վրա): Երբ ջրհեղեղը տարածվեց (երկրի) վրա և բազավորությունը իջեցվեց երկնքից (երկրորդ անգամ), (նախ) Քիշում էր բազավորությունը: Քիշում Գա[...]որը դարձավ բազավոր (և) իշխեց 1200 տարի: Գուլա-Նիդարա-աննապաղը¹ իշխեց 960 տարի²: Փալաքինարիսը բազավորեց 900 տարի: Նանգիշիշձան իշխեց 670 (?) տարի: Բախիման³ իշխեց 420 տարի ..., 3 ամիս և 3 ու կես օր: Բաբունը ... իշխեց 300 տարի⁴: Բ/Փուանունը իշխեց 840 տարի⁵: Բալիբունը իշխեց 960 տարի⁶: Գ/Բալունունը իշխեց 840 տարի⁷: Զուկակիփը իշխեց 900 տարի⁸: Աբարը⁹ իշխեց 600 տարի: Մաշղան՝ որդին Աբարի, իշխեց 840 տարի¹⁰: Առվլունը՝ Մաշղայի որդին, իշխեց 720 տարի: Էբանան՝ հովիվը, նա, ով բարձրացավ (համբարովեց) երկինք, ով միավորեց բոլոր (օտար) երկրները, դարձավ բազավոր (և) իշխեց 1560 տարի¹¹: Բալիխը՝ որդին Էբանայի, իշխեց 400 տարի¹²: Էնննուննան իշխեց 660 տարի¹³: Սելա/եմ-Քիշը՝ որդին Էնննուննայի, իշխեց 900 տարի: 1560 էին Էնննուննայի դինաստիայի տա-

¹ Առաջարկվել է անուն ընթերցել նաև «Կուլաստինա-Ռիդ»:

² Տարբերակ՝ «900 տարի»:

³ Առաջարկվել է անուն ընթերցել նաև «Էն-տարախ-անա»:

⁴ Որոշ տարբերակներում բազակալում է Բաբունի մասին խաղորդումը:

⁵ Տարբերակ՝ «240 տարի»:

⁶ Տարբերակ՝ «900 տարի»:

⁷ Տարբերակ՝ «900 տարի»:

⁸ Տարբերակ՝ «600 տարի»:

⁹ Տարբերակ՝ «900 տարի»:

¹⁰ Որոշ տարբերակներում «Աբարի» փոխարին առկա է «Աբա» անունը:

¹¹ Տարբերակներ՝ «1500 կամ 635 տարի»:

¹² Տարբերակ՝ «410 տարի»:

¹³ Տարբերակ՝ «621 տարի»:

րինները»¹: Բարսալնուննան՝ Էնմեմուննայի որդին, իշխեց 1200 տարի: Չամուզը՝ որդին Բարսալնուննայի, իշխեց 140 տարի: Թիզբարը՝ Չամուզի որդին, իշխեց 305 տարի²: Իլբուն իշխեց 900 տարի: Իլբասադունն իշխեց 1200 տարի: Էնմեբարագեսին³, որ ջախջախեց Էլամ երկրի գինվորներին, դարձավ թագավոր (և) իշխեց 900 տարի: Ազգան՝ Էնմեբարագեսի որդին, իշխեց 625 տարի: 1525 էին Էնմեբարագեսի դինաստիայի տարիները⁴: (Ընդամենը) քսաներեք արքաներ իշխեցին 24 510 տարի, երեք ամիս, երեք ու կես օր: Քիչը պարտվեց, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Էաննա՝:

95-133) Էաննայում Մեսրինգաշերը⁵, որդին (արևի աստված) Ուրուի, դարձավ քուրմ և արքա, (և) իշխեց 324 տարի⁶: Մեսրինգաշերը մտավ ծով (և) քարձրացավ լեռները: Էնմեբբարը՝ որդին Մեսրինգաշերի, Ուրուի արքան, որը կառուցեց Ուրուկը՝ դարձավ արքա (և) իշխեց 420 տարի⁷: 745 էին Մեսրինգաշերի դինաստիայի տարիները⁸: Լուգալբանդան՝ հովիվը, իշխեց 1200 տարի, Գեմուզին՝ ձկնորսը, ո-

¹ Որոշ տարբերակներ չունեն այս մախադասությունը:

² Տարբերակ՝ «1620+?» տարի:

³ Առաջարկվել է անունը ընթերցել նաև «Էնմեմարագեսի»:

⁴ Որոշ տարբերակներ չունեն այս մախադասությունը:

⁵ Ուրուի գլխավոր տաճարի անունն է, որով երբեմն (այս դեպքում ևս) կոչվում է ամբողջ քաղաքը:

⁶ Առաջարկվել է անունը ընթերցել նաև «Մեսրիագաշեր»:

⁷ Տարբերակ՝ «325 տարի»:

⁸ Ա. Լ. Օզգլենիայնն այս հատվածը թարգմանում է՝ «և գնաց (կրկին) դեպի (Արևածագի) Լեռները» (ANET, էջ 266):

⁹ Տարբերակ՝ «ուն օրոք կառուցվեց Ուրուկը»:

¹⁰ Տարբերակ՝ «900 + ? տարի»:

¹¹ Որոշ տարբերակներ չունեն այս մախադասությունը: Մի տարբերակում ավելա է «... նա իշխեց 5 + ? տարի» հավելումը:

րի քաղաքն էր Հայան (Մուրուրը)¹, քազավորեց 100 տարի²: Նա միայնակ հաղթեց Էնմեքարագեսին³: Գիլգամեշը, որի հայրը լիլս⁴ էր, քուրնը կուլ-լարայի, իշխեց 126 տարի: Ուրնունգալը՝ որդին Գիլգամեշի, իշխեց 30 տարի: Ուդուքալաման՝ Ուրնունգալի որդին⁵, իշխեց 15 տարի: Լարաշերը իշխեց 9 տարի: Էնմունդարաննան իշխեց 8 տարի: Մեշխեմ՝ դարբինը, իշխեց 36 տարի: Մելա/հման-նան իշխեց 6 տարի⁶: Լուգալքիդուրը⁷ իշխեց 36 տարի⁸: (Ընդամենը) տասներկու արքաներ իշխեցին 2310 տարի⁹: Ուրուկը պարտվեց, (և) քազավորությունը փոխադրվեց Ուր:

134-147) Ուրում Մեսաննեփադդան դարձավ քազավոր (և) իշխեց 80 տարի: Մեցիագնա/ուննան՝ որդին Մեսաննեփադդայի, դարձավ քազավոր (և) իշխեց 36 տարի¹⁰: Էլուլուն իշխեց 25 տարի: Բալուլուն իշխեց 36 տարի: (Ընդամենը) չորս արքաներ իշխեցին 177 տարի: Ուրը պարտվեց և քազավորությունը փոխադրվեց Ավան:

148-159) Ավանում ... դարձավ քազավոր (և) իշխեց ... տարի: ... իշխեց ... տարի: ... իշխեց 36 տարի: (Ընդամենը) երեք արքաներ իշխեցին 356 տարի: Ավանը

¹ Բնագրում՝ ԿԱ.Ա.^{Ք1}: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են տեղանվան հնչյունափոխ քերթերգման Subari, ԿԻ, Kua(ru/) տարբերակները: Այդ անննի քննարկումը և ԿԱ.Ա.-Subar նույնության համագամանալի իմնավորումը տես Gelb, 1944, էջ 94-98:

² Տարբերակ՝ «110 տարի»:

³ Որոշ տարբերակներ չունեն այս մաթատյասությունը:

⁴ Առաջարկվել են այս քառի «յև», «քառիառական», «փնելագար» և այլ քարգմանություններ, սակայն բոլորն էլ՝ հարցականի նշանով:

⁵ Տարբերակ՝ «Ուր-լուգալի որդին»:

⁶ Տարբերակ՝ «900 տարի»:

⁷ Առաջարկվել է անունն ըմբիցել նաև «Լուգալքիթուն»:

⁸ Տարբերակ՝ «420 տարի»:

⁹ Տարբերակ՝ «3588 տարի»:

¹⁰ Տարբերակ՝ «30 տարի»:

պարտվեց, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Քիշ:

- 160-178) Քիշում Սիսուդան՝ թափբազործը, դարձավ թագավոր (և) իշխեց 201 + ? տարի: Դադասիզը իշխեց 81 տարի: Մամազալը՝ նավավարը, իշխեց 360 տարի¹: Քալբունը՝ որդին Մամազալի, իշխեց 195 տարի²: Թուզեն իշխեց 360 տարի: Մեննոման՝ Թուզեի որդին, իշխեց 180 տարի: Լուգալման իշխեց 360 տարի³: Իրբի-Էան իշխեց 290 տարի: (Ընդամենը) ութ արքաներ իշխեցին 3 195 տարի: Քիշը պարտվեց, (և) թագավորությունը փոխադրվեց Խամազի:
- 179-185) Խամազիում Խադ/թամիշը դարձավ թագավոր (և) իշխեց 360 տարի: Մեկ արքան իշխեց 360 տարի: Խամազին պարտվեց, (և) թագավորությունը փոխադրվեց Ուրուկ:
- 186-192) Ուրուկում Էնշականշանան դարձավ թագավոր (և) իշխեց 60 տարի: Լուգալորեն⁴ իշխեց 120 տարի: Արգանդեան իշխեց 7 տարի: (Ընդամենը) երեք արքաներ իշխեցին 187 տարի: Ուրուկը պարտվեց, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Ուր:
- 193-204) Ուրում Նանին դարձավ թագավոր (և) իշխեց 120 + ? տարի⁵: Մեսիսագնանան՝ որդին Նանիի, իշխեց 48 տարի: ...՝ որդին ...-ի, իշխեց 2 տարի: (Ընդամենը) երեք արքաներ իշխեցին 582 տարի⁶: Ուրը պարտվեց, (և) նրա թագավորությունը տեղափոխվեց Աղար:

¹ Տարբերակ՝ «420 տարի»:

² Տարբերակ՝ «132 տարի»:

³ Տարբերակ՝ «420 տարի»:

⁴ Որոշ տարբերակներում «Լուգալորի» փոխարեն անկա է «Լուգալբի-Միշեդուր» (?) անունը:

⁵ Տարբերակ՝ «54 + ? տարի»:

⁶ Տարբերակ՝ «578 տարի»: Այլ տարբերակի համաձայն՝ «երկու արքաներ իշխեցին 120 + ? տարի »:

- 205-210) Աղսքում Լուգալաննեմունքուն դարձավ բազավոր (և) իշխեց 90 տարի: Մեկ արքան իշխեց 90 տարի: Աղսքը պարտվեց, (և) նրա բազավորությունը փոխադրվեց Մարի:
- 211-223) Մարիում Անբուն(?)¹ դարձավ բազավոր (և) իշխեց 30 տարի²: Անբան(?)³ Անբուխ(?) որդին, իշխեց 17 տարի⁴: Բազին՝ կաշեգործը, իշխեց 30 տարի: Ջիզին՝ քաղիքագործը, իշխեց 20 տարի: Լիմնեղ՝ ցուս քուրմը, իշխեց 30 տարի: Շարբումիթերն իշխեց 9 տարի⁵: (Ընդամենը) վեց արքաներ իշխեցին 136 տարի⁶: Մարին պարտվեց⁷, (և) նրա բազավորությունը փոխադրվեց Քիշ:
- 224-231) Քիշում՝ Քուգ-Քաուն՝ պանդուկի տիրուհին, նա, որ ամրացրեց Քիշի հիմքերը, Քուգ-Քաուն՝ պանդուկի տիրուհին, դարձավ բազավոր (և) իշխեց 100 տարի: Մեկ արքան իշխեց 100 տարի: Քիշը պարտվեց⁸, (և) նրա բազավորությունը փոխադրվեց Աքշար:
- 232-243) Աքշարում Ունգին դարձավ բազավոր (և) իշխեց 30 տարի: Ունդաբուլուն իշխեց 6 տարի⁹: Ուրուրը իշխեց 6 տարի: Պուզուր-Նիքախը իշխեց 20 տարի: Իշու-Իլը իշխեց 24 տարի: Հու-Սինը՝ որդին Իշու-Իլի, իշխեց 7 տարի¹⁰: (Ընդամենը) վեց արքաներ

¹ Առաջարկվել է անունը ընթերցել նաև «Կշու»:

² Տարբերակ՝ «90 տարի»:

³ Տարբերակ՝ «7 տարի»:

⁴ Տարբերակ՝ «7 տարի»:

⁵ Տարբերակ՝ «184 տարի»:

⁶ Տարբերակ՝ «ավերվեց»:

⁷ Առաջարկվել է անունը ընթերցել նաև «Նու-Քաուն»:

⁸ Տարբերակ՝ «ավերվեց»:

⁹ Տարբերակ՝ «12 տարի»:

¹⁰ Տարբերակ՝ «24 տարի»:

իշխեցին 99 տարի¹: Աքշաքը պարտվեց, (և) նրա
թագավորությունը փոխադրվեց Քիշ:

244-258) Քիշում Պուգուր-Սուենը՝ Քուգ-Բաուի որդին², դարձավ թագավոր (և) իշխեց 25 տարի: Ուր-Չա-բաբան՝ Պուգուր-Սուենի որդին, իշխեց 400 տարի³: 131 էին տարիները Քուգ-Բաուի դինաստիայի⁴: Սիմուդարբան⁵ իշխեց 30 տարի: Ուսիվաբադը՝ որդին Սիմուդարբայի, իշխեց 7 տարի: Իշտար-Սուբին իշխեց 11 տարի⁶: Իշն-Շանաշն իշխեց 11 տարի: Շու-Իվիշուն իշխեց 15 տարի⁷: Նաննիան՝ ոսկեդիշն⁸, իշխեց 7 տարի: (Ընդամենը) յոթ արքաներ իշխեցին 491 տարի⁹: Քիշը պարտվեց¹⁰, (և) թագավորությունը փոխադրվեց Ուրուկ¹¹:

259-265) Ուրուկում Լուգալզագզեսին դարձավ թագավոր (և) իշխեց 25 տարի¹²: Մեկ արքան իշխեց 25 տարի¹³: Ուրուկը պարտվեց¹⁴, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Աքադ:

¹ Տարբերակ՝ «116 տարի»: Այլ տարբերակի համաձայն՝ «իինգ արքաներ իշխեցին 87 տարի»:

² Մի չափ տարբերակներում Քիշի III և IV դինաստիաները (224-231 և 244-258 տողեր) ներկայացված են որպես մեկ միասնական:

³ Տարբերակներ՝ «6 տարի», «4 + ? տարի»:

⁴ Բազմաթիվ տարբերակներ չունեն այս նախադասությունը:

⁵ Առաջարկվել է անունն ընթերցել նաև «Ջիմուդար», «Ջիզուլակ»:

⁶ Տարբերակ՝ «17 տարի»:

⁷ Բազմաթիվ տարբերակներ չունեն այս նախադասությունը:

⁸ Առաջարկվել է բարձրանել նաև՝ «քարագործը»:

⁹ Տարբերակ՝ «485 տարի»: Մի տարբերակի համաձայն՝ «ոչ արքաներ իշխեցին 586 տարի»:

¹⁰ Տարբերակ՝ «Քիշի թագավորությունը ոչնչացավ»:

¹¹ Արդյ տարբերակներում՝ «թագավորությունը նորոգ անգամ վերադարձավ Ուրուկ»:

¹² Տարբերակ՝ «34 տարի»:

¹³ Տարբերակ՝ «34 տարի»:

¹⁴ Տարբերակ՝ «Ուրուկի թագավորությունը ոչնչացավ»:

266-296) Աբաղեում Սարգոնը որի հայրն այգեայան էր, Ուր-Ջարարայի մատովակը, դարձավ թագավոր՝ Աբաղեի արքա, որը կառուցեց Աբաղե¹, թագավորեց 56 տարի²: Ռիմուշը՝ որդին Սարգոնի, իշխեց 9 տարի³: Մամիշտուշուն՝ Ռիմուշի եղբայրն ավագ, որդին Սարգոնի, կառավարեց 15 տարի⁴: Նարամ-Սուենը՝ որդին Մամիշտուշուի, իշխեց 56 տարի: Շարկալիշարրին՝ Նարամ-Սուենի որդին, իշխեց 25 տարի⁵: 157 էին տարիները Սարգոնի դիմաստիայի⁶: Ռ՞վ էր այնժամ արքան: Ռ՞վ էր արքան: Իզիզին էր արքա, Նամունն էր արքա, Իմին⁸ էր արքա, Էլուլուն՝ արքա: Դրանց չորսն էլ արքա էին, (թայց) իշխեցին միայն 3 տարի: Դուդուն իշխեց 21 տարի: Շուդուրուլը՝ որդին Դուդուի, իշխեց 15 տարի⁹: (Ընդամենը) տասնմեկ արքաներ իշխեցին 181 տարի¹⁰: Ագադեն պարտվեց¹¹, (և) նրա թագավորությունը փոխադրվեց Ուրուկ:

297-307) Ուրուկում Ուրնիզինը դարձավ թագավոր (և) իշխեց 7 տարի¹²: Ուրգիզիրը՝ որդին Ուրնիզինի, իշխեց 6 տարի: Քուդան իշխեց 6 տարի¹³: Պուզուր-Իլին իշ-

¹ Տարբերակ՝ «ուն օրոք կառուցվեց Աբաղեն»:

² Տարբերակներ՝ «55 տարի», «54 տարի»:

³ Տարբերակներ՝ «7 տարի», «15 տարի»:

⁴ Տարբերակ՝ «7 տարի»:

⁵ Տարբերակ՝ «24 տարի»:

⁶ Թագմարիվ տարբերակներ չունեն այս մասնադասությունը:

⁷ Որոշ տարբերակներում՝ «Ռ՞վ էր այնժամ արքան: Ռ՞վ էր իսկապես արքան»:

⁸ Որոշ տարբերակներում Նամունը և Իմին նշված են հակասակ եղբայր-կանուրջամբ:

⁹ Տարբերակ՝ «18 տարի»:

¹⁰ Տարբերակներ՝ «տասներկու արքաներ իշխեցին 197 տարի», «ինն արքաներ իշխեցին 161 տարի», «փնն արքաներ իշխեցին 177 տարի»:

¹¹ Տարբերակ՝ «Աբաղեի թագավորությունը ոչնչացավ»:

¹² Տարբերակներ՝ «3 տարի», «15 տարի», «30 տարի»:

¹³ Տարբերակներ՝ «7 տարի», «15 տարի»:

խեց 5 տարի¹: Ուր-Ուրուն իշխեց 6 տարի²: (Ընդամենը) իինց արքաներ իշխեցին 30 տարի³: Ուրուկը պարտվեց⁴, (և) նրա բազավորությունը անցավ Գուտիում երկրին⁵:

308-334) Գուտիում երկրում⁶ սկզբում ոչ մի արքա իսպախել էր. նրանք իրենց սեփական արքաներն էին և իշխում էին 3 տարով⁷: Ինքիշուշը իշխեց 6 տարի⁸: Սարլագարն⁹ իշխեց 6 տարի: Շուլմեն¹⁰ իշխեց 6 տարի: Սիլուլունեշն¹¹ իշխեց 6 տարի¹²: Ինիմարաքեշը իշխեց 5 տարի¹³: Իգեշաուշը իշխեց 6 տարի¹⁴: Յարլագարը իշխեց 15 տարի¹⁵: Իբաթեն իշխեց 3 տարի: Յարլա[նգար]ը (?) իշխեց 3 տարի: Զուրու-

¹ Տարբերակ՝ «20 տարի»:

² Տարբերակներ՝ «Ուր-Ուրուն՝ որին Ուրգիլիի, իշխեց 25 տարի», «Լուգալ-մեննե» որին Ուրգիլիի, իշխեց 7 տարի»:

³ Տարբերակներ՝ «43 տարի», «26 տարի», «երեք արքաներ իշխեցին 47 տարի»:

⁴ Տարբերակ՝ «Ուրուկի բազավորությունը ոչնչացավ»:

⁵ Տարբերակ՝ «Գուտիումի բանակին»:

⁶ Տարբերակ՝ «Գուտիումի բանակում»:

⁷ Տարբերակ՝ «նրանք չունեին արքա. նրանք իրենք իրենց կառավարում էին 5 տարով»: Առաջարկվել է հատվածի հետևյալ ընթերցումը. «առաջինն իշխեց անանուն արքան: Հետո Ինքան բազավորեց 3 տարի»:

⁸ Տարբերակ՝ «7 տարի»:

⁹ Տարբերակ՝ «Յարլագար»:

¹⁰ Որոշ տարբերակներ «Շուլմեկ» փոխարեն ունեն «Յարլագաշ» անունը:

¹¹ Տարբերակ՝ «Սիլուլուն»: Այս անունը նախկինում ընթերցվում էր «Էլուլունեշ» և նույնացվել է Զարկադյարիից հետո ստեղծված խառնակ ժամանակաշրջանում հիշվող Էլուլու արքայի հետ (SKL, էջ 207. այդ բացատրությունն ընդունել են բազմաթիվ ուսումնասիրողներ):

¹² Տարբերակ՝ «7 տարի»:

¹³ Տարբերակ՝ «6 տարի»:

¹⁴ Մի տարբերակում այս նախադասության փոխարեն ավելա է «Կլուանը (?) իշխեց 3 տարի»:

¹⁵ Տարբերակ՝ «5 տարի»:

մը իշխեց 1 տարի¹: Ափիլ-քինը իշխեց 3 տարի: Լա-՝ա/երաբունը (?) իշխեց 2 տարի: Իրաբունը իշխեց 2 տարի: Իբրանունը իշխեց 1 տարի: Խարունը իշխեց 2 տարի: Պուզուր-Սուենը՝ որդին Խարունի, իշխեց 7 տարի: Յարազանդան իշխեց 7 տարի: Սի՝ու(ն)ն իշխեց 7 տարի: Տիրիկա(ն)ն իշխեց 40 օր: (Ընդամենը) քսանմեկ արքաներ իշխեցին 91 տարի, 40 օր²: Գուտիումի բանակը պարսկեց³, (և) նրանց թագավորությունը անցավ Ուրուկին:

335-340) Ուրուկուն Ուրուխեզալը դարձավ թագավոր (և) իշխեց 7 տարի, 6 ամիս, 15 օր⁴: Մեկ արքան իշխեց 7 տարի, 6 ամիս, 15 օր⁵: Ուրուկը պարսկեց, և նրա թագավորությունն անցավ Ուրին:

341-354) Ուրուն Ուր-Նամնուն դարձավ թագավոր (և) իշխեց 18 տարի: Շուլզին՝ որդին Ուր-Նամնուի, իշխեց 46 տարի⁶: Ամար-Սուենը՝ Շուլզիի որդին, իշխեց 9 տարի⁷: Շու-Սուենը՝ Ամար-Սուենի որդին⁸, իշխեց 9 տարի⁹: Իքքի-Սուենը՝ Շու-Սուենի որդին, իշխեց 24 տարի¹⁰: (Ընդամենը) հինգ արքաներ իշխեցին 117 տարի¹¹: Ուրը պարսկեց¹²: Շումերի գլխավոր

¹ Տարբերակ՝ «3 տարի»:

² Տարբերակ՝ «124 տարի և 40 օր», «25 տարի» (քերեց վրիպակ Է, պետք է լինեց 125, տե՛ս բնագրի ավարտի ամփոփման մեջ):

³ Տարբերակ՝ «Գուտիումն ավերվեց»:

⁴ Տարբերակներ՝ «427 տարի, ... օր», «26 տարի, 2 + 7 ամիս և 15 օր»:

⁵ Տարբերակներ՝ «427 տարի, ... օր», «7 տարի, 6 ամիս և 5 օր»:

⁶ Տարբերակներ՝ «48 տարի», «58 տարի»:

⁷ Տարբերակ՝ «25 տարի»:

⁸ Տարբերակ՝ «Շուլզիի որդին»:

⁹ Տարբերակներ՝ «7 տարի», «20 + 7 տարի», «16 տարի»:

¹⁰ Տարբերակներ՝ «25 տարի», «15 տարի», «23 տարի»:

¹¹ Տարբերակներ՝ «չորս արքաներ իշխեցին 108 տարի», «հինգ արքաներ իշխեցին 120 + 7 տարի», « հինգ արքաներ իշխեցին 123 տարի»:

¹² Տարբերակ՝ «Ուրն ավերվեց»:

հիմքից բայթայվեց: Թագավորությունն անցավ Իսիմին:

- 355-377) Իսիմուն Իշթի-Էրթան դարձավ թագավոր (և) իշխեց 33 տարի¹: Շու-Իվիշուն՝ որդին Իշթի-Էրթայի, իշխեց 10 տարի²: Իդին-Ղազանը՝ որդին Շու-Իվիշուի, իշխեց 21 տարի³: Իշմե-Ղազանը՝ որդին Իդին-Ղազանի, իշխեց 20 տարի⁴: Լիպիթ-Իշտարը՝ Իշմե-Ղազանի որդին⁵, իշխեց 11 տարի: Ուր-Նիմուրթան՝ որդին Իշթուրի, թող մա ունենա լիության տարիներ, քարի կտավարում և քաղցր կյանք, իշխեց 28 տարի: Բուր-Սուեմը՝ որդին Ուր-Նիմուրթայի, իշխեց 21 տարի: Լիպիթ-Էնիլը՝ որդին Բուր-Սուեմի, իշխեց 5 տարի: Էրթա-Իմիթթին իշխեց 8 տարի⁶: ... իշխեց ... տարի, 6 ամիս: Էնիլ-բանին իշխեց 24 տարի: Չամբիան իշխեց 3 տարի: Իթեր-փիշան իշխեց 4 տարի: Ուրդուկուզան իշխեց 4 տարի: Սուեմ-մագիթը իշխեց 11 տարի: Ղամիգ-իվիշուն՝ որդին Սուեմ-մագիթի, իշխեց 23 տարի: (Ընդամենը) տասնչորս արքաներ իշխեցին 203 տարի⁷:
- 378-431) Ընդամենը երեսունինը արքաներ չորս անգամ Քիշուն իշխեցին 14 409 + ? տարի, 3 ամիս և երեք ու կես օր: Ընդամենը քսաներկու արքաներ հինգ անգամ Ուրուկում իշխեցին 2 610 + ? տարի, 6 ամիս և 15 օր: Ընդամենը տասներկու արքաներ երեք անգամ Ուրում իշխեցին 396 տարի: Ընդամենը երեք արքաներ մեկ անգամ Ավանում իշխեցին 356

¹ Տարբերակ՝ «32 տարի»:

² Տարբերակներ՝ «10 տարի», «15 տարի»:

³ Տարբերակ՝ «25 տարի»:

⁴ Տարբերակ՝ «18 տարի»:

⁵ Տարբերակ՝ «Իդին-Ղազանի որդին»:

⁶ Տարբերակ՝ «7 տարի»:

⁷ Տարբերակ՝ «225 տարի և 6 ամիս»:

տարի: Ընդամենը մեկ արքա մեկ անգամ Խամագիում իշխեց 420 տարի:

(16 տող վնասված է):

Ընդամենը տասներկու արքաներ մեկ անգամ Աքադեում իշխեցին 197 (?) տարի: Ընդամենը քսանմեկ արքաներ մեկ անգամ Գուտիումում² իշխեցին 125 տարի և 40 օր³: Ընդամենը տասնմեկ արքաներ⁴ մեկ անգամ Խսինում իշխեցին 159 տարի⁵: Տասնմեկն էին քաղաքները, քաղաքներ, որոնցում երևաց թագավորությունը: Ընդամենը 134-ն էին⁶ արքաները, որոնք միասին իշխեցին 28 876 + ? տարի⁷: 21:

N 2. ԳԻԼԳԱՄԵՆ ՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐԸ⁸

Վիպերգը 1947 թվականին վերծանել և հրատարակել է Ս. Ն. Զրամերը (Kramer, 1947, էջ 3-46): 1960 թ. վիպերգի նոր «Լայդենյան» կոչվող տարբերակն է հրատարակում Վ. Գեյրը, Ա. Չալքենշթայնը,

¹ Տարբերակ՝ «քսաներեք»:

² Տարբերակ՝ «Գուտիումի քանակում»:

³ Տարբերակ՝ «99 տարի»:

⁴ Տարբերակ՝ «16 արքաներ»:

⁵ Տարբերակ՝ «226 տարի»:

⁶ Տարբերակ՝ «139-ն էին»:

⁷ Տարբերակ՝ «3 443 + ? տարի»:

⁸ Վերծանելով վիպերգը՝ Ս. Ն. Զրամերը (գտնելով, որ խոսքը դեպի դրախտ ուղեորության մասին է) այն անվանեց «Գիլգամեշն ու Կյամքի (Ամմահուրյան) նրկիրը»: Վ. Կ. Ալթանաստան, յուրովի մեկնաբանելով վիպերգի առաջին տողը (գտնելով, որ խոսքը մշտադալար մայրիների լուսան տիրակալ Խուվալայի մասին է, որին սպանելով Գիլգամեշը սցիտի անմահամար), այն կոչում է «Քուրսը դեպի Ամմահի լեռ...»: Մեզ հավանական է թվում Ս. Ն. Զրամերի կարծիքը, քանի որ դեպի «Ամմահուրյան (Կյամքի) նրկիր» ուղեցույց են դառնում «դեպի Արատտա ճանապարհի ցույց տվող» մոզական լակները, իսկ Արատտան շումերական երգերում կոչվում է «սուրբ օրհներգերի նրկիր»:



Վիլլամելի
ազատիկաբացման
Ասորյան Օ-ի
պարտիկ
(Ք.ա. VIII դար)

Լ. Մաքրուշը և ուրիշներ հրատարակում են նոր հատվածներ, կատարում ճշգրտումներ: Ի մի բերելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ Վ. Կ. Ախանասևան 1973 թ. կազմեց և հրատարակեց վիպերգի խմբագրված քննադիրը (տե՛ս ՄԱՍԽ, էջ 130-135), որն էլ հայերեն քաղցմանությամբ ներկայացնում ենք ստորև:

ETCSL-ում այս վիպերգը («Գիլգամեշն ու Խուվալան») վերնագրով, NN 1.8.1.5 և 1.8.1.5.1) ներկայացված է նրկտ առանձին տարբերակով:

- 1) Քուրնը դեպի Աննահուրյան երկիր ուղղեց մտքերը,
Քուրն Գիլգամեշն Աննահուրյան երկրին ուղղեց մտքե-
րը:
Ստրուկին իր՝ էնկիդուին¹, խոսք է ասում.
«Էնկիդո՛ւ, գուշակությունն արյուսի վրա կյանք չի խոս-
տանում:
- 5) Կզնան լեռները, փառք կվաստակեն:
Փառավոր անունների մեջ ինձ կփառաբանեն:
Որտեղ չեն փառաբանում անուններ, կփառաբանեն
աստվածներին»:
Էնկիդուն՝ նրա ստրուկը, նրան պատասխանում է.
«Տե՛ր, եթե լեռներ ես գնալու, Ուրուին² տեղեկացրու:
- 10) Ուրու աստծուն, հերոս Ուրուին տեղեկացրու:
Լեռները: Դրանք ստեղծագործությունն են Ուրուի, Ու-
րուին տեղեկացրու:
Լեռները, ուր մայրիներ են հատում, հերոս Ուրուի
ստեղծագործությունն են, Ուրուին տեղեկացրու»:
- 12ա) Ահա Ուրուն երկինքներում պսակել է իրեն լաջվարդն³
խուլյով,
- 12բ) Վեր պահած գլխով անցել երկնքով:
Գիլգամեշը վերցրեց անաբատ, լուսե ուլին,
Չոհաբերման շիկակարմիր ուլին սեղմեց կրծքին,

¹ Աքադական դյուցազնասխեյում էնկիդուն Գիլգամեշի ընկերն է և ոչ ստրուկը:

² Ուրուն շումերների արևի աստվածն է:

³ Լաջվարդ (շագուրիտ) քանկաթեք քարը խիստ հարգել է եղել շումերնե-
րի մոտ և լաջվարդի խոսք, մորուս, վարսեր կրելը աստվածայնության
խորհրդանիշ էր:

- 15) Չեցը շուրթերին մտեցրեց աղոթքի ժամանակ,
 Գոչեց դեպի երկինք՝ Ուրու աստծում.
 «Ուրու, ձգտում եմ լեռներ գնալ, դու ինձ օգնական ե-
 դիր:
 Մայրի՞ների լեռներ¹ եմ ձգտում գնալ, դու ինձ օգնական
 եղիր:»
 Ուրում պատասխանում է նրան երկինքներից.
- 20) «Ձրեղ ու մեծարված ես դու, ինչո՞ւ ես ձգտում դու լեռ-
 ներ գնալ:»
- 20ա) Գիլգամեշը պատասխանում է նրան.
 «Ո՛ւրու, խոսք կասեմ ես քեզ, ականջ դիր խոսքիս:
 Իմ մտքերի մասին կասեմ, ուշք դարձրո՛ւ իմ հույսերին:
 Բաղարում իմ մարդիկ են մեռնում՝ այրվում է սիրտը:
 Մարդիկ են հեռանում՝ սիրան է ճնշվում:
- 25) Ես կախվեցի քաղաքի պարսպի քաղաքի միջով,
 Ես տեսա դիակներ գետում,
 Մի՞՞րե այդպես չեմ գնա և ես: Հիրավի՞՞ այդպես, հիրա-
 վի՞՞ այդպես:
 Ամենաբարձրը չի հասնում երկնքին,
 Ամենաառեղծին չի ծածկում երկիրը,
- 30) Գուշակությունն աղյուսի վրա կյանք չի խոստանում,
 Կզնամ լեռները, փառք կփառտակեմ:
 Փառավոր անունների մեջ ինձ կփառաբանեմ:
 Որտեղ չեն փառաբանում անուններ, կփառաբանեմ
 աստվածներին:»
 Ուրում քարեհաճոթեմ լսեց նրա աղերսը,
- 35) Բարերարի պես շնորհ արեց նրան
 Յոթ հիասքանչ հերոսներ՝ ծնված մի մորից.

¹ Արարական դյուցազնավայրում մայրիների լեռներ են կոչվում Լիբանանի լեռները: Եռանբանյան վիպերգերում մայրիների լեռները որևէ անուն չեն կրում. կարծիքներ են հայտնվել այդ լեռների՝ ինչպես Լիբանանի շրջանում, այնպես էլ Եռանիցից հյուսիս և արևելք գտնված լինելու մասին:

Առաջինը մեծ եղբայրն է՝ նա ունի առյուծի բաբեր ու արծվի ճանկեր,

Երկրորդը՝ օձը բռնակիր, [.....]

Երրորդը՝ վիշապ օձը, օձը կատաղի,

40) Չորրորդը՝ կրակը, լափող [.....]

Հինգերորդը՝ վայրի օձը, [խեղդող],

Վեցերորդը՝ ավերող ալիքը, լեռներ ու ժայռեր փշրող,

Յոթերորդը՝ [խայթող] կարիճը, հետադարձ ճամփան շտեմնող:

Յոթն են նրանք, [յոթն են նրանք ...]

44ա) Նրանք երկնային աստղեր են՝

44բ) Երկրի ճանապարհներն իմացող,

44գ) Երկինքներում աստղերի մեջ [փայ]լող,

44դ) Դեպի Արատտա՝ ճանապարհը ցույց տ[վող],

44ե) [Ճանապարհին] առևտրականներին [ուղեկցող],

44զ) Թշնամի երկրները զննող,

44զ) [Երկրի վրա] աղավառ այն [թռչող],

44ե) Լեռնային երկրները ճանաչող

44ը) Լեռան դիմաց ձողերի վրա նրանց կանգնեցնում:

45) Մայրիներ հատող՝ վերցնում է նրանց ուրախությամբ,

Քուրմ Գիլգամեշը վերցնում է նրանց ուրախությամբ:

Կանչում է անխտիր բոլոր քաղաքացիներին:

Մարդիկ արծազանքեցին երկվորյակների մասն:

50) «Ընտանիք ունեցողն՝ իր ընտանիքի մոտ: Մայր

ունեցողն՝ իր մոր մոտ:

Միայնակ երիտասարդներն՝ իմ մոտ: Նրանցից հիսունը կանգնեն իմ ետևից»:

Ընտանիք ունեցողն՝ իր ընտանիքի մոտ, մայր ունեցողը՝ իր մոր մոտ,

Միայնակ երիտասարդները՝ նրա մոտ, նրանցից հիսունը կանգնեցին նրա ետևից:

Նա ճամփա ընկավ դեպի դարբնի տուն:

⁷ Արատտայի տեղորոշման մասին տե՛ս սույն գրքի երկրորդ գլխում:

⁸ «Մայրիներ հատող» մակիջը վերաբերում է Գիլգամեշին:

- 55) Պղնձե կացին ձուլեցին նրա համար՝ դյուցազնական
 ձեռքին համեմատ:
 Նա դաշտամեջի մութ պարտեզի այգին գնաց:
 Պինդ ծառ՝ խնձորենի, շիմշատ [հատեցին նրա հա-
 մար]:
 Նրա համաքաղաքացիները, նրա ուղեկիցները ձեռ-
 քերն են վերցնում դրանք:
 Եվ ահա առաջին՝ ավագ եղբայրը, նա ունի առյուծի
 քարեր ու արծվի ճանկեր,
- 60) Լեռան մոտ, ձողի վրա իսկապես [քերում են նրան]:
 Առաջին [լե]ռը հաղթահարեցին, [լեռներում մայրիներ]
 չտեսան:
 Յոթ լեռներ հաղթահարեցին:
 [Լեռները], ուր հատում են [մայրիներ], չհասան:
 Քուրմ Գիլգամեշը՝ մայրիներ հատող:
- 65) [Մայրիները:] Գիլգամեշը հատելու է դրանք:
 [Քուրմ] Գիլգամեշը [դադար] կազմակերպեց:

 Որպես [անաստի մշուշ]՝ [քունը] զրկեց նրան:
 [Ճակատագիրն է մարդու]. քունը պատեց նրան:
- 70) [Նրա համաքաղաքացիները], նրա ուղեկիցները,
 70ա) Թմբուկ [են զարկում [լեռան ստորոտում]:
 [Դա] երազ է և երազի մեջ՝ տեսիլք:
 [Հարցրու նրան]՝ ի պատասխան լուրջուն:
 Չեոք տուր նրան՝ նա չի ելնի,
 Կանչիր նրան՝ նա չի պատասխանի]:
- 75) «Ո՛վ դու, որ քնում ես, ո՛վ դու, որ քնում ես:
 Գիլգամեշ: Քուրմ: Որդի՝ Կուլարայի¹: Մինչև ե՞րբ դու
 պիտի քնես:
 Մտալվել են լեռները, սավերներ են գցել,

¹ Կուլարան Եռմեյի մշամավոր քաղաքներից մեկի՝ Ուրուկի պաշտա-
 մունքային մասի անվանումն է: Գիլգամեշը շումերական երգերում
 հիշվում է և՛ «Ուրուկի գերագույն քուրմ», և՛ «Կուլարայի գերագույն
 քուրմ» տիտղոսներով:

Երեկոյան լույս [է գցել] վերջալույսը,
Ուրում իր մայր Նինգալի մոտ՝ գլուխը վեր պահած՝
տուն է գնացել:

- 80) Ո՞վ Գիլգամեշ, մինչև ե՞րբ դու [պիտի] քնես:
Քո համաքաղաքացիները, քո ուղեկիցները,
Լեռան ստորտում քո շուրջն են խմբվել:
Քո մայր-ծնողը չգանգատվի քեզնից քո քաղաքի փո-
ղոցներում»:

Լուսավորվեց միտքը, նա արքնացավ:

- 85) Համաձայն նրա դյուցազմական խոսքի՝ ճանապարհի
հագուստ են [տանում նրան]:
Ճանապարհի բեթև հագուստը վերցնում, կտրծքն իր
[ծածկում է դրանով]:

Վեր կացավ ինչպես ցուլը «Մեծ երկրի»¹:

Դեմքը խոնարհեց երկրին, առամները կրճտացրեց:

«Իմ մայր-ծնող Նինսունի, իմ հոր՝ լուսե Լուգալքանդա-
յի՝² կյանքով եմ երդվում:

- 90) Ի փառս իմ մայր-ծնող Նինսունի՝ կանեն այն, ինչ
հայտնվել է ինձ երազում»:

Եվ երկրորդ անգամ նա ասաց ճշմարտապես.

«Իմ մայր-ծնող Նինսունի, իմ հոր՝ լուսե Լուգալքանդա-
յի կյանքով եմ երդվում:

Քանի դեռ մարդն այն - մարդ է նա, քի աստված - չի
հաղթվել նա,

Կծգտեմ լեռները գնալ, քաղաքից հեռու կծգտեմ գնալ»:

- 95) Հավատարիմ ստրուկը խոսք է արտաբերում՝ կյանքը
[պահապանող խոսք]:

Իր տիրոջը խոսք է ասում.

¹ «Մեծ երկիրը» ստորերկրյա քաղավորության անվանումն է, իսկ «Մեծ երկրի ցուլը», հավանաբար, ստորերկրյա քաղավորության տիրուհու անուսին Գուգալքաննան է:

² Լուգալքանդան և Նինսունց այս երգում Գիլգամեշի հայրն ու մայրն են, իսկ «Շումերական արքայացանկի» համաձայն Լուգալքանդան և Գիլգամեշը Ուրուտի I հարստության երրորդ և հինգերորդ արքաներն են:

- «Տե՛ր, դու չես տեսել այդ մարդուն, սիրտդ չի դողացել:
Ես տեսել եմ այդ մարդուն, դողացել է սիրտս:
Դյուցագուն: Նրա ատամները վիշապի ատամներ են:
- 100) Տեսը նրա առյուծի տեսք է:
Նրա մի կումը՝ մոնչացող հեղեղ:
Ճակատը նրա՝ այրող կրակ: Նրանից փրկում չկա:
Տե՛ր իմ, դու՝ լեռներ, իսկ ես՝ քաղաք:
Քո լուսատուի մայրամուտի մասին քո մայր-ծնողին
կասեմ, մա կսգա:
- 105) Հետո կասեմ քո վախճանի մասին, մա կաղաղակի»:
«Ուրիշ ոչ մի ոք չի մեռնի ինձ համար:
- 106ա) Բեռնված նավը ջրում չի խորտակվի:
Եռապատիկ քելը դանակը չի կտրի:
[Մեկը երկուսին] չի հաղթի:
Եղեգնյա հյուղակում կրակը չի մարի:
- 110) Դու ինձ գորավիզ եղի՛ր, ես քեզ կլինեմ գորավիզ. ի՞նչը
կարող է մեզ կործանել:
Երբ ջրասուզվեց, երբ ջրասուզվեց,
Երբ նավը Մագանի ջրասուզվեց,
Երբ Մալիգունի նավը ջրասուզվեց,
Անեն կենդանի քան բեռնվեց «Եյանք տվող» նավի
մեջ¹:
- 115) Եկ անողողող կանգնենք այստեղ, նրան նայենք այս-
տեղից:
Եքի մենք այստեղ կանգնենք,
Դու տեսնես փայլը, փայլը տեսնես, այնժամ վերադարձի՛ր:
Լսես գոչումը, գոչումը լսես, այնժամ վերադարձի՛ր»:
«Հանում քեզ ես կկանգ[նեմ իսկապես]:
- 120) Թեզ մեռնակ չեմ քո[ղնի ես]:

¹ Օրս տողանոց այս կտորը ջրհեղեղի մասին ավանդության մի եաս-
ված է: Մագան երկիրը, ենթադրվում է, որ գտնվել է Դարսից ծոցի
արևմտյան առափնյա շրջաններում, իսկ Մալիգունի տեղն անհայտ է:

Իսկ Խովափան¹ [բարեմվել էր] իր անտառում մայրիների:

Նայեց նրանց՝ հայացքի մեջ մահ էր:

Շրջեց ճակատը՝ կործանում էր ճակատի մեջ:

Գոչուն հանեց՝ անեծքի գոչուն:

125) Հերոս-դյուցազն: [Մրրիկ է] գոչումը նրա:

Գիլգամեշն ուղևորվում է դեպի նա:

[.....]

«Իմ մայր-ծնող [Նինսունի, իմ հոր՝ լուսե Լուգալբանդայի] կյանքով [եմ եղավում]»:

135) Իսկապես լեռներն են կացարանը քո, քո քույրը լեռներն են:

Հանուն քո սերնդի ես կծամեն քո լեռները,

Քո տիրույթները կմտնեմ:

137ա) Քո ոտքերի՝ փոքր ոտքերի համար,

137բ) ես կպատրաստեմ փոքր շղթաներ:

137գ) Քո ոտքերի՝ մեծ ոտքերի համար,

137դ) ես մեծ շղթաներ կպատրաստեմ:

138(52) Խովափան նրանց վրա արծակեց իր առաջին՝ սարսափի ճառագայթը:

139 (53) Համաքաղաքացիները Գիլգամեշի, Գիլգամեշի ուղեկիցները,

140 (54) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը,

141 (54) Դրեցին այն լեռան ստորոտում:

(55) Խովափան նրանց վրա արծակեց [իր երկրորդ՝] սարսափի ճառագայթը:

(56) Համաքաղաքացիները [Գիլգամեշի], [Գիլգամեշի ուղեկիցները,

(57) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը], [դրեցին այն] լեռան ստորոտում:

¹ Խովափան արադական (բարեխոյան) դյուցազնավեսում կրում է Խումբարա անունը:

- (58) Խուփափան նրանց վրա արծակեց [իւ երրորդ՝]
սարսափի ճառագայրը:
- (59) Համաքաղաքացիները Գիլգամեշի, Գիլգամեշի ու-
ղեկիցները,
- (60) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը,
դրեցին այն լեռան ստորոտում:
- (61) Խուփափան նրանց վրա արծակեց իր չորրորդ՝
սարսափի ճառագայրը:
- (62) Համաքաղաքացիները Գիլգամեշի, Գիլգամեշի ու-
ղեկիցները],
- (63) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը,
դրեցին այն լեռան ստորոտում:
- (64) Խուփափան նրանց վրա արծակեց իր հինգերորդ՝
սարսափի ճառագայրը:
- (65) Համաքաղաքացիները Գիլգամեշի, Գիլգամեշի
[ուղեկից]ները,
- (66) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը,
դրեցին այն լեռան ստորոտում:
- (67) Խուփափան նրանց վրա արծակեց իր վեցերորդ՝
սարսափի ճառագայրը:
- (68) Համաքաղաքացիները Գիլգամեշի, Գիլգամեշի ու-
ղեկիցները,
- (69) Հատեցին ճյուղերը նրա, կապեցին նրա ճյուղերը,
դրեցին այն լեռան ստորոտում:
- 142 (70) Երբ վերջինը՝ յոթերորդն արծակեց նրանց վրա,
Գիլգամեշը Խուփափայի մնջարանը մտավ:
- 143 (71) Խուփափայի տեսքը նման է խաղողի այգում փա-
քարված օձի:
- 144 (72) Գիլգամեշը նրան աստակով, ինչպես կիզիչ կրա-
կով, այրեց:
- 145 (73) Ջրնգում են Խուփափայի ատամները:
(74) Կա[պեցին ոտքերն]՝ ինչպես բռնված ցուլի,
(75) Ինչպես գերված[զինվորի]՝ ոլորեցին արմուկնե-
րը:

- (76) Խուփալան հեկնկում է, կանաչել է:
- 146 (77) «[Գիլգա]մն՝2, [թույլ սուր դիմել քեզ]:
- 147 (78) [Տե՛ր իմ], թո՛ղ խոսք ասեմ:
- 148 (79) [Մայր]-ծնողի ես չեմ տեսնում, հայր-ծնողի ես չեմ ճանաչում:
- 149 (80) Լեռներում եմ ես ծնվել, դու ես իսկական իմ ծնողը»:
- 150 (81) Գիլգամեշին երկինքների ոգով կախարդեց, դուքեց երկրի ոգով, ընդերքների ոգով կախարդեց:
- 151 (82) Բոնեց նրա ձեռքից. «Խոնարհվում եմ քո առաջ»:
- 152 (83) Այնժամ Գիլգամեշի՝ Նինսունի որդու, սիրալ վափկեց,
- 153 (84) Ստրուկ Էնկիդուին խոսք է ասում.
- 154 (85) «Էնկիդո՛ւ, թո՛ղ գերվամ թռչունն իր բույնը վերադառնա,
- 155 (86) Գերվամ զինվորը վերադառնա մայրական գիրկը»:
- 156) Էնկիդուն պատասխանում է Գիլգամեշին.
- 157) «Եթե ամենաբարձրը չի գիտակցում արարքները,
- 157ա) Եթե ամենաահռելիմ չի գիտակցում արարքները,
- 157բ) Եթե ամենախմաստունը չի գիտակցում արարքները,
- 158) Դակատագիրը խժոռում է նրան, ճակատագիրը, որ տարբերություն չի ճանաչում:
- 159) Եթե գերվամ թռչունն իր բույնը վերադառնա,
- 160) Եթե գերվամ զինվորը վերադառնա իր մայրական գիրկը,
- 161 (87) Ապա դու չես վերադառնա քեզ ծնող մոր մոտ:
- (88) Գերեվարվամ [հերոսին] ազատողին, գերեվ[արվամ] Էնին¹, գիլգար² [վերադարձողին],
- (89) Գերեվարվամ քրմին՝ լիուրախ – [ո՞վ է նման քան տեսել] հնուց ի վեր:
- (90) Նա կփակի քո առաջ լեռնային [արահետները].

¹ «Էն» - շումերիերեն՝ «գերազույն քորմ»:

² «Գիլգար» - շումերիերեն՝ «սրբավայր»:

- (91) [Կառ[երի ճամսապարհները] քո»:
- (92) [Խուվափան] խում է խոսքն էնկիդուի,
- 162 (93) Խուվափան էնկիդուին խոսք է ասում.
- 163 (94) «Չար խոսքեր ասացիր իմ մասին, էնկիդու»:
- 164 (95) Վարձկանը, որ ուտելիքի համար իրեն է վաճառում, մրցակցի ետևից է գալիս, իմ մասին չար խոսքեր ասաց»:
- 165 (96) Հենց որ նա այդպես ասաց,
- 166) Նրանք որոշեցին նրա ճակատագիրը:
- (97) Ինքը՝ էնկիդուն, իր կատաղության մեջ
- 167 (98) Կարեց նրա գլուխը, փարաքեց շորով:
- 168 (99) Էնկիլ ասածո, Նիմիլ՝ դիցուհու մոտ եկան նրանք:
- 171) Երբ էնկիլն ու Նիմիլը շրջվեցին նրանց կողմը,
- (100) Երբ էնկիլի առաջ համբուրեցին գետինը,
- (101) Ծածկը բացեցին, հանեցին գլուխը,
- (102) Դրեցին էնկիլի առաջ:
- (103) Էնկիլը տեսավ գլուխը Խուվափայի,
- (104) Ցաստմով բռնկվեց Գիլգամեշի նկատմամբ.
- 172 (105) «Ինչո՞ւ դուք դա կատարեցիք:
- (106) [.....]
- (107) Թո՞ղ նա մտեր ձեր դիմաց:
- (108) Թո՞ղ նա ուտեր ձեր հացից:
- (109) Չեր մարտը ջրից բո՞ղ նա խմեր»:
- (110) Երբ էնկիլն այնտեղից, ուր ապրում է Խուվափան, [հավաք]եց փայլի ճառագայթները:
- (111) Նրա առաջին ճառագայթը տվեց մեծ գետին:
- (112) Նրա երկրորդ ճառագայթը [.....] տվեց:
- (113) Երրորդ ճառագայթը [.....] տվեց:
- (114) Չորրորդ ճառագայթը տվեց գորավոր աշյուծին:
- (115) Հինգերորդ ճառագայթը տվեց «անձրի քարին»:
- (116) Վեցերորդ ճառագայթը տվեց «Մեծ լեռանը»:

¹ Էնկիլը շումերների աստվածախայրն է, երկրի ասածո որդին և լուսնի ասածո հայրը: Նիմիլը նրա կինն է:

- (117) Յոթերորդ ճառագայթը տվեց Նունգալ (?) աստվածուհուն:
- (118) Ճառագայթների տիրակալ [Գիլ]գամեշին՝ վայրի ցուլին, մինչև լեռները հասած, դեպի ծովն իջած,
- (119) Ջորավոր [Էնլիլ] աստծուն՝ փափոք: Էնլիլ¹ աստծուն՝ փափոք:
- (120) [Գիլգամեշ՝ Կուլարայի գերագույն քուրմ.] լավն է գովեստի նրզը քո:

ՈՒՅԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ (Հատված)

Ուրուկի III դինաստիան ներկայացնող Լուգալզիգեսի արքան (Ք.ա. XXIV դ.) Սարգոն Աքադացուց պարտություն կրելուց առաջ կարողացել էր իր իշխանության տակ միավորել շումերական քաղաք-պետությունները: Իր գործերի փառաբանության ընթացքում նա նշում է, որ հասել է մինչև Վերին ծով՝ Վանա լիճ:
Ներկայացվում է այդ մասին հատվածը
(IRSA, էջ 93-95; Дьяконов, 1959, էջ 199; Kramer, 1963, էջ 323-324):

- (I, 36 - II, 2) ... Երբ Էնլիլ աստվածը՝ արքան բոլոր երկրների, Երկրի (*իմա՝ Շումերի*) քաղաքությունը Լուգալզիգեսիին, Երկրի (ողջ ժողովրդի) աչքերն արևելքից մինչև արևմուտք ուղղեց նրան, տապալեց (ողջ ժողովրդին),
- (II, 3 - II, 12) այնժամ Ներքին ծովից Տիգրիսով (ու) Եփրատով մինչև Վերին ծով բացեց նրան ճանա-

¹ Էնլիլն (Հայաստանի) միջագետքյան դիցաբանության մեջ ջրերի և իմաստության աստվածն է:

պարհ¹: Արևելից մինչև արևմուտք էնվիլը
նրան մրցակից չտվեց ...

N 4. ՍԱՐԳՈՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ

Սարգոն Աքադացու՝ Աքադական թագավորության էիմնության մասին
մեզ են հասել մի բանի լեզուններ: Ներկայացնում ենք դրանցից
մեկը՝ մեզ հասած նոր աստիճան և նոր բարելոմյան
գրատուներով (King, 1907, II, էջ 87-96; ANET, էջ 119):

- 1) Սարգոնը՝ հզոր արքան, Աքադի արքան եմ ես:
Մայրն իմ գլխավոր քրմոտի էր, հորս ես չեմ ճանաչել,
Եղբայր(ներ)ն իմ հոր սիրում էին լեռները,
Իմ քաղաքն Ագուտիրանուն է, որ գտնվում է Եփրատի
ափերին:
- 5) Հղիացած մայրն իմ՝ գլխավոր քրմոտին, գաղտնի ծնեց
ինձ:
Նա դրեց ինձ եղեգնյա զամբյուղի մեջ, ճյուղով նա
կնքեց իմ դուռը²,
Նա նետեց գետը, որը չբարձրացավ իմ վրա,
Գետը բարձրացրեց, տարավ ինձ Աքքիի՝ ջրկլորի մոտ:
Աքքին՝ ջրկլորն, ինձ դուրս քաշեց, ինչպես քաշում է իր
կարթածողով,
- 10) Աքքին՝ ջրկլորն, ինձ (վերցրեց) որպես որդու (և) դաս-
տիարակեց,
Աքքին՝ ջրկլորն, ինձ նշանակեց իրեն այգեպան:
Երբ ես այգեպան էի, Իշտարն ինձ պարզեց (իր) սերը,
Եվ (.....) և չորս տարի ես թագավորեցի:
Սևագլուխ ժողովրդին ես իշխեցի, ես կառավարեցի:
- 15) Հսկա լեռ(ներ)ը բրոնզե կացիմներով ես նվաճեցի,
Բարձրագույն լեռնաշղթաները բարձրացա,

¹ Ս. Ն. Ջրամերն աստցարկում է հատվածը բարգմանել այսպես. «Ներ-
քին ծովից Տիգրիսով (ու) Եփրատով մինչև Վերին ծով (բոլոր ժողո-
վուրդները) դեպի նա ուղղեցին իրենց ուղիքը»:

² Այսինքն՝ վակեց կափարիչը:

Յածրագույն լեռները անցա,
Երիցս պաշարեցի [ծո]վի երկրները,
Դիլմունը իմ ձեռքը գրավեցի.

- 20) Դեպի մեծ Դեր ես (բարձրացա), ես [...],
(Ք)ազուլլուն ես ավերեցի և [...],
Որ արքան էլ գա ինձնից հետո [...],
Թո՛ղ իշխի և կատավարի սևազուլս ժողովրդին,
25) Թո՛ղ հսկա լեռները բրոնզե կացիներով նվաճի,
Թո՛ղ բարձրանա բարձր լեռները,
[Յածր լեռները թո՛ղ հաղթահարի],
Թո՛ղ երիցս պաշարի ծովի երկրները,
[Թո՛ղ նրա ձեռքը գրավի Դիլմունը],
30) Թո՛ղ նա բարձրանա դեպի մեծ Դեր և [...]
[...] իմ քաղաքից՝ Ազա[դեից].....]
[...] [...]:

ՈՏ. ՍԱՐԳՈՆ ԱՔԱԳԱՅՈՒ ԱՐՇԱՎԱՆԸ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶԱՆՈՎ ՄԻՆՉԵՎ ՄԱՅՐԻՆԵՐԻ ԱՆՏԱՌ ԵՎ ԱՐՇԱԹԻ ԼԵՈՆԵՐ

Եփրատի ավազանով դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք կատարած արշավանքի մասին Սարգոն Աքադացին թողել է արձանագրություն՝ շամերերեն և արաբերեն տալերիակներով, որը մեզ է հասել Նիպուրից գտնված իմնաբեղոնյան ժամանակաշրջանի երկու պատճեններով (RISA, էջ 108-111; Hirsch, 1963, էջ 3, 37-39; Kramer, 1963, էջ 324; ANET, էջ 268; IRSA, էջ 99; RIM-SGP, էջ 27-29):

1-8) Սարգոնը՝ արքան աշխարհի¹, հաղթեց 34 ճակատամարտ: Նա ավերեց նրանց (քաղաքների) պարիսպները մինչև ծովի ափը:

¹ Ուսումնասիրողներից շատերը նախընտրում են «աշխարհի արքա» տիտղոսը բարձրանել քառասնի՝ «Քիշի արքա» (RISA, էջ 108-111; Hirsch, 1963, էջ 3, 37-39; ANET, էջ 268; IRSA, էջ 99):

- 9-13) Նա Մելուխիայի, Մազանի և Թիլմունի նավերը կապեց Աքադի նավամատույցում:
- 14-19) Սարգոնը՝ արքան, ծնրադրեց Դազան աստծուն Թուրթուլում:
- 20-28) Նա (Դազանը) տվեց նրան Վերին երկիրը՝ Մարին, Յարմուտին և Էրլան՝ մինչև Մայրիների և Արծաթի լեռները:
- 29-37) 5400 տղամարդ ամեն օր ուտում էր Սարգոնի ներկայությամբ¹, արքայի, որին Էնլիլ աստվածը սրցակից չի տվել:
- 38-40) Ով ջնջի այս արձանագրությունը, բո՛ղ Ան աստվածը կործանի նրա անունը, բո՛ղ Էնլիլ աստվածը վերջ տա նրա ժառանգությանը, բո՛ղ Ինաննա դիցուհին կտրի նրա ... սերունդը:

(Մակագրություն 1)

1-2) Արձանագրություն իր հիմքի վրա:

(Մակագրություն 2)

1-2) Արձանագրություն կոթողի վրա, որի հիմքն արձանագրված չէր:

**N 6. ՍԱՐԳՈՆ ԱՔԱԴԱՑՈՒ՝ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶՆՆՈՎ
ԿԱՏԱՐԱԾ ՆՈՒՅՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՄՔ ԱՅԼ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սարգոն Աքադացու նույն արշավանքի մասին պատմող այս արձանագրության հիմքաքեղոնյան ժամանակաշրջանի երկու պատճենները ևս գտնվել են Նիսպատից (Hirsch, 1963, էջ 4, 48-50; RIM-SGP, էջ 29-31):

1-10) [Սարգոնը՝ արքան] աշխարհի/Քիշի, հաղթեց 3[4 ճակատամարտ]: Նա ... ապստամբ քաղաքները...]:

¹ Սա պատմությանը հայտնի առաջին մշտական մասնագիտացված բանակն է, որը վարձատրվում էր արքունիցից, ինչի շնորհիվ էլ Սարգոնը հասավ աննախադեպ հաջողությունների:

(Վնասվածք)

- 0-5) (Մարզոնը) [Մելուխյայի, Մագանի և Թիլմոնի նա]վերը կապեց Աբ[աղի նավամատույցում]:
14-19) Մար[զոնը]՝ արքան, ծն[րադրեց Դագան] աստծուն [Թուրքուլում]:
20-28) Նա (Դագանը) տվեց նրան Վերին երկիրը՝ Մարին, Յարմուտին և Էրլան՝ մինչև Մայրիների և Արծաթի լեռները:
29-37) 5400 տղամարդ ամեն օր ուտում էր Մարզոնի ներկայությամբ, աշխարհի/Քիշի արքայի, որին Էնլիլ աստվածը մրցակից չի տվել:

(Մակագրություն 1)

- 1) Արծանագրություն կորոյի վրա:

(Հավելում 1)

- 1) Ուրուկի ռազմավար:

(Հավելում 2)

- 1-2) Լուգալզագեսի՝ արքա Ուրուկի:

(Հավելում 3)

- 1) Լու-Նաննա՝ արքա Ու[ր]ի:

(Հավելում 4)

- 1) Ուրի ռազմավար:

(Հավելում 5)

- 1) Ումմայի ռազմավար:

(Հավելում 6)

- 1) Մեսգի՝ Լագաշի կա[ռավարիչ]:

(Հավելում 7)

- 1) Մես[ի]՝ կա[ռավարիչ] Ումմ[ա]յի:

(Վնասվածք)

№ 7. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՔԱՆ

Մարզոն Արաղացու՝ Փոքր Ասիայի Պուրուշասանդա քաղաքի տիրակալ Նուր-Դագանի ուղղված արչավանքի մասին պատմող վիպական այս յնագիրը գտնվել է 1913 թ. Թեյլ Ամարնայից (Weidner, 1922, էջ 62-71):

Hirsch, 1963, էջ 6-7; Gadd, 1966, էջ 10-16): Գրված է հին աքադերենով:
Հայերեն թարգմանության համար հիմք է ծառայել է. Ն. Վայդների
վերձամուտյունը (Weidner, 1922, էջ 62-71):

Երեսակողմ.

1. [] Իշտարը՝ ասու-ն Ալրադի
2. [].. պատերազմի , թագավոր քշնամ[իների]
3. [].. պատերազմ է հայտարարում Սարգ[ոնը]
4. [].. նրա տարտափելի զենքը արքունիքն է: Սարգոնը
բացում է իր շուրթերը.
5. դիմելով իր զինակցին ասում է. «Ի՞նչ ուզումիկ, Կամեշ եր-
կիրը ... [//
6. [].. պատերազմելու մտադրություն ունի: Նա հպատա-
կեցնում է այ[ն...]

7. []..... Սարգ[ոն ...]
8. [] Ով՞ տե՛ր, որ[ցանկան]ում ես գնալ
9. [դժվարամատչելի արահետներով] և դժվարին նեղուցնե-
րով է անցնում ճանապարհը դեպի Բուրշախանդա,
10. [ճանապարհը, որով դու ես ուզում գնալ], որից ես քն
զանգատվում եմ, մենք երբէ.
11. [.....] կզրավենք այն, զանից հապշտապ խաղաղու-
յան կրե՛րենք:
12. [.....] Մեր ոտքերը հոգնել են արահետներն անցնե-
լուց:

13. Վաճառականների ղեկավարը դիմում է Նուր-Դագանին
և ասում.
14. [«. Բո՛ւ աստված Ջարբր]ան, որը ցանկացած նեղուցով
անցնում է, որը ուղիներն է ճշտում և հսկում է աշխարհա-
մասերը,
15. [.....] ցանկանում է քեզ ուղարկել, որ դու արևածագից
մինչ մայրամուտ

16. [իշխես]:] Վաճառականների դեկավարը ... նրա ներքինը ... մաղձով էր լցված. «Փոթորիկը
17. երանի քե հափշտակի *timina*-ն Աքաղի կենտրոնից.....»
18. [Սարգ իմիմ՝ աշխարհի քաղափորին, անունով ենք կանչել: Նա պետք է մեզ մոտ ցած իջնի, մենք ուզում ենք իշխանություն ստանալ, քանի որ մենք մարտիկներ չենք:
19. []... քաղափորը կասեմանի: Հացահատիկով կվճարենք քաղափորին: Յուրաքանչյուրին, ով կմտնի քաղափորի սլայքարի մեջ, քաղափորը կվճարի:
20. []..... ոսկուց ռազմիկին: Սարգոնը կտա մի արծաթից:
-
21. [].. , մենք ցանկանում ենք հեռանալ: Ռազմական գործողություններ են կատարվում: Ռազմական իշխանությունը, որը հանգստի վիճակում է, քո աստված Զաբաբան
22. [.....] Վաճառականները խմբվում են, ներխուժում արքունիքի ներսը: Այն բանից հետո, երբ նրանք ներխուժել էին
23. վաճառականներին չեն քողնում ռազմիկներից առաջ: Սարգոնը բացում է իր շուրթերը և խոսում.
24. [«.....,] Բուրշախանդայի ռազմի աստվածը, ինչ որ մա արել է, նրա բշտամանքը ես ուզում եմ բնադրել:
25. [] .. (լինել) Ռ՞րն է նրա լեռը, ինչպե՞ս կարելի է հասնել նրան, մեկուսացման ո՞ր ուղին է մա բռնել:
26. [«.....,] որ դու ուզում ես գնալ այդ դժվարանցանելի նեղուցներով ու փողոցներով.
27. [«Բուրշախանդա տանող ճանախարհը, որով դու ուզում ես գնալ, և որից ես այդքան դժգոհում եմ, 7 կրկնակի ժամ ճանապարհ է»:

28. []...Կանեչ լեռը, որ պարտրված է լաջվարյով, ոսկի է նրա.....

29. [] խնճորենին, թզենին, ծիթենին և մայրին
- յոք անգամ նրա տարիքը
30. [], որտեղ Նրանք «մարտնչում» են կացիններով 7 կրկնակի ժամ մացառների դեմ
31. [] [] ամբողջը, որից 7 կրկնակի ժամ անջրպետ էր դրվել
32. [] [] ճանճերը 7գույգ ժամեր հետ են պահվել,
33. [] [] հեռացվել են ճանճերը,
34. [] [] տրտում են
35. [] տեսել էր []

Երջերես.

1. [] [] []
 2. [] մի [.....] տեր .. [...]
-
3. [էրբ ..] խոսքը վերջացրել էր, Նուր-Գազանը բացում է իր շուրթերը և դիմելով իր զինակցին՝ ասում.
 4. «Մինչև հիմա Սարգոնը չի ուզում զալ մեզ մտո: Նա ուզում է թողնել մի հարուստ մարզ.
 5. որը Կամեչ լեռան վրա է: Մեղքի, կողոպուտի և բռնության հայրը կցանկանար այն զորքի միջոցով ամայացնել
 6. Ձինակիցը պառտախամում է նրան: Նուր-Գազանը ասում է նրան հետևյալը. «Մ՛վքեր են եղել վաղ անցյալի և ավելի ուշ ժամանակների
 7. թագավորները, և նրանցից ո՞ր թագավորն է եկել և տեսել մեր երկրները ...»: Նուր-Գազանը իր խոսքը
 8. չի վերջացնում: Սարգոնը հավաքում է իր քաղաքի բնակիչներին, որպեսզի GAN և NUN-BE դարպասները լայնացնի,

9. [..] ... քանդում է պարիսպները, մի սափոր զինուց փայլում է Սարգոնի վճռականություները:
 10. [Սար]գոնը քաղաքի դարպասների առջև մոտենում է նրա գահին: Սարգոնը բացում է շուրթերը,
 11. խոսում է, իր զինակցին խոսք է ասում. «Շատ լավ, Նուր-Դագան, էնչիլի սիրեցյալ,
 12. [...] ... ես կուզեմայի տեսնել, ինչպես ես դու գահընկեց լինում»:
-
13. [..]... Քաղաքի լաջվարդի շրջապարիսպների վերևում պատվանդանն է, իսկ ներքևում կա մոտ 55 հսկիչ:
 14. Չարաբան նստած է նրա դիմաց, ոսկե գահին: Եվ նստած է արքան աստծո նման:
 15. Այդ ո՞վ է, որ վսեմ է արքայի նման: Նուր-Դագանին նստեցնում են Սարգոնի դիմաց: Սարգոնը բացում է իր շուրթերը
 16. և ասում Նուր-Դագանին. «Լավ, Նուր-Դագան, էնչիլի սիրեցյալ, ինչու՞ դու ասացիր՝
 17. «Մինչև հիմա Սարգոնը չի ուզում՝ զալ մեզ մոտ: Նա ուզում է բողոնել մի հարուստ մարդ, Կաննչ լեռան վրա:
 18. Այնտեղ պետք է գնա «մեղրի» հայրը: Նա նրան բույլ է տալու զորքի միջոցով կողոպտու և բռնություն անել»:
 19. Նուր-Դագանը բացում է իր շուրթերը,
 20. ասում է Սարգոնին. «Շատ լավ, ով տեր, ես քեզ քեզ քո աստծո զինվորներն են առաջնորդում:
 21. [..]..... զետն անցնել: Երկրներից ո՞րը կհամեմատվի Աքադի հետ:
 22. [Ո՞ր] բազավորը կհամեմատվի քեզ հետ: Քո բշմամին գոյություն չունի: Նրանց բշմամությունը կասեցված է:
 23. Քեզ ես ենթարկել քոլորին, նույնիսկ բշմամիներդ քեզանից վախենում են»:
 24. [..]... դաշտերի վարելահողերը, տերը ավելի օգտակար է, քան մա:
-

24. [] Կշրջենք (նրա) բոլոր վայրերով, կարվի, ինչպես
 որ կլինի, բզենի, տանձենի, խաղողի վազ,
 25. պիստակենի... Նախկինում երբեք չենք ցանկացել այս
 վայրերով շրջել:
 26. [.....] «Ես ուզում եմ հանգստացնել քաղաքը, ուզում
 եմ քարեկեցություն ապահովել արշավանքի
 27. [.....] և նստակյաց ժամանակ »: Երբ Սարգոնը կա-
 րեկցության (արժանացած) քաղաքը գնաց, արդեն 3-րդ
 տարին էր
 28. իր գահ բարձրանալու:

 29. Առաջին աղյուսակը «Պատերազմի արքայի»:
 Ամբողջական:

N 8. ՍԱՐԳՈՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (Հատված)

Միջագետքի վաղ պատմության լուսարանմանը մեծապես նպաստում են ոչ շրջանում կազմված ժամանակագրությունները և գտնակությունների քննարկերը (King, 1907, II, էջ 3-14, 36-38, 43-45; Дюнкосов, 1959, էջ 211-215; ANET, էջ 266-267 և այլն): Ստորև ներկայացվում է ժամանակագրության ժանրի կարևոր հուշարձաններից մեկը, որը գիտական գրականության մեջ հայտնի է «Սարգոնյան ժամանակագրություն» կամ «Ժամանակագրություն "K"» անվամբ: Բնագրի միայն Բ.ա. III հազարամյակի իրադարձություններին վերաբերող հատվածը տրվում է ըստ Լ. Ա. Օսլյանինայի վերծանության (ANET 266-267):

Սարգոնը՝ Աքադի արքան, բարձրացավ (իշխանության) Իշտարի դարաշրջանում և չունեի ոչ մրցակից, ոչ ախտյան: Նա բոլոր երկրների վրա տարածեց սարսափ ներշնչող իր վայրը: Նա կտրեց անցավ Ծովն Արևելքի և մա՛ ինքը, նվաճեց երկիրն Արևմուտքի, այդ ամենը եղավ նրա իշխանության 11-րդ տարում: Նա հիմնեց այնտեղ կենտրոնական կառավարություն: Նա կանգնեցրեց իր կործան Արևմուտ-

քում: Նրանց (այսինքն՝ Արեւկյան և Արեւմտյան ծովերի միջև եղած երկրների) ավարը նա փոխադրեց լաստամավերով: Նա ստիպեց իր պաշտոնյաներին բնակվել (իր աղբուհիքի շուրջը, այդպիսով ընդգրկելով մի տարածություն)՝ հինգ կրկնամղոն, և բռնությամբ տիրեց բոլոր երկրներին, առանց բացառության:

Նա արշավեց ընդդեմ Քազալա երկրի և վերածեց Քազալյան ավերակ-բլուրների ու ժայռակույտերի: Նա (անգամ) ավերեց (այնտեղ ամեն հնարավոր) տեղ թոչնի բառելու համար:

Այնուհետև, նրա ծեր տարիքում բոլոր երկրներն ապստամբեցին նրա դեմ, և նրանք պաշարեցին նրան Արահուն: (Բայց) Սարգոնը պատրաստեց ընտրյալ բանակ և ոչնչացրեց նրանց՝ հարվածելով նրանց և ճգնեց նրանց մեծաթիվ բանակը:

Ավելի ուշ Սուրարտուն (Սուրիորը) քարձրացավ իր բազմություններով, քայց այն խոնարհվեց նրա ուզմական գործությունից: Սարգոնը նստակյաց դարձրեց այս քոչվոր հասարակությունը (?): Նրանց ունեցվածքը նա բերեց Ագադի: Նա խլեց հողը Բաբելոնի և նա կառուցեց դրա վրա (մի այլ) Բաբելոն՝ Ագադի քաղաքի մոտ: Սրբապղծության պատճառով նա (այդպիսով) դատապարտվեց, մեծ տիրակալ Մարդուկը՝ կատաղեց և ոչնչացրեց նրա ժողովրդին սովի միջոցով: Արևելքից Արևմուտք նա հեռացրեց (նրանց) իրենից և պատժեց նրան, որ նա հանգիստ չունենա (իր գերեզմանում):

Նարամ-Սինը՝ որդին Սարգոնի, արշավեց ընդդեմ Ափիշալ քաղաքի և ճեղք բացեց (նրա պատին՝ նվաճելու համար այն): Նա անձամբ գերեց Ռիշ-Ադադին՝ արքային Ափիշալի, և Ափիշալի *sakka*-ին: Նա (նաև) արշավեց Մագան երկրի դեմ և անձամբ գերեց Մաննուդանուին՝ Մագանի արքային:

Շուպին, որդին Ուր-Նամմուի շատ հոգ տարավ էրիզու քաղաքի համար, որը ծովեզրին է, (քայց) նա ուներ չար

¹ Մարդուկը Բաբելոնի գերագույն աստվածն է:

դիտավորություններ և նա սրբապղծորեն տարավ Էսազիա տաճարի և Բաբելոնի ունեցվածքը: Տերը բարկացավ¹⁾ և նրա դիակը նա (*անընթեռնելի*) նրան...

(Այնուհետև ներկայացվում են Ք.ա. II հազարամյակի դեպքերը):

Ն 9. ՍԱՐԳՈՆ ԱՔԱԴԱՅՈՒ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սարգոն Աքադացու տերության աշխարհագրության վերաբերյալ մեզ է հասել նոր ատուրական ժամանակաշրջանի ուշագրավ մի քննադիր, որում արտահայտություն են գտել Յան Ք.ա. II հազարամյակի իրողությունները: Հայագիտությանն այն հայտնի է դարձել Ն. Ալոնցի միջոցով, որն օգտագործել է դեռևս չիրատարակված քննադիր տեղեկությունները Է. Ֆորերի մի հոդվածից: Վերջինս, ելնելով այն հանգամանքից, որ քննադրում հիշատակվում են Ք.ա. II հազարամյակում հայտնի դարձած մի քանի երկրանուններ, եզրակացրել է, որ քննադիրը վերաբերում է ոչ թե Սարգոն Աքադացու, այլ Սարգոն Աշուրացու (Ք.ա. XIX դ.) տերությանը (Ալոնց, 1972, էջ 25-26): Այդ կարծիքը տարածում է գտել հայագիտության մեջ: Սակայն ուսումնասիրությունները ջույգ տվեցին, որ քննադիրն իրոք վերաբերում է Սարգոն Աքադացու տերությանը և այն լրացվել է Ք.ա. II հազարամյակում: Բնագիրը՝ հանգամանալի վերլուծությամբ՝ տես Albright, 1925, էջ 193-245; ատուլել ճշգրտված՝ Weidner, 1952-1953, էջ 1-24 (հատկապես, էջ 4-5, 12-13):

- 1) [... -ից] Բազայի կանուրջը, որ գտնվում է Սեկուխա երկրի ճանապարհի սահմանին,
- 2) Մինչև մայրիների լեռների երկիրը (տարածվում է) Խանա երկիրը՝ ինն արքաներ(ով):
- 3) Մայրիների լեռների երկրից մինչև Անգամզան (տարածվում է) Սուրարուտ երկիրը:
- 4) [.....]: Հարկը, տանելով հարկը Սարգոնին,
- 5) [.....]: Նա տիրում էր ամբողջությամբ:

- 6) [... -ից] Եփրատի ափին մինչև Շուփրո¹ Մարի երկիրն է:
- 7) [... -ից մինչև] Յարուշե Ռապիգու երկիրն է:
- 8) [... -ից] մինչև Մաշքամ-շարրի Աշշուր երկիրն է:
- 9) Տիգրիս և Եփրատ գետերի [միջև ընկած շրջանը / ճանապարհը]:
- 10) [... -խալից] մինչև Լուրդի Առափխա երկիրն է:
- 11) Աերին և Ներքին Չաբ գետերի [միջև ընկած շրջանը / ճանապարհը]:
- 12) Ուրունայից մինչև Ծի(?)նու Լուլլուրի երկիրն է:
- 13) Էբլայից մինչև Բիթ-Նանիպ Արմանի երկիրն է:
- 14) Խիզգարից մինչև Աբու-Ադադ Աքադ երկիրն է:
- 15) Աբու-Ադադից մինչև Խալարա Գուտխում երկիրն է:
- 16) Խալարայից մինչև Չումիրու(?)նի Նիզգու երկիրն է:
- 17) Շուրբուից մինչև Իբրաթ Դեր երկիրն է:
- 18) Իբրաթից մինչև Իշ(?)փաթում Լագաշ երկիրն է:
- 19) Կու[լլ]արիից մինչև Շուլը Կութ(?)ումբա ժողովուրդն է:
- 20) PA-ից մինչև Մանգիծու ERIM երկիրն է:
- 21) Քիսիբից մինչև Սիպպար Կադի (Աքադ) երկիրն է:
- 22) Գուտիական Տիրզանից մինչև Ու/զար-իլուլու Էդանա-րուս/զ երկիրն է:
- 23) Ու/զար-իլուլուից մինչև Բիթ-Ս/Շին Մարի երկիրն է:
- 24) Բիթ-Ս/Շինից մինչև Մաշքամ-շարրի Մալգի(ում) երկիրն է:
- 25) Շարրու-քենուից մինչև Դառը ջուրը Էմուրբալ(ում) երկիրն է:
- 26) Բիթ-Խուրբայից մինչև Ռ-ախարութ Ռ-[ախար]ու[թ] երկիրն է:
- 27) Բիթ-GAB-GAL-ից մինչև Էբիյարա [...]-A երկիրն է:
- 28) Թ/Դուրգուից մինչև ID.KUR.RA² Մուքիաբալ երկիրն է:
- 29) Աբու-շուրշինից մինչև Ամուրբու երկրի սահմանային Էզու մարզի վերջին(?) DIM-ը Շումեր երկիրն է:

¹ Ընթերցվել է նաև «Ջուր/պրու»:

² ID.KUR.RA բառացի՝ «լեռնային գետ»:

- 30) 120 *beru* Եփրատի ջրավազանից մինչև Մեկուխայի սահմանը, Ամուրրու երկիրը, որի սահմանը Մարին է¹;
- 31) Մարգոնը՝ աշխարհի (տիեզերքի) արքան, երբ նա երկիրը, որ տարածվում էր մինչև երկինք, ճնշեց²;
- 32) ... (և) իր գլխավոր ճանապարհը չափեց³:
-
- 33) 40 *beru* է ճանապարհը դեպի⁴ Պարասիի:
- 34) 60 *beru* է ճանապարհը դեպի Թուրուիշ:⁵
- 35) 90 *beru* է ճանապարհը դեպի Էլամ:
- 36) 180 *beru* է ճանապարհը դեպի Աքադ:
- 37) 120 *beru* է ճանապարհը դեպի Սուրբարտու:
- 38) 120 *beru* է ճանապարհը դեպի <MAR>TU, Լիբանանից մինչև Թուրուկկի⁶:
- 39) 90 *beru* է ճանապարհը դեպի Լուլլուրի:
- 40) 90 *beru* է ճանապարհը դեպի Անզան(զան):
- 41) Անակու (և) Կապտարա երկրները, որ գտնվում են Վերին ծովի կողմում,
- 42) Թիլմունը (և) Մագանը, որ գտնվում են Նեբրին ծովի կողմում,
- 43) և երկրներն Արևածագից մինչև Արևմուտք,
- 44) Մարգոնը՝ աշխարհի (տիեզերքի) արքան, երեք անգամ նվաճեց իր ձեռքը⁷:

¹ Տողը բարգմանել ենք՝ հետևելով Վ. Ն. Օլբրայթին (Albright, 1925, էջ 244): Է. Վայդները «Ամուրրու երկիրը, որի սահմանը Մարին է» արտահայտության փոխարեն նշում է միայն «Մարի» (Weidner, 1952-1953, էջ 19):

² 30-31-րդ տողերի բարգմանությունը խիստ կասկածելի է, սալքեր գիտնականներ այն մեկնում են յուրովի: Մենք հետևել ենք Է. Վայդներին:

³ «Ճանապարհը դեպի» արտահայտության փոխարեն առաջարկվել է «հետախույզությունը մինչև» բարգմանությունը (Albright, 1925, էջ 244):

⁴ Վ. Ն. Օլբրայթն առաջարկում է տողը բարգմանել հետևյալ կերպ. «120 *beru* է ճանապարհը դեպի Խալժու, Լաբնանուից մինչև Թուրուկկի» (Albright, 1925, էջ 244):

⁵ Վ. Ն. Օլբրայթն առաջարկում է բարգմանել՝ «նվաճեց իր երրորդ (տարածում ?)»:


- 45) Անգան(զան) երկրից մինչև [...]քի, AMAR[...], AMAR.ŠA.TAK,
 46) [...]խարից մինչև [...], Լույ(Վ)տրի, ...
 47) Բազա (?), [...] և Ուդունի (?) երկից, որ Մեղուխասի սահմանում է¹:

10. ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐԵԼՈՆՅԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Աշխարհի քարեկոյան քարտեզն առաջին անգամ հրատարակել է Ֆ. Է. Փաշգերը 1889 թվականին, որն այնուհետև ունեցել է մի քանի հրատարակություններ, սակայն բոլորն էլ՝ որպես թերաթյուններ²։ Քարտեզի առավել ամբողջական և անբերի հրատարակությունը կատարել է Վ. Հորովիցը (Horowitz, 1988, էջ 148-165, լրսամկարները ադ. X)։ Հայագիտության մեջ (որքան մեզ հայասնի է) այն երբևէ ամբողջական չի հրատարակվել, չնայած քարտեզում Հայաստանի՝ ուշարեպոյան «Ուրաշտու» (=Ուրարտու) անվանաձևով հիշատակվելուն։ Այնուհետև, եղել են մի շարք թերի, նաև սխալներով հրատարակումներ³։ Այդ բացը լրացնելու նպատակով ստորև բերում ենք քարտեզի քնազրի ամբողջական քարզմանտրյունը՝ կատարված Վ. Հորովիցի հրատարակությամբ։

Քարտեզի մակագրությունները.

1. Լեռ
2. Քաղաք
3. Ուրարտու (Ուրաշտու)
4. Ասորեստան
5. Դեք



¹ 45-47-րդ տողերը է. Վայդները չի քարզմանում. այն բերում ենք ըստ Վ. Ն. Օլբրայթի։

² Հրատարակումների հղումները՝ թերաթյունների մատնանշմամբ, տե՛ս Horowitz, 1988, էջ 147։

³ Հայագիտության մեջ համեմատելի ամենատարածված սխալը քարտեզի գրություններում (3-յո կետում) Ուրաշտու-Հայաստանի փոխարեն «Արմենիա» երկրանվան նշումն է, ինչն ամտեղյակության հետևանք է. քարեկոյան աղբյուրներում Հայաստանը երբևէ հանդես չի գալիս «Արմենիա» անվամբ։



Աշխարհի քարեղենի թանգարան (Երևանի հին պատմության թանգարանի հիմնադրամասը)

6. ?-ra- [...]
7. նահճուտ
8. Սուգա (Շուշան)
9. Ջրանցք
10. Քիթ Յակին
11. Զադար
12. Խարբան
13. Բարեկոն
14. Օվկիանոս
15. Օվկիանոս
16. Օվկիանոս
17. Օվկիանոս
18. Շրջան. 3 ասպարեզ է արանքում, որտեղ Արևը չի երևում
19. Շրջան. 6 ասպարեզ է արանքում
20. [Շրջա]ն. [(...)]
21. [Շրջան]. [(...)]
22. Շրջան. 8 ասպարեզ է արանքում
- 23-25. (արժանագրություն չկա)

Երեսակողմ.

1.] [.....
2.] .. կործանված քաղաքները [.....] . [.]
3. ... անծայր [ծովը], որ տեսել է Մարդուկը: Կամուրջը մերխում մրա?
4. ...] . կործանված աստվածները, որ նա [հաստատել է] Ճովի մերսում:
5.] .. ներկա են; իժը, ծովի մեծ օձը մերսում: Անգու-թչումը և կար[իճ-մարդը]
6. ... լեռ[նային] այժ, վիթ, զերու (սապատավոր եզ), հովազ, ցուլ-մարդ
7. [.. առ]յուծ, գայլ, կարմիր եղջերու, բորե[նի],
8. [կապ]իկ, եզ-կապիկ, այժեղջյուր, ջայլամ, կատու, քանելիոն (զետնալյուծ),

9. [...] կենդանիներ, որոնց Մարդուկն արարեց անհանգիստ ծովի վերևում,
10. [.. Ու]թմապիշտիմը, Սարգոնը և Նուր-[Դ]ազանը՝ արքան Բուրշախանդայի,
11. թշնհի պես՝ թնն[րով], որի ընդարձակությամբ ոչ ոք չի կարողացել ը[մքոնել]:

Երջերես.

1.] ? [.....
2.] ? հրաշ[քներ(?)]
3.] մեծ [.....
4. [Առաջին(?) շրջանը(?), երբ մեկը մտ]նում է, դու կճամփորդես ... ասպարեզ ...
5. Դեպի երկրորդ շրջանը], ուր կճամփորդես 7 աս[պարեզ
...]
6. [...] մեկը ... ներ[քև ...
7. Դեպի երրորդ շրջանը, ուր կճամփորդես 7 ասպ[արեզ
...]
8. Թևավոր [թռ]չումը չի կարող բարեհաջող ավարտել իր
թռիչքը]
9. [Դեպի չորրորդ շրջանը], ուր կճամփորդես 7 ասպ[արեզ
...]
10. [...] . հաստ են parsikum չափի/անոթի նման, 10/և մատ-
(ները) [...]
11. [Դեպի չորրորդ շրջանը], ուր կճամփորդես 7 ասպ[արեզ
...]
12. [...] է] դրա բարձրացումը/հեղեղումը: 780 արմնկաչափ է
դրա ...
13. [...] . դրա առջևը/անձրևը: 120 արմնկաչափ է [դրա ...
14. [...] . դրա արյունը մա չի տեսնում [...]
15. [...] մենք պետք է մ]ազցենք, ուր կճամփորդես [I...]
16. [...]]ես կճամփորդես 7 աս[պարեզ ...
17. [...] . հեռացումը, որ գտնվում է [...] -ում

18. [...] նրա ... նա կտրեց-անցավ [...]
19. [Դեպի վեցերորդ շրջ]անը, ուր կճամփորդես 7 [ասպարեզ ...
20. [.....] գագաթի [վրա?], ես [...]
21. [Դեպի յոթերո]րդ շրջանը, ուր կճամփորդես [7 ասպարեզ ...
22. որտեղ խոշոր եղջյուրավոր անասունը՝ զինված եղջյուր-ներով [...]
23. նրանք վազում են արագ և հասնում [...]
24. Դեպի [ու]թերորդ շրջանը, ուր կճամփորդես 7 ասպարեզ ...
25. [...] տե[ղը], ուր ... լուսարացներ դրա մուտքի(?) մոտ:
26. [.....]. ամբողջի Չորս Բաժինների . [...]
27. [.....]. , ում մերսը ոչ որ չի կարող ճան[աչել]:
28. [.....]. պատճենված իր հին օրինակից և ստու[գված]
29. [.....] Իծծուրուի որդին, Էա-թել-իլ[ի]ի ժառանգը:

11. ՆԱՐԱՄ-ՍՈՒԵՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԼՈՒԼԼՈՒԹԻ

Լույստի երկիրը հիշատակվում է Նարամ-Սուենի թողած արձանագրություններից մեկում, որը ժամանակին՝ որպես սագմավար՝ Սուգա է տարել Էլամի արքա Հուսրուկ-Նախամտին, իսկ նոր ժամանակներում Սուգայի պեղումներից հայտնաբերել է Ժ. դր Սորգանը (SAKI, էջ 166-167; RISA, էջ 142-143):

Լ. 1-2) Նարամ-Սուենը՝ հզորը, ...

(Մոտ 9 տող պակասում է)

Է. 12-16) ... Սիդուրեցու և Մաթունի Լույլուրեցու ժողովեց,

Ո. 1-3) այդ բանակը նա պարտության մատնեց: Դեպի ...

(Սյունակի մնացած մասը ջարդված է)

Մ. 1-5) ¹Քիշում ²... ³... ⁴... ⁵նվիրեց:

(Մնացած մասը ջարդված է):

Վերջերս առաջարկվել է «Մաթունի Լույլուրեցու» փոխարեն ընթերցել «լույլուրեցի լեռնակառններ», կատարվել են այլ վերանայումներ (RIM-SGP, էջ 143-144):

Ըստ այդ առաջարկի՝ արձանագրությունն ունի հետևյալ տեսքը.

1. 1-2) Նարամ-Սուենը՝ հզորը, ...

(*Վնասվածք*)

1. 1-3) ... Սիդու[ր-?] (և) լուլլուքեցի լեռնականներին ժողովեց

...

II. 1-3) ... պատ[երազմ]: Համար/Դեպի ...

(*Վնասվածք*)

II. 17 լեռ[նականները ...]

(*Վնասվածք*)

III. 11 [զերեզմանաբաններ դիզ]եց [նրանց] վրա:

III. 2-3) ... (և) նվիրեց [... ամոժոմն] ...

(*Վնասվածք*)

12. ԽԵԹԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԸ ՆԱՐԱՄ-ՍՈՒԵՆԻ ՄԱՍԻՆ (Հատված)

Նարամ-Սուենի մասին խեթական լեգենդը հայտնի է մի քանի քննազերեզմ և տարբեր ուսումնասիրողների կողմից հրատարակվելով՝ ստացել է մեծ «Բուրայի արքայի լեգենդը», «Նարամ-Սուենի՝ Մաբզոնի որդու լեգենդը», «Շու-իլիի լեգենդը» (քամի որ այն պատմվում է Շու-իլիի ամուսնից) անվանումները (Gurney, 1955, էջ 93-94):

Մի քանի քննազերից վերականգնված 175 ստղանոց զբաղոր այս հուշարձանի քննական հրատարակությունը տես՝ Gurney, 1955, էջ 93-113, որից էլ կատարել ենք քաղցմանությունը:

37) Յոր արքաներ՝ եղբայրներ, փառախել և ազնվական,

38) Նրանց գորքը՝ հաշվում էր 360 հազար:

39) Նրանց հայրը Անուբանինին էր՝ արքան, նրանց մայրը՝
քազուհին, Մելիլի էր նրա անունը:

40) Նրանց ավագ եղբայրը՝ նրանց առաջնորդը, նրա անունն
էր Մեմանդախ:

41) Նրանց երկրորդ եղբայրը, նրա անունն էր Սիդուդու:

¹ Բնագրում «ջոկատները», որը բոլոր տեղերում փոխել ենք «զորք»-ով:

- 42) Նրանց երրորդ եղբայրը, նրա անունն էր Կուկուպիշ (?):
- 43) Նրանց չորրորդ եղբայրը, նրա անունն էր Բալդախդախ:
- 44) Նրանց հինգերորդ եղբայրը, նրա անունն էր
Թարթադադա (?):
- 45) Նրանց վեցերորդ եղբայրը, նրա անունն էր
Աբուդամադիխ:
- 46) Նրանց յոթերորդ եղբայրը, նրա անունն էր Խարշակիդո
(?):
- 47) Նրանք նվաճեցին փայլող լեռները,
- 48) Պաշտոնյան արգելակեց նրանց, բայց նրանք ջարդեցին
նրանց ազդերը:
- 49) Իրենց ներխուժման սկզբ(ում) նրանք մոտեցան
Բուրուշխանդարին:
- 50) Բուրուշխանդարի ամբողջ շրջանը քաղանվեց,
- 51) Փուխ(ու)լու քաղաքը քաղանվեց,
- 52) Փուրանշու քաղաքը քաղանվեց,
- 53)
- 54) Ուման-մանդան, [նրանց] ճամբարը էն[իլ]ի
քնակավայրն (էր) (կամ «Շուրաթ-էնվիլն էր»),
- 55) և նրանք բոլորը հավաքվեցին Սուբարտուի կենտրոնում,
- 56) Նրանք ամայացրեցին «Շուվերը»¹ և ներխուժեցին
Գուտիում:
- 57) Նրանք ամայացրեցին Գուտիումը և ներխուժեցին Էլամ
երկիր:
- 58) Նրանք ամայացրեցին Էլամ երկիրը և ներ[խուժեցին]
«մերս»²:
- 59) Նրանք կոտորեցին (մարդկանց) ճանապարհների
խաչմերուկների, նրանք նետեցին նրանց [.....]
- 60) Դիլմունը, Մազանը, Մելուխիսան և բոլոր երկրները ծովի
մեջտեղում, նրանք ոչնչացրեցին (?):
- 61) Տասնյոթ արքաներ՝ 90 հազար զորքով,
- 62) դուրս եկան նրանց օգնության:

¹ Այսինքն՝ Վամա և ուրմիո լճերի շրջանը:

² Թերևս՝ Միջագետքի նեղքին շրջաններ:

- 63) Ես կանչեցի պաշտոնյային և հանձնարարեցի նրան.
- 64) «[Վերցրու] նիզակը: ... [.....]
- 65) կպցրու (դրանց) *ludu(?)*-ին, [ծակիր (դրանց)] նիզակով:
- 66) [Երև արյուն հոսի,] նրանք մարդիկ են մեր նման:
- 67) [Երև արյուն չհոսի,] նրանք չար ոգիներ են,
 ուրվականներ,
- 68) [ուրվակ]աններ և շարագործներ, էնլիլի արարածներ»:
- 69) Պաշտոնյան հետ բերեց նրան (հաղորդումը).
- 70) «Ես կպցրեցի դրանք *ludu(?)*-ին,
- 71) Ես ծակեցի դրանց նիզակով, և արյուն եկավ»:
- 72) Ես կանչեցի գուշակներին և հանձնարարեցի նրանց:
- 73) Ես «դիպա» [ոք և կրկին] ույի:
- 74) [Ես ուղևորվեցի] սուրբ տաճարը եղեգնի:
- 75) Ես հարցրեցի մեծ աստվածներին՝
- 76) Իշտարին, Բաբային (?), Չաբարային, Անունիթումին,
- 77) Նարուին(?) (և) Շամաշ հեբուսին:
- 78) Մեծ աստվածների «կողպեքը» չտվեց (բույլտվություն)
 իմ գնալու և իմ ... համար:
- 79) Այսպես ես ասացի ի սրտում, սրանք էին իմ բառերը.
- 80) «Ո՞ր առյուծն է հետևում գուշակին,
- 81) Ո՞ր գալն է խորհրդակցում երազահան-քրմուհու հետ:
- 82) Ես կզնամ ավազակի պես՝ իմ սեփական հակումով,
- 83) Ես կվերցնեմ ինձ համար երկաթյա (?) *ludu* զենքերը»:
- 84) Երբ եկավ առաջին տարին,
- 85) Ես ուղարկեցի 120 հազար զորք, բայց ոչ որ կենդանի
 չվերադարձավ,
- 86) Երբ երկրորդ տարին եկավ, ես ուղարկեցի 90 հազար
 զորք, բայց ոչ որ կենդանի չվերադարձավ,
- 87) Երբ երրորդ տարին եկավ, ես ուղարկեցի 60700 զորք,
 բայց ոչ որ կենդանի չվերադարձավ,
- 88) Ես այլալվեցի, շփոթվեցի, մթազմեցի, վշտաբեկ,
 ուժասպառվեցի:
- 89) Այսպես ես ասացի ի սրտում, սրանք էին իմ բառերը.
- 90) «Ի՞նչ ունեցա ես՝ իմ բազավորությունը ցույց տալու:


- 91) Ես արքա եմ, որ չի բերում ծաղկում իր երկրին:
 92) Ես արքա եմ, որ չի բերում բարգավաճում իր
 ժողովրդին...

13. ԱՆՈՒԲԱՆԻՆԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նաբամ-Սուենի դեմ դաշնակցած տասնյոթ երկրների մասին պատմող «Քուրայի արքայի լեզենդը» վիպասոթի համաձայն այդ դաշինքը ղեկավարել է Լուլլուրիի արքա Անուբանինին՝ իր յոթ որդիների հետ: Անուբանինիյց մեկ է նասել արադեբեն արձանագրությանը ժայտափող կրող՝ պատերազմի Ինանա-Իշտար դիցուհու և իր պատկերով: Արձանագրությունը չափազանց վնասված է (SAKI, էջ 172-173; RISA, էջ 150-151; IRSA, էջ 168):

- 1-8) Անուբանինին՝ հզոր արքան, արքան Լուլլուրումի, Բա-
 քիր լեռան վրա քանդակեց իր պատկերն ու պատկերն
 Ինանանա դիցուհու:
 9-36) Ով ջնջի այս երկու պատկերներն ու արձանագրու-
 յունը, թո՛ղ Անուն և Անբումը, Էնլիլն ու Նինլիլը, Ադադն
 ու Ինանան, Սուենն ու Շամաշը,, (աստվածը),
 տիրա(կալը) ..., մեծ աստվ[ածներ]ը և (աստվածներն)
 անդր[աշխարհի (?)] նզովեն կործանման անեծքով,
 թո՛ղ ոչնչացնեն (նրա) սերունդը: Վերին ծովը և Ներ-
 քին (ծովը)

¹ Խիստ վնասված վերջնամասում կարելի է կարդալ առանձին բառեր՝ «նրա հայրը և», «գեղը», «և գեղը», «ոչ» և այլն, ինչից հնարավոր չէ դուրս բերել կապակցված իմաստ:



Անուրանիսի կոթողը Բշտար դիցուհու և իր պատկերով

14. ԱՐՄԱՆՈՒՄԻ ԵՎ ԷՔԼԱՅԻ ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ
ՆԱՐԱՄ-ՍՈՒՆԻ ՄԵՇ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(Հատված)

Արժանագրությունը հայտնի է հինբարեղոնյան շրջանի մեկ կրկնօրինակով՝ գտնված Ուրից: Առաջին անգամ հրատարակվել է 1928 թվականին (UET, I, էջ 74-79, N 275), ապա ունեցել է բազմաթիվ մասնակի և ամբողջական հրատարակություններ (Hirsch, 1963, էջ 20-21, 73-77; ANET, էջ 268; IRSA, էջ 107-108; Foster, 1982, էջ 27-36; RIM-SGP, էջ 132-135; Մատթոսեան, 1994, էջ 255-256 և այլն):

Թարգմանության համար հիմք ենք ընդունել ամենամտքոջակա՛ն և լավագույն հրատարակությունը (RIM-SGP, էջ 132-135):

- I, 1-10) Քանի որ երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր կործանել Արմանումն ու Էրլան,
I, 11-20) Ներգայն¹ (իր) զենքով ճանապարհի բացեց Նարամ-Սուենի՝ հզորի համար, և տվեց նրան Արմանումն ու Էրլան:
I, 21-29) Եվ նա տվեց նրան Ամանուր՝ Մայրիների լեռը, ու Վերին ծովը:
I, 30 - II, 1) Շնորհիվ Դագանի² զենքերի, որը մեծացնում է նրա թագավորությունը,
II, 2-7) Նարամ-Սուենը՝ հզորը, նվաճեց Արմանումն ու Էրլան:
II, 8-19) Եվ եփրատի ափից մինչև Ուլիշում նա ջախջախեց մարդկանց, ում Դագանը տվել էր նրան ի սկզանն,

¹ Ներգայը միջազնության դիցարանության անդրաշխարհի աստվածն էր (Афганская, 1992, էջ 212):

² Արևմտասեմական աստված (աքադական, ուգարիթյան աղբյուրներում՝ Դագան, փյունիկյանում՝ Դագոն), որը դատվելով անվան ստուգաբանությունից՝ սկզբնապես եղել է երկրագործության կամ ձկնորսության հովանավոր, արադական դիցարանության մեջ գտագործվել է Ադադի և Էնիլիի հետ՝ համարվելով ռազմի, զերագույն աստված (Афганская, 1991, էջ 346):

- II, 20-23) քամի որ նրանք կատարել էին ծառայություն Իլարայի¹ իրենց աստծո համար:
- II, 24-28) Հետագայում նա (ամբողջությամբ) տիրեց Ամանոսին՝ Մայրիհների լեռանը:
- II, 29 – III, 6) Երբ Դագանը որոշեց ճակատագիրը Նարամ-Մուենի՝ հզորի, նրա ձեռքը հանձնեց Ռիդ/շ-Թեշուրին (Ռիդ/շ-Ադադին)՝ Արմանուժի արքային,
- III, 7-10) և (երբ) նա (Նարամ-Մուենը) ամձամբ հաղթեց նրան իր (պալատի) մուտքի կենտրոնում,
- III, 11-16) նա (Նարամ-Մուենը) իր արձանը քանդակեց դիտրիտից և նվիրեց (այն) Սին (*Լուսնի*) աստծուն:
- III, 17-31) Այսպես է ասում Նարամ-Մուենը՝ հզորը, արքան (աշխարհի) չորս կողմերի. «Դագան աստվածը ավեց ինձ Արմանուժն ու Էրլան, և ես հաղթեցի Ռիդ/շ-Թեշուրին (Ռիդ/շ-Ադադին)՝ Արմանուժի արքային:
- III, 32-IV, 3) Այդ ժամանակ ես իմ արձանը քանդակեցի և նվիրեցի (այն) Սին (*Լուսնի*) աստծուն:
- IV, 4-6) Թո՛ղ ոչ ոք չջնջի իմ արձանագրությունը,
- IV, 7-10) թո՛ղ իմ արձանը կանգնի Սին (*Լուսնի*) աստծո ատաք:

Արձանագրության շարունակության մեջ նշվում է նվաճված տարածքում ամրոց կառուցելու և Նարամ-Մուենի պատկերով ու արձանագրությամբ կորոզ կանգնեցնելու մասին:

¹ Որոշ ուսումնասիրողներ «Իլարա» դիցանվան փոխարեն կարող են նա «Աբա», գտնելով, որ ասազին մասնիկը սեմական «աստված» բառն է, որն այս դեպքում ծառայում է իբրև որոշարկիչ (դետերմինատիվ):

15. ՆԱՐԱՄ-ՍՈՒՆՆԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
 ԴԵՊԻ ԹԱԼԽԱԳՈՒՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ԵՎ ԷԼԱՍԻՑ
 ՄԻՆՉԵՎ ՄԱՅՐԻՆՆԵՐԻ ԼԵՌՆԵՐԸ ՆՎԱՃԵԼՈՒ ԵՎ
 ՀԱՐԿԱՏՈՒ ԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձանագրությունը մեզ է հասել իմ քաղցրյան շքանի նրկու կրկնօրինակներով (Hirsch, 1963, էջ 20, 72-73; IRSA, էջ 106-107; RIM-SGP, էջ 129-131):

- 1-16) Նարամ-Սուենը՝ Աքադի արքան, հրամանատարը ...
 Էլամ երկիրն ամբողջությամբ՝ մինչև Բարախի
 (Պարախշում), և [Ս]ուբարտու երկիրը մինչև
 Մայրիների լեռներ:
- 17-32) Այժմ, [ե]րբ մա գնաց [դե]պի Թալխադում – ոչ մի
 քագավոր (նախկինում) չէր ձեռնարկել նման
 արշավանք - Նարամ-Սուենը՝ Աքադի արքան, գնաց
 այնտեղ և Իշտար դիցուհին նրան մրցակից չափեց:
- 33-40) Սուբարտուի կառավարիչները և Վերին (երկրների)
 տիրակալները իրենց հարկերը քերեցին [նրա] ասագ:
- 41-46) *(Վնասված են և անընթեռնելի)*
- 47-52) Նարամ-Սուենը՝ Աքադի արքան, նվիրեց (այս
 կորողը) Նինգուրլագա աստծուն:
- 53-70) Ով որ ջնջի այս արձանագրությունը, Նինգուրլագա
 աստվածը՝ տներն այս կորողի, և Շամաշ աստվածը
 թո՛ղ պատառտան նրա հիմքերը: Թո՛ղ նրանք
 կործանեն նրա սերունդը: Թո՛ղ նրանք [չ]նվիրեն
 նրան [իր] արու (ժառանգին) կամ իր սե[րունդը]:
 Թո՛ղ նա [չ]քայի իր (անճանական) [սա]տնո ասագ:

16. ՆԱՐԱՄ-ՍՈՒԵՆԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ, ՎՆԱՍՎԱԾ ՄԻ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նարամ-Սուենի վնասված մի արձանագրության մեջ (որը մեզ հասել է հիմքաքերոյան շրջանի կրկնօրինակով) ամփոփվում են նրա նվաճումների արդյունքները (RIM-SGP, էջ 162-163): Կարծիք է հայտնվել, որ այս արձանագրությունը պատկանում է ոչ թե Նարամ-Սուենին, այլ Ուրի III իսրատության արքա Շուլգին (Kärki, 1986, էջ 130-131), ինչը համոզիչ չէ:

